



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԱՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՓ
ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

ԾԷ ՏԵՐԻ

Ժ-ԺԱ.

1983



ՄԻՈՒ

ԱՄՍԱԳԻՐ
ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԻ ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՄԷ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1983

Հոկտեմբեր - Նոյեմբեր

Թիւ 10 - 11

1983

October - November


No. 10 - 11

SION

VOL. 57

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE- JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

ՓՈՒՆՆ ԽՄԲԵԳՐԱԿԱՆԻ

Ա. Մ Ի Ի Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Այդ միևնույն ուղիները կատարուել է մեր եկեղեցւոյ պատմութեան ամենանշանաւոր օրերից մէկում, որով և առանձնապէս խորհրդաւոր նշանակութիւն է ստանում: Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ կազմակերպուած Եկեղեցին շատ ծանր օրեր էր անցընում է. դարի սկզբին. առաջին անգամ նորա մէջ մեծ պառակտում էր յառաջացել և խոշոր հատուածներ նորանից բաժանուելու վրայ էին: 80 տարի առաջ Բիւզանդական կայսրները, Քաղկեդոնի ժողովի ուսմունքը պաշտօնական դաւանութիւն դարձնելով իրենց պետութեան սահմաններում՝ շարունակ աշխատել էին նոյն դաւանութիւնն ընդունել տալ նաև այս ինքնուրոյն եկեղեցական կազմակերպութեանը, որ ամուր պահելով նախնեաց հաստատած դաւանանքը՝ խորթացել էր կարծես քրիստոնեայ արևմուտքից և աւելի յօժարութեամբ էր հպատակում հեթանոս արևելեան պետութեանց. բայց չէին յաջողել: Նոցանից վերջինը սակայն, Մօրիկ՝ զօրեղ և իւր նպատակին հասնելու համար միջոցներ մէջ խարութիւն չգնող կայսրը, յոյսը կտրած ամբողջ միատեղ գրաւելուց և օգտուելով արևելքում իւր ժամանակաւորապէս ձեռք բերած մեծ ազդեցութիւնից և իշխանութիւնից, յաջողել էր Ձ. դարի վերջում պառակտում ձգել այս եկեղեցու մէջ և սպառնում էր մեծ մեծ հատուածներ խլել նորանից: Ձլատելու համար ընդհանրական հայրապետի իշխանութիւնն ու հեղինակութիւնը, իւր ձեռն անցած հայկական նահանգներում նա առանձին հակաթոռ կաթողիկոս էր հաստատել տուել Յովհան Աւանեցուն, օրինական Մովսէս Եղուարդեցի հայրապետին թողնելով միայն Պարսից իշխանութեան ներքոյ զտնուող մասերը: Ապա գրաւել էր Վրաց կաթողիկոս Կիւրիոսին, և սա աւելի ու աւելի համարձակ կերպով տարածում էր Քաղկեդոնի ուսմունքը Վրաց եկեղեցւոյ սահմաններում, որ մինչ այդ դաւանական, վարչական, ծիսական և այլ ամէն տեսակէտներով Հայոց եկեղեցու ենթակայ անբաժան կրտսեր քոյրն էր եղել: Աղուանից եկեղեցին ևս, որ նոյն յարաբերութեան մէջ էր Հայոց եկեղեցու հետ, ժամանակաւորապէս, ինչ ինչ արտաքին հանգամանքների պատճառաւ՝ կտրել էր սորանից հողեր հայորդակցութիւնը և դարձեալ դէպի Քաղկեդոնականութեան հակամետութեան նշաններ էր ցոյց տալիս: Այսպիսի պայմաններում, Մօրիկ կայսեր հետ գրեթէ միաժամանակ, վախճանել էր Մովսէս Եղուարդեցին և Հայրապետական Աթոռը մի քանի տարի թափուր էր մնացել, որ քիչ չէր նպաստել եկեղեցական կազմի խախտուելուն, և ահա Պարսից պետութեան մէջ մեծ պատուի և իշխանութեան հասած հայ նախարարներից մէկը՝ Սմբատ Բաղրատունի Վրկանայ մարզպանը, ժողովում է նախնեաց աւանդին հաւատարիմ մնացած եպիսկոպոսներին և ազգի մեծամեծներին ու նոր կաթողիկոս ընտրել տալիս: Երբ նորընտիր հայրապետ Արքահամ Աղբաթանեցին օծուամ ընդունեց և հայրենի հաւատոյ սահմանում

հաւատարիմ մնալու զիր առաւ բոլոր ներկայ եղող այն եպիսկոպոսներից և հոգևորականներից, որոնք առժամանակ ենթարկուել էին յուճական տղքեցութեան, չլատուած, ճղակոտոր եղած և նորից ի մի ձուլուած հօտի առաջնորդները կարիք զգացին իրենց միութեան ուխտը կնքել պատշաճադոյն հանդիսով, և նոցա ինչդրանօք նոր հայրապետը Ս. Միւռոն օրհնեց՝ ոգևորիչ փառաւորութեամբ: Այս հանդիսի նկարագրութեան մէջ՝ ասուած է՝ ա) որ Մովսէս Կաթողիկոսի մահից յետոյ Միւռոն չէր օրհնուել, և Վրթանէս վարդապետի տեղապահութեան ժամանակ հանգուցեալ կաթողիկոսի օրհնած Միւռոնն էր բաժնւել եկեղեցիներին. ուրեմն Միւռոն օրհնելը վերապահուած էր կաթողիկոսին, եպիսկոպոսները չէին օրհնում. բ) որ Ս. Միւռոն օրհնելուց յետոյ հայրապետը միւս օր բաժանեց բոլոր ներկայ եղողներին, և նոքա ուրախ ուրախ ցրուեցին իրենց տեղերը. այստեղից հաւանական է երևում, որ Օձնեցու կանոնն էլ այնպէս պէտք է կարգալ, թէ հայրապետը Ս. Միւռոն օրհնում էր, իսկ եպիսկոպոսներն ու քահանաները տարին մի անգամ նորանից ստանում և դործադրում էին. գ) որ Վրթանէս տեղապահը շրջապատեց արուեստի» համաձայն արդէն նախորօք պատրաստել էր «օծութեան իւղը». մնում էր ամբողջ գիշերը հսկում և պաշտօն կատարել և ամբողջ ցերեկն էլ բուն օրհնութեան խորհուրդի վերայ աքնել, մինչև զլուխ եկաւ ամէն ինչ» ուրեմն ըստ էականին Ս. Միւռոնը, զոնէ է. դարու սկզբին՝ նոյն կազմութիւնն ունէր և նոյն ձևով էր օրհնում ինչ որ այսօր:

Իսկ թէ յաջորդ դարերում արդէն ինչ անփոխարինելի սրբութիւն էր Ս. Միւռոնը հայ քրիստոնէի աչքում՝ դրան վկայ Ժ. դարու մեծ օրհներգակ Գրիգոր Նարեկացին, որ իւր յայտնի աղօթազրքի վերջին խօսքը նուիրել է քորթալոյս իւղոյն Միւռոնի» երկարաշունչ օրհնաբանութեան: Ս. Գրքից վերցրած բազմաթիւ վկայութիւններով և իւրի աշխարհօրէն գործածութեան օգտուէտ կողմերն օրինակ աւնելով՝ որչափ և թթաբզմանօրէն» (Դիոնիսիոս Արիսպագացուց), բայց դարձեալ իրեն յատուկ ճոխ պատկերաւորութեամբ նա մի առ մի նուիրագրում է սրբազան իւղով նկարագործման բազմազան արդիւնքներն անցեալում և քրիստոնէի անձի վերայ: Այս գարմանհարաշ լուսոյ օրհնութեան իւղը, Քրիստոսի անուամբ և Ս. Հոգւոյ շնորօք կնքելով՝ զանազանատեսակ ազգերի բերում իրար է խառնում և դարձնում մի քրիստոսեան ժողովուրդ, նոյն երկնաւոր Հօր հարազատ որդիներ: Ինչպէս որ Հին Ուխտի մէջ որոշուած էր զոհի իւղային մասերը կերակրի համար չզործածել, այլ աստուածութեան նուիրել, իբրև ճենճեր զոհացողական, այսպէս և նոր Ուխտի մէջ օրհնութեան իւղը հանդիսանում է իբրև գորութիւն Տեսառ մատչելի, որ մեր հոգուն ճանապարհ է տալիս դէպի երկնային կայանները վերանալու և Արարչին ձօնուելու: Ինչպէս ճրագի իւղը լոյս է արտադրում և մեր շուրջը լուսաւորում, այնպէս և սրբալոյս Միւռոնը հոգևոր լուսաւորութեան միջնորդ է մեզ համար կայլն:

Յաջորդ ԺԱ. դարում, Բագրատունեաց թագաւորութեան կործանումից յետոյ, երբ Պետրոս Կետաղարձ կաթողիկոսը, որ դժբախտաբար շատ տխուր

1 Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1881, էջեր 67:

գեր է կատարել Անի մայրաքաղաքը Յունաց ձեռքը յանձնելու մէջ և դորա համար առժամանակ պատուի ու պարգևների արժանացել, Կ. Պոլիս կանչուեցաւ, — երկիւզ կրելով իբրևամբ, թէ մի գուցէ շթոյնն իրեն այլևս իւր հօտի մօտ վերադառնալ, 400 իտր Միւսոն երկաթէ ամաններով թաղում է գիշերը՝ Ահուր-Ախուրեան գետի յատակում, Անի քապաքի մօտ, որպէսզի Յոյների ձեռքը չընկնի: Այս գգուշութեան մի պատճառն այն կարող է լինել, որ թէպէտ Գետադարձը իւր քրոջ որդի Խաչիկ Բ.ին իւր փոխանորդ նախապես է կարգել, բայց վախենում էր, որ Յունաց բռնութեան երեսից նա ևս չկարողանայ հայրապետական իշխանութիւն վարել ու Ս. Միւսոն օրհնել, և Հայերը մնան առանց Միւսոնի, բայց պատմիչի ակնարկած միւս պատճառն էլ այն է երևի, որ Յոյները արհամարհում էին Հայերի Միւսոնը, իբրև նոցա դաւանական խտրութիւնը շեշտող մի զխաւոր սրբութիւն, և եթէ ձեռք ձգէին, կ'անարգէին, կամ ոչնչացնելով նեզ գրութեան մէջ կը դնէին հայերին: Այս հաստատում է նոյն Պետրոս կաթողիկոսի կեանքից մի ուրիշ դիպում, որ երբ Տրապիզոն էր գնացել Վասիլ Բ. կայսեր հետ տեսակցելու համար և Աստուածայայտութեան ասոնին օրը հրժման սասացաւ կոյսրից ամենայն շքով Զորհնեաց հանդէսը կատարել՝ Ս. Միւսոնը շրի մէջ կաթեցրած ժամանակ, առուած է՝, լուսոյ ճառագայթների մէջ ցնցուզ փայտակահաց շուրջը, որ տեսնելի էր ամբողջ քաղմութեան: Այս դրոյցը յետոյ աւելի ձոխացրած պատմում են՝, թէ ո՛չ միայն սաստիկ հուր ցոլաց՝ իբրև երկնային ապացոյց Հայոց Միւսոնի սրբութեան, որ Յոյները չընդունելով՝ կամենում էին նոցա Միւսոնով սրբուած չուրը նորից օրհնել:

Նման մի կատարմամբ է անշուշտ, որ երբ ԺԲ. դարում, Ներսէս Շնորհալու օրով միութեան ինդիր ծագեց Յոյների և Հայերի մէջ, Յունաց Մանուէլ կայսեր կողմից Հայոց կաթողիկոսին եղած 9 առաջարկներից մէկն այն էր, որ Հայերը Ս. Միւսոնը ծառերի պղտից եղած ձիթով պատրաստէին: Ինչպէս ժամանակակից մեր Եկեղեցւոյ հայրերը բացատրում են, Հաջատանում ձիթենու իւզ դժուարութեամբ նարկը միայն պատճառ կարող է եղած լինել, որ նախընթաց խոռվայոյ ժամանակներում շատ անգամ՝ հասարակ ձէթ է դործածուել, թէ չէ սովորականը և անպայման ընդունելին նաեւ Հայոց համար եղել է միշտ ձիթենու իւլը: Այսպէս, երբ 1441 թուին Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածին փոխադրուեց՝ այդ մեծ ձեռնարկութեան զխաւոր հեղինակներից մէկը, Թովմա Մեծոփեցի վարդապետը, կիրիկիայում գործադրուած գեղձումների թուում, որոնք պատճառ եղան Աթոռի փոխադրութեան, յիշում է մինչև իսկ, որ «Աստուածագործակ Միւսոնի փոխարէն հասարակ ձիթապտուղի ձէթ էին գործածում այնտեղ՝, այսինքն Հայոց Եկեղեցւոյ կանոնի համեմատ նոյն ձէթը անուշահոտ խոնկելովով և փափուկըով չէին համեմտում: Խնչպէս ուրիշ եկեղեցական կարգեր, որ նախորդ դարերում Աթոռի աստանդական և օտար ազդե-

¹ Մատթէոս Ուսույեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, երես 104
² Արիստակէս Վեդ. Կատիվբայցի. Պատմութիւն. Վեճակի, 1901, երես 18
³ Ուսույեցի, երես 50:
⁴ Թովմա Մեծոփեցու Յիւսակարանը, Թիֆլիս, 1892, երես 56:

ցութեան ներքոյ լինելով՝ մասամբ խանգարուել էին, և Ս. Էլմիածին փոխադրուելուց յետոյ նախնեաց աւանդութեան համեմատ վերահաստատուեցանք, և ապա անփոփոխ շարունակուեցին մինչև մեր օրերը, այդպէս է և Մ. Միւռնոսի օրհնութեան կարգը՝ ձիթնու իւղով և անուշահոտ իւղերի, խունկերի և ծաղկեաց նշւթերի համեմունքով պատրաստելու հնամենի սովորութիւնը: Մեծօգեցին մի շարք տեսիլներ պատմելով, որոնք իբրև զուշակութիւն էին նկատուում Ս. Էլմիածնի հրաշալի նորոգութեան համար, յիշում է նաև մի բարեպաշտ հայի իրեն պատմած երոզը, թէ ինչպէս տեսել է իրեն Ս. Էլմիածնի բեմի վրայ նստած, զոզը վարդով լիքը, և ամէն կողմից հայեր զալիս այդ վարդից վերցնում էին. ապա ինքն էլ իսկոյն մեկնում է, թէ Ս. Միւռնոն է այդ, որ Ս. Էլմիածնից պիտի տարածուէր ամէն տեղ՝ Յիրաւի, երբ Հայոց աղդի այս մեծերախտ վարդապետն իւր ընկերների հետ այնպէս զարմանալի կերպով յաշուոյց Աթոռը Ս. Էլմիածնում հաստատել և նոր հայրապետ ընտրել ու օծել Կիրակոս Վիրապեցուն, նոցա կարևորագոյն հոգեւորից մէկը եղաւ Հոգեգալստեան տօնին մեծահանդէս ժողովով Ս. Միւռնոն օրհնել և Հայաստանի բոլոր կողմերի ուղարկել, կանոն դնելով, որ այնուհետև ձրիաբար բաշխուի ամենուրեք Ս. Միւռնոնը, հակառակ երևի Կիրիլիայում այս նկատմամբ մուտք գործած զեղծումների:

Թէպէտ Աթոռի փոխադրութիւնից Ս. Էլմիածինը շատ դառն և տագնապալից ժամանակներ անցկացրեց՝ արտաքուստ շարունակ ծանր բռնութեան, ճնշումների և կեղեքումների ենթակայ, ներքուստ խեղճ, անշուք և մշտակարօս վիճակի մէջ, ունայն տենչելով միմիանց ձեռքից իշխանութիւն խլող և յաճախ մէկը միւսից աւելի ապիկար աթոռակալների խողալիք, և մօտ երկու դար տևեց այդ թշուառ շրջանը. սակայն աշխարհի ամէն կողմերը սրտած և շատ սեղեր Մայր Աթոռից աւելի ողորմելի դրութեան մէջ գտնուող Հայ ժողովուրդի համար այնքան մխիթարական էր մտածել, որ իւր հոգևոր կեանքի մի կենտրոն ունի մայրենի հողի վերայ՝ նոյն տեղում, ուր Ս. Լուսաւորիչ իւր առաքելական քարոզութեան և հայքապետական իշխանութեան հիմքը հաստատեց. այնքան ամուր էր հաւատը, թէ առկայծեալ պատրոյզը պիտի չշիջանէր և ջախջախեալ զաւազանը պիտի չխորտակուէր, — մինչ Ընդհանրական Հայրապետի բարոյական հեղինակութիւնը գնալով աւելի ու աւելի զօրացաւ և Ս. Էլմիածնի անունը նուիրական դարձաւ ամբողջ հայութեան համար: Մանաւանդ ժէ. և ժԼ. դարերում, Մովսէս Տաթևացի վերանորոգիչ հայրապետից սկսած, երբ Մայր Աթոռն իրօք նորոգուեց, շէնացաւ, կենդանացաւ, պայծառացաւ, դարձաւ լուսոյ և բարոյական վերածնութեան մայր հաւատարիմ հօտի համար. երբ մի շարք հոյակապ անձնաւորութիւններ յաջորդաբար Հայրապետական Աթոռի վերջ բաղմնելով՝ միմեանց զերազանցեւ էին ձգտում իրենց շինարարութեամբ և Աթոռի ներքին բարեկարգութեամբ. երբ նոցա ուղարկած նուիրակաները հասնում էին Սպահան, Հնդկաստան, Ղրիմ, Պոլս, Լեհաստան, Իտալիա և Հոլանդիա, այդ տեղերում պատմական դժբախտ պատահարների բերմունքով

¹ Եպիս Յրատակարան, Երես 66:

հաստատուած և նիւթական բարօրութեան հասած հայ զաղութներին՝ հայրապետական ողջոյն, էլ՝միածնափան սրբութիւնների օրհնութիւնը, Ս. Միւռոն տանում, հայրենի աւերակների և նոցա շուրջ դեռ բռնութեան ներքոյ հեծող ժողովրդեան արեան արցունքի պատմութիւնը, մայրենի հոյ ու ջրի կարօտը տանում, և բերում հետն առատ նիւթական ճոխութիւններ, քաղաքակիրթ աշխարհի նորութիւններ՝ նոր զաղափարներ և ձգտումներ, Ս. էլ՝միածնի ու հայրապետութեան վարկը իւր բարձրութեան զազաթնակէտին հաւաւ, և նոքա դարձան ամէնքի համար զիտակցաբար սիրելի և պաշտելի մեծութիւններ: Ս. Միւռոնն ևս, իբրև նոցանից ընդունած ամենաթանկագին նուէրը, նոցա հետ ունեցած հոգևոր կապի ամենախորհրդաւոր միջնորդը՝ նոյնչափ աւելի յարդի ու նուիրական:

Իբրև նուիրակ և իբրև հայրապետ (1773 - 1780 թ.), մեր եկեղեցւոյ պատմութեան այս նշանաւոր շրջանի մի ամենարդիւնաշատ ներկայացուցիչն է յսւերժ յիշատակաց արժանի Սիմէոն Երևանցին, և շատ քիչերն են եղել նորանից առաջ և նորանից յետոյ, որ Ս. էլ՝միածնի բարոյական մեծութեան, հայրապետական բխնութեան վեհութեան և Ս. Միւռոնի սրբութեան մասին այնպիսի բարձր զաղափար ունենային, ինչպէս նա, որի դեռ վարդապետութեան օրերից շատ ձեռագիր օրինակներով մնացած քարոզների մէջ գտնուած ենք տաղանդաւոր և խիստ ոգևորակ արտայայտութիւնն սյն զիտակցութեան: Այդ քարոզներից մէկում, խօսելով Ս. Գրիգոր Լուսաւորչի մասին՝ նա ասում է. «Այս ամենագովելի անձը այնքան առաջ զնաց իւր անօրինակ ճշնութիւններով և անմարմնական վարքով, և այնպէս սիրելի ու հաճելի եղաւ ամենազթած Աստուծուն, որ մի անգամ ընդհանուրի փրկութեան համար եկած Աստուծոյ Բանին իւր սիրովն ու աղօթքովը կրկին անդամ իլեցրեց այս Այրատեան երկրում, Վաղարշապատի դաշտում, Հայոց բնիկ օթևանում՝ յատկապէս Հայոց ազգի համար . . . Եւ այստեղից կենդանարար ջուր և մշտահոս աղբիւր բղխեց, այսինքն Ս. Հոգւոյ բազմապարզ շնորհը, որ աստուածազործ Միւռոնի միջոցաւ բաշխուած է բոլոր եկեղեցիներին, և հաւատացեալների հոգիները նորանով ոռոգուած՝ պարարտանում ու պտուղ են տալիս»:

— Մի ուրիշ տեղ Ս. Միւռոնի մասին աւելացնում է. «Քահանայապետական բոլոր սրբազործութիւնները Միւռոնով են կատարում ընդունում. ինչպէս եկեղեցի, սեղան, խաչ, քահանայ և ուրիշ եկեղեցական ամէն ինչ Միւռոնով է օծւում և սրբում. այդ պատճառով և եկեղեցական բոլոր խորհուրդների մէջ մկրտութիւնը և Միւռոնի օծումը գերադաս են, իբրև մնացած բոլորի դուռ և ճանապարհ»:

Յատկապէս Միւռոնօրհնութեան հանդիսի առթիւ Ս. էլ՝միածին դիմող ուխտաւոր բազմութիւնն աչքի առաջ ունենալով նա բացականչում է. «Ո՛վ ամենայն եկեղեցիք և եկեղեցականներ, ճանաչեցէ՛ք թագուհիների միակ թագուհի Ս. էլ՝միածինը, որ Հայոց ազգի Աթոռն է և Քրիստոսի յատուկ սիրելին. որի նմանը ուրիշ ազգեր չունին, որին երանի են տալիս և զովում, որին կարօտում են և տեսնել ցանկանում . . . Տեսէ՛ք և ճանաչեցէ՛ք կենդանի ջրոյ միակ աղբիւր և ջրհոր Ս. էլ՝միածինը, որ ահա բաշխում է ձեզ, յոռոգում

հոգևոր, կենդանարար շուրջ՝ Սուրբ Միւռոնը: Այն խորհրդաւոր արեգակն է և էլ միաժինը, որ առատապէս ճառագայթում է դէպի ձեզ աստուածային լոյսը: Սուրբ Միւռոնը, որ ձեր հոգին ու մարմինը պիտի լուսաւորէ: Վայելեցէ՛ք ուրեմն, շնորհակալ եղէ՛ք և ի՛նչէ՛ք, թէ ումնից էք ստանում այդ շնորհը՝ 'Իժմախտաբար նոյն վստահութեամբ և նոյն պարծտնքով խօսել մենք այսօր այլևս չենք կարող: Սիմէոն Երևանցու օրով այնքան մեծ էր իրօք Մայր Աթոռի կատարած կենդանարար և լուսատու դերը հայ ժողովրդեան վերաբերմամբ: Ինքը, բազմերայտ հայրապետը, մանուկ հասակից սնուած և կրթուած լինելով նոյն Աթոռի հովանու ներքոյ, ամբողջ կեանքը նորա շէնութեանն ու պայծառութեանը նուիրած՝ այնպիսի ջերմ հաւատ ունի դէպի նորա երկնատուր կոչումը, և Մահմետական ազգերով շրջապատուած, Ասիական թանձր խաւարի մէջ կարած մի մթնոլորտում այնքան զգալի էր Քրիստոնէի համար նորա հոգևոր գերազանցութիւնը, որ վերև բերուած խօսքերը պէտք է համարուին հեղինակի անկեղծ զգացման և համոզման արտայայտութիւններ: Սակայն դարուկէս ժամանակ է անցել այն օրից և մեզ բերել շատ ծանր փորձեր, մեզ համեստ ու նկուն դարձնող բազմադիմի ծանօթութիւններ: Մեր առջև մի ընդարձակ քաղաքակիրթ քրիստոնեայ աշխարհ կայ՝ կենդանութեան և լուսաւորութեան այնպիսի փառաշուք կենտրոններով, որ եթէ մենք վստահանայինք իսկ նոցա հանդէպ բերել մեր հոգևոր կեանքի կենտրոնը և պարծենալ սորա պատկառելի հնութեամբ, աստուածակիմն հաստատութեամբ և անցեալ փառքով, սառը պատասխան կը ստանայինք անշուշտ. իսկ դ՛ուք, նոր ժամանակի սերունդներդ, որչա՞փ արժանաւոր ժառանգներ էք արդեօք ձեզ աւանդած բարեաց, ինչպէ՞ս էք զնահատում և ի՞նչ միջոցներով ներգործական դարձնում նոցա հոգևոր ոյժը: Ինչքա՞ն պայծառ էք պահում արտաքուստ և կենդանի՝ ներքուստ ձեր հայրենի տունը: Եւ ասիբերան պիտի մնայինք մենք: Եւ թողնելով որ իւրաքանչիւր քրիստոնեայ ժողովուրդ իւր ազգային սրբութիւններին զերազոյն արժանիք վերադրէ և պատշաճաւոր յարգն ընծայէ նոցա, դառնայինք և մեր փառապանծ ժառանգութեան բազդատմամբ մեր անպարտաճանաչ խեղճութիւնը սղայինք. բայց և նոր ողի ու եռանդ ստանայինք, հակառակ մեր ապշորհութեան՝ Մեծ Լուսաւորչի և մեր երջանիկ նախնեաց անդուլ աղօթքի և անսպառ եւրախտեաց շնորհիւ դեռ կանգուն և միշտ հաստատ տեսնելով Մայր Աթոռը, նորոգ օրհնութեամբ Սրբալոյս Միւռոնի միշտ կենդանի և կենդանարար շնորհաբաշխ Ս. Հոգին քրիստոնեայ հայութեան մէջ. ձայնէինք միմեանց, և դարէ ի դար հնչող այս ձայնը արձագանգ տայ հայ սրտերում. Եկէ՛ք, եղբ՛րք, շէն ու վառ պահենք լուսոյ այս սուրբ խորանը, որ այստեղից ծագէ միշտ լոյս մեր Հայաստան աշխարհին:

(Վերջ՝ 2)

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՎՍՏՈՒՄՈՅ ԱՐԴԱՐՈՒՅԻՒՆԸ

Աստուծոյ արուած ստորագիշինքուն մէջ իր սերոյն տեղը ունի արգար բաւը: Ըրթաւոր արդարա՛, շարեզակն արդարութեանն է նման բանաձեւեր գերազոյն սպասոյցներն են այս իրողութեան:

Հոկաւակ այս էմարտութեան օտկայն, Տիրոջ արուած միւս բոլոր ստորագիշինքէն — օէր, գութ, սղորմածութիւն, ամենակարողութիւն — աւելի, Անոր սողաթուիեան կամ աւելի ճիշդը արդարագասութեան մասին է որ կը վերաբերուինք կասկածով ու տարակոյտով: Գիւրուս կ'ընդունինք թէ Տէրը կգոր է ու ամենակարող, քիչ ճը նաւաղ դիրքաւ՝ թէ Ան երկայնամիտ է ու բազումողորմ, բայց երբ կարգը գայ Անոր արդարագասութեան, պահ՛ մը կը վարսինքք ու կը տատամօինք: Ու հարց կօւ տանք մենք մեզի. — Ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել Աստուծոյ արդարութիւնը աշխարհի այլազան մասերուն ու մինչև իսկ մեր աւսորթոյ կեանքին մէջ ու մեր շուրջը պարզուող սղաղակող անարդարութիւններուն հետ, ընտանեկան ու ընկերային նեղ շրջանակներէն մինչև ազգայինին ու համամարդկայինին սանձանները տարածուող: Որքա՛ն ստուար է թիւը սկար ու իրաւագրակի ազգերուն ինչպէս մարդկային խմբուարուներուն, իրենցմէ անհամեմատօրէն կգօր՝ բայց ըիրտ ու ամբարիշտ մարդերէ ու պետութիւններէ գերեվորուն ու ճնշուած:

Սոկայն այս երևոյթը յատուկ չէ միայն մեր օրերուն կամ պարզ ու ազէտ մարդերուն: Հին Ուխտը մեզի կ'ըսէ թէ մարգարէական դասուն մէջ իր ուրոյն դիրքն ու կշիռը ունեցող Երեմիան իսկ չէ կրցած անտարբեր մնալ ու գանգատած է Տիրոջ ի տես Անաթոզի (մեր օրերու Anata, Երուսաղէմէն հրեայն-արեւելք) ամբարշտ բնուիշինքուն գասմ փայլուն յաջողութիւններուն ու բարգաւաճման:

Բայց, երբ մեր շուրջը պարզուող սղաղ ու ցուալի, կամ անարիւն և յանախ ընդզգեցեցեցիլ երեւոյթներու անմիական ազգեցութեան տակ հապկեղ մեր վճիռները կ'արձակենք, բնու չենք խորհիր թէ անոնք թերի են ու մակերեսային, և չեն գիժոնար աւաղջ ու ամուր արամարանութեան լոյսին ու զօրութեան գէժ:

Առնենք, օրինակի համար, անհաւատ ու ամբարտաւան անհատ մը, կեանքի բոլոր բարիքները իր հասողութեան ծիրէն ներս ունեցող: Տոկուն է իր առողջութիւնը, շեցուն՝ իր քօսկը և բարձր՝ ընկերութեան մէջ իր վայելած դիրքն ու վարկը: Երջանիկ է ըստ երեւոյթին: Բայց ոչ ըստ էութեան: Իրին կը պակսի արտանդորրութիւնը, մաքար խղճէ մը մեզի պարգևուած, կ'ապրի սարսափն ու անգոհը վաղուան: Իր բոլոր ունեցածները երաշխիքը չեն պայծառ ապագայի մը: Տէրը պատմած է զինք, իր դէժ գիտելով մարդու ամենէն անհաշտ թշնամին ու ամենէն անկաշտա դատաւորը — իր քիղքը: Ու այս երկուութեան տանջուած, զեղին ու գաման ծիծաղի մը ներքև ի զուր կը ջանայ պարտկել ներքին փրակեցութիւնը:

Ուրիշ մը, արտաքուտ կեցանմարոյր ու անքաղկման, կը պտտանի ար յոճախակիօրէն հանդիպի ձայնարդութիւններու: Փորձութիւններ կը հալածեն ու կը հար, ուսածեն զինք ամէն կողմերէ: Բայց կարծուածին չտի արտուր չէ ան, և կամ կարծուածին չտի բարի: Որքա՛ն շատ է թիւը մարդերու, Փորիսեցեցեցեցեց պարսպապարտութեան պատմուածներու, արոնք ներսիդին սակայն մեղքին ճանիշները գարշանք կը բուրն, ու որքա՛ն՝ մարդերը որոնք, Բարեխոսի մանուկներուն նման, իրենց վիշտերու հնօցին մէջն անգամ իրենց Արարչին հասցէուած փառք ու օրհնէնք օւնին իրենց շրթներուն: Որոնք, սուրբերուն ու առաքեալներուն նման, գիտեն կերպն ու գաղտնիք երջանիկ ըլլալու, և ի հեճուկս բազմապիսի վիշտերէ աքցանուած ըլլալուն, գիտեն բարձրանալ երոնութեան այն վիճակին, որ Տիրոջ հետ ունեցած մեր մօտիկութենէն ու մօտբութենէն միայն կը ծնի:

Աստուծոյ արդարութեան նկատմամբ կասկած յայտնած ատեն բնաւ ժտածած ունինք թէ ինչ պիտի ըլլար մեր վիճակը, եթէ Տէրը դողդէր երկայնամիտ աւ համբերատար ըլլալէ և անմիջապէս պատուհասէր, ինչպէս մեր հակառակորդները, մեզ ևս, մեր գործած ամէն մէկ մեղքին ու յոնցանքին համար: Մեզմէ արժէն արտին մէջ մեղքը չէ հիւսած իր սոստայնը: Մեզի դէմ չարիք նիւթողնորուն համար Ս. Ստեփանոսի — Վէտր, մի համարիր դոցա զայս մեղս — կամ Շնորհալիի — Վե դարձս զսոստ ի չարեացն, զոր ունին վասն իմ. զի ողորմութեան քուփ արժանի եղիցին» — նման աղօթելու և անոնց մեղքերուն թողութիւն հայցելու փոխարէն անոնց վրայ Աստուծոյ պատուհասը փութացած տեսնելու մեքցանկութիւնը և անոնց պատահած փորձութեան մը պարագային մեր զգացած երճուանքը խոտոր չի՞ն համեմատիր միթէ քրիստոնէական բարոյակներն և մեղքեր չե՞ն իրենց կարգին: Միթէ Տիրոջ կամքը մոլորած ու կորուսած ոչխարին դարձն ու փրկութիւնը չէ՞, փոխան անոր վերջնական կորուստին և փճացումին:

Ուրիշ տխուր մը գործած կ'ըլլանք, երբ կը զայրադնինք ու կը արանջանք ի լուր ազնիւ ու անփոստ աննտրի մը, համեմատաբար երիտասարդ տարիքի մէջ, մահուան բոթին ու գոյժին: Մենք, մարդկային չափանիշով, մահը կը նկատենք գերագոյն պատուհասը, որուն երբեքից կարող է հանդիպիլ մարդ արարածը, և ըստ այնմ, իբրև անգրագոյն պատիժ, անով կը դատապարտենք մարդկային ընկերութեան գէմ մեծագոյն մեղանշողները, օճրագործներն ու հայրենիքի դաւադանները: Նոյնը չէ սակայն մահը հոգևոր չափանիշով: Պատուհաս մը չէ ան, ինչպէս չէ նաև վերջակէտը մեր գոյատևած: Անարդար, ուրեմն, Տէրը, երբ Վարդանանքի այս հովիտէն վաղաժամօրէն իր յաւերժական փառքին մասնակից ըլլալու կը կանչէ մէկը կամ միւսը իր Վնասաարարի մառաններէն: Մեր զգացած վիշտին սղգեցութեան տակ ընկնուիլ ու Ա. Հոգւոյ մխիթարութիւնը հայցելու տեղ Տիրոջ արգաստութեան վրայ տարու-

կուսիլ ոչ բանաւոր է և ոչ մանաւանդ քրիստոնէական:

Եթէ պատահէր որ Տէրը մեզ սաստէր ու պատժէր ամէն քայլափոխի, կապած պիտի ըլլար մեր քառա կամքը, ու մենք պիտի նմանէինք դատարանի մը մէջ, խիստ ու խոժոռ ուսուցիչի մը անմիջական հսկողութեանը տակ ասնուած աշակերտներու, որոնց բունադատեալ կարգապահութիւնը ոչ մէկ բարենիչ պիտի ապահովէր իրենց:

«Որքան արդար են դատաստաններդ, ո՛վ Տէր», կ'ըսէ Հին Ուխտի ներշնչեալ մեծ մարգարէն: Եւ այս արտայայտութիւնը լաւատեսութեան վրայ խորախուժած առողջ զգացումէ մը կը բխի: Տաթևացիէ բնածնուած մեր Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան հանգանակն ալ իր վերջաւորութեան կու տայ գերագոյն ապացոյցը Աստուծոյ արդարութեան, երբ կ'ըսէ. «արդարաց (վիճակուած է) կեննք յաւիտենական և մեղաւորաց՝ տանջանք յաւիտենական»: Գրիտտոս իսկ վկայեց այս մասին, ըսելով. «Դատաստան իմ արդար է, զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս» (Յովհ. Ե. 30):

Չխաբուինք ուրեմն սննդողկի երեւոյթներէն: Աստուծոյ գնդանիքներն ու գործելակերպը վեր ու անհաս մնացած են միշտ մարդկային արամարանութեան նեղ սահմաններէն: Աստուծոյ արդարութիւնը պիտի գործադրուի իր տեղին տա մամանակին: Գիտնա՞ք օգուտիլ Տիրոջ գութէն ու համբերութիւնէն և անեցնենք մեր որտեքուն մէջ սերմերը բարութեան ու արդարութեան, անոնցմով գրտուած՝ բացճակատ ու աներկիւզ կենալու համար Աստուծոյ անեղ ու արդար դատաստանին առջև, ան լսելու համար երանաւէտ կոչը Գրիտտոսի. «Եկո՛յ՛ք, օրհնեալք շօր ի՛ր մոռ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալն ձեզ ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. Ի. 34):

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԼՎԻԶԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԶԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

342. — Խորհուրդներուն մէջ, ընդունելու թեման կարգով, կարեւորութեամբ և մեծութեամբ, և բոլոր քրիստոնեաներուն և նոյնիսկ միւս Խորհուրդները ուրացողներուն անհակառակ հաւանութեամբ՝ առաջինն է Մկրտութեան Խորհուրդը, զոր հանգանակին մէջ ալ յայտնապէս կը գաւանդուի ըսելով: «Հաւատա՞ք և ի մի մկրտութիւն»: — Մկրտութեան իսկութիւնը, ինչպէս և անունը, կը յայտնուի ի կայանայ անձին լուսցումն մէջ քնական ջուրով: Ու արտաքին լուսցումը նշանակ է ներքին և բարոյական մաքրութեան մեղքէ: Օրինական լուսցումները սովորական էին Հրէից համար: Յովհաննէս մկրտութեան մէջ դբաւ իր քարոզութեան հիմը, երբ տակաւին իր ժամանակակիցներէն չէր ստացած մկրտիչ անունը: Բայց լուսցումը, որ և մկրտութիւն, նոր և որոշիչ անուն մը առաւ քրիստոնէութեան մէջ, որովհետեւ անհրաժեշտ պայման եղաւ քրիստոնէութեան մէջ մտնելու և իսկական նշանակ ի Գրիստոս հաւատքի և իրական միջոց մեղաց քաւութեան:

343. ՔՐԻՍՏՈՍՆԷ ԼԱՍՍԱՏՈՒԱԾ. — Մկրտութեան Խորհուրդին Գրիստոսէ հաստատուած ըլլալը բացայայտ է աւետարանին մէջ պահուած այն խօսքով, որով Գրիստոս Յարութենէն վերջ աշակերտներուն հրամայեց. «Գնացէ՛ք այստե՛ստե՛ս, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զոսոս յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ» (Մատթ. ԻԸ. 19), զոր Մարկոսէ ալ կրկնուած կը տեսնենք. «Որ հաւատայ և մկրտի՝ կեցցէ՛» (Մրկ. ԺԶ. 15) խօսքով, ինչպէս նաև Նիկոզիմոսի ըսուած խօսքով. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յար-

ջաութիւն Աստուծոյ» (Յովհ. Գ. 5), Առաքելոց Գործերը և Թուղթերը լի են մկրտութեան կարեւորութեանը վերաբերող բացայայտ խօսքերով, զորս աւելորդ կը նկատենք յառաջ բերել: Այս վկայութիւններէն յայտնապէս կը հաստատուի թէ Գրիստոս ինքն հաստատեց արտաքին զործ մը և զայն տուաւ իրրե նշան ներքին զործադրութեան, այնպիսի սերտ յօդակապութեամբ, որ արտաքին մկրտութիւնը պատճառ ըլլայ ներքին կեանքի: Եւ ասոր մէջ է որ կը կայանայ Խորհուրդը, ինչ որ չեն մերժեր նոյնիսկ արեւմտաքի մէջ նորազանդները, ուստի հազիւ թէ հարկ պիտի ըլլայ յիշել մկրտութեան Խորհուրդը հաստատող վկայութիւններ:

344. — Գրիստոս ոչ միայն հաստատեց մկրտութիւնը յարութենէն վերջ, այլ ինքն իսկ մկրտուեցաւ յարութենէն առաջ: Խնդիր է եղած թէ Գրիստոս մկրտութեան հաստատութիւնը տուած է արդեօք յարութենէն ետքը, վերև յիշուած խօսքով թէ կանխաւ ալ հաստատած էր զայն իր մահէն ալ առաջ, երբ իր վարդապետութիւնը կը քարոզէր: Յայտնի է թէ բացարձակ հրամանը յարութենէն ետք է որ տուաւ, բայց անոր կարեւորութիւնը ասելի կանուխ բացատրած էր Ան Նիկոզիմոսի ըրած յազարարութեան մէջ, իր մկրտութենէն ետքը առաջին Չատկի օրերուն: Գրիստոս ինքնին մկրտուեցաւ Յովհաննէսէն, բայց Յովհաննէսէն տրուած այս մկրտութիւնը Խորհուրդ չէր, զի Գրիստոս ինքը պէ՛տք չուէր Խորհուրդին արդիւնքին, որով Գրիստոսի Յորդանանու մէջ Յովհաննէսէն մկրտուելը օրինական էր և ոչ թէ խորհրդական:

Սակայն Գրիստոս ինքն ալ արդեամբ մկրտեց իր կեանքին մէջ, ինչպէս լուսցին Փարիսեցիները. «Եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ և մկրտէ քան զՅովհաննէս . . . քանզի ոչ թէ Յիսուս ինքնին մկրտէր, այլ աշակերտքն նորա» (Յովհ. Գ. 1-2): Ոմանք այս խօսքը այնպէս մը կը հասկնան թէ Յիսուս ինք անձամբ չէր մկրտեր, այլ իր աշակերտներուն ձեռքով, իսկ ուրիշներ կը հասկնան

թէ Յիսուս Յովհաննէսէն աւելի կ'ընէր, որովհետեւ ոչ թէ լոկ անձամբ կ'ընէր ինչպէս կ'ընէր Յովհաննէս, այլ աշակերտներուն ալ տուած էր իշխանութիւն մկրտելու: Երկու խօսքերուն իմաստներէն կը հասկցուի թէ Քրիստոս իր քարոզութեան սկիզբը մկրտութիւն կ'ընէր ու անձոր պիտի ըլլար կարծել թէ անիկա լոկ օրինական մկրտութեամբ կը մկրտէր Յովհաննէս մկրտութեան համեմատ. մասնաւոր կ'երևի թէ Քրիստոս Յովհաննէսէն մկրտուածներն ալ կը մկրտէր, որովհետեւ այլապէս անհասկնալի պիտի ըլլար Յովհաննէսեաններու փափաքը Քրիստոսի մասին թէ շահաւատիկ նա մկրտէ և ամենսին գան առ նա՛ս, ինչպէս կ'ընէ նաև Յոզոս, յիս ժամանակաց ի Քրիստոս մկրտելով Յովհաննէսէ մկրտուածները (Գործք, ԺԹ. Ծ):

345. ԴԱՐՁԱԿԱՆ ՆՈՅՆ ՄԱՍԻՆ. — Սա եւ պէտք է աւելցնենք թէ Քրիստոս զերջին ընթրիքի ընթացքին իրեններուն բաշխեց Հաղորդութեան Խորհուրդը և իշխանութիւն տուաւ անոնց նոյնը կատարելու իրմէ վերջը, և կարելի չէ ըսել թէ առաքելները առանց Մկրտութեան Խորհուրդը ընդունած ըլլալու կրնային ընդունել միւս Խորհուրդները, կամ թէ կրնային մկրտել ի Քրիստոս մկրտութեամբ եթէ իրենք կանխաւ ընդունած չէին զայն: Այդ ամէնը կը յարդորէ մեզ աւանդելու թէ Քրիստոս հաստատեց Մկրտութեան Խորհուրդը իր քարոզութեան սկիզբը, որով և կ'արդարանայ Նիկիոյեմոսի տրուած բացատրութիւնը, որ տեղի չէր ունենար անշուշտ եթէ մկրտութիւնը հաստատուած չըլլար:

Իսկ ինչ որ յարութեանն հաջը աւելցուեցաւ, անիկա կը զերտարիի զայն անխախտ հրէյի և հեթանոսաց վրայ գործադրելու բացարձակ հրամանին և մկրտութիւնը յանուն Ամենաուրբ Երրորդութեան կատարելու ձևին: Բայց թէ ե՞րբ և ի՞նչ պարագայի ճշդակի մկրտութիւնը հաստատուեցաւ Քրիստոսէ՞ անոր չէ Աւետարանին մէջ. թէ և խորհրդապէս առումով կ'ըսենք թէ Քրիստոսի մկրտութեան մէջ պատկերացաւ ի Քրիս-

տոս մկրտութիւնը՝ յայտնութեամբ Երրորդութեան խորհուրդին, որ խորհրդեան ձևն է: Իր մկրտութեանն ոչ շատ ետքը, իր տեսնելը որ կը մկրտեն Քրիստոս և իր աշակերտները. ուրեմն և իրենք, աշակերտներն ալ, մկրտուեցան առաջուց և այդ կերպով հաստատուեցաւ Մկրտութեան Խորհուրդը: Հին Հայերէն ոճանց կ'ըսեն թէ Տիրամայրն ալ մկրտուեցաւ Քրիստոսէ, բայց Լատինները աւելորդ կը նկատեն զայդ, զի կոյսը զերծ կը դառնան Արամական մեղքէ, բայց ըստ մեզ, առանց Մարիամու սկզբնական մեղքէն ազատ ըլլալուն ալ, աւելորդ կ'երևար զայն մկրտելը, զի ինչ որ անոր համար է, կը մտնէ հին օրինաց կարգին մէջ:

346. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՂ. — Մկրտութեան Խորհուրդին նիւթն է բնական ջուրը, առանց խորութեան իր մէջ եղած պատահական փոփոխութեան և պատահական հանգամանքներուն, պզտոր ըլլայ կամ յստակ, ցուրտ ըլլայ կամ ջերմ, աղբիւրէ կամ անձրևէ, աղի ծով կամ համեմուած ըստ տեղեաց, բուէ որ ըլլայ այն բնական նիւթը, զոր անխախտ ամենայն կը ճանչնայ զուր անուան տակ: Նորազանգները, հեռեղութեամբ Լուսերի, ընդարձակագոյն իմաստով կը հասկանան ջուրը, իբրև ջուր ընդունելով ամէն հեղուկ նիւթ, որ կրնայ ծառայել լուսացումին կամ բողբոջի: Հիներէն Սելևկեանները (Ք. դար) կը քարոզէին ի ջուր մկրտութիւնը (Մատթ. Գ. 11) և Փլակիլեանները, որոնք ծաղկեցան ԺԲ. դարուն, կ'ըսուի թէ քարոզած են արեամբ մկրտութիւնը: Սոկինեանները (ԺԱ. դար) այլարանական նկատեցին ջուրը, հետեւելով Մանիքեցիներուն (Գ. դար), որոնք աւելորդ կը նկատէին զգալի նիւթը:

347. ԸՂՁԻՑ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԼԻ ԱՐԵԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ. — Ըստ սկզբապիստ գաւառներէն, անհրաժեշտ է ջուրով մկրտութիւնը, թէ և ընդունելի նկատուած է երբեմն նաև ըզձից մկրտութիւնը և արեան մկրտութիւնը, բայց Սոկինեանց և Փլակիլեանց հասկացածէն տարբեր իմաստ-

ներով. ըզձից մկրտութիւնը այն է, որ երբ մէկը սրտանց կը փափաքի մկրտութիւն ընդունիլ, քայքայ իր կամքէն անկախ պատճառներով կ'արգիլուի գոհացում տալու իր սրտի փափաքին, ան միայն իր փափաքովը մկրտուած կ'ըլլայ: Իսկ տրեան մկրտութիւնը արժէք ունի միմիայն ժարախրոստներուն համար, այսինքն իրենց արեան մէջ մկրտուած կը համարուին անոնք, որ Քրիստոսի նաւաստիներն ենք, առանց ժամանակ կամ ննարարութիւն անկախու մկրտուելու համար, Քրիստոսի համար մահաւան կը մտանաւին: Երկու պարագաներուն մէջ ալ միշտ կամքը անկախ է արգելիչ և անտեղիտալի հարկն է, որ կը լրացնէ իսկական մկրտութեան թերին, որպէսզի ոչ ոք հոգևորապէս զրկուի հակառակ իր սրտի կամքին: Այս վարդապետութեան ի հաստատութիւն, սովորութիւն է յոռաջ բերել Ս. Գրոց վկայութիւնները. «Որ սիրեն զիս, սիրեցի ի շօրէ իմմէ» (Յովհ. ԺԳ. 21), և «Ամենայն որ կարգայցէ զանուն Աստուծոյ՝ կեցցէ» (Հոսմ. Ժ. 13): Ասոնք ըզձից մկրտութեան համար, իսկ արեան մկրտութեան համար՝ «Որ կորոյս զանձն իր վասն իմ՝ գտցէ զնա» (Մատթ. Ժ. 39):

348. ԶՈՒՐՆ Է ՆԻԻԹ ՄԿՎՏՈՒԹԵԱՆ. — Ի բաց առեալ այսպիսի արտասովոր և բացառիկ պայմանները, իսկական և նիւթական ջուրը կը պահանջուի իբրև նիւթ և սորունրդին: Ուղղորտաւ Եկեղեցւոյ վարդապետութեան համեմատ, այսպէս կը հետեցնենք «մկրտեցէք» (Մատթ. ԻԸ. 19) պատուէրէն, որ ճշգրտապէս լրուանն է լուսացումը մտքին, նիկողեմոսի տրուած քաջատրուութեանը նեա մանաւանդ. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի հողոյ, ոչ կարէ մտանիլ յարքաւութիւն Մարտոնոյ» (Յովհ. Գ. 5): Ըստ այսմ, երբ Եթովպացի ներքինին մկրտութեան կը փափաքէր, ստիպուեցաւ սպասել մինչև լուսին ի ջուրն» և այն ատեն ըսաւ. «Անաւանիկ ջուր, զի՞նչ արգելու զիս ի մկրտել: Ու այսպէս, «Եթի ներկութիւն ի ջուրն, Փիլիպպոս և ներքինին, և մկրտեաց զնա» (Գործք, Ը. 36-38), և կուռնելիոսի մկրտութեան ատեն կ'ըլէր Պետրոս.

«Միթէ զջուրն ոք արգելու կարէ առ ի մկրտել զանոս . . . և հրամայեաց նոցա մկրտել» (Գործք, Ժ. 47-48):

Առաքելոց բովանդակ գործը և թուղթերը երբ մկրտութեան վրայ կը խօսին, միշտ յառաջ կը բերեն բնական ջուրով լուսացման եղելութիւնը: Նախկին Եկեղեցւոյ բոլոր պատմութիւնները կը նկարագրեն ջուրով և լուսացումով մկրտութիւնը. աւերակներու մնացորդները, հին եկեղեցիներու, կոնքրու և նկարներու փլածոները և հատուկաորեն, բոլոր անսարաններու յիշատակարանները յառաջ կը բերեն ջուրով լուսացման կարգադրութիւնները, գործադրութիւնները և արձանագրութիւնները, այնպէս որ Եկեղեցւոյ Հայրերէն մին (Օգոստինոս) կ'ըսէր իբրևամբ. «Զի՞նչ է մկրտութիւն Քրիստոսի, լուսացումն ջրոց ի բանին: Բարձ զջուրն, չէք այլ մկրտութիւն, բարձ զբանն, ոչ ևս է մկրտութիւնն»:

349. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆԿ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԾԻ ԶԻՔՈՒՄ. — Բայց Ս. Գրոց մէջ չեն պակաս գտնուան վկայութիւններ, որոնք հակառակորդներուն կարծիքով, այլարանական իմաստով կը թելադրեն հասկնալ ջուրը քան թէ նիւթական իմաստով: Ու նախ վերերը մեր յառաջ բերած խօսքին մէջ «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի հողոյ» (Յովհ. Գ. 5), ինչպէս Հոգին այլարանորէն կը հասկցուի, կ'ըսեն, նոյնպէս նաև ջուրը: Բայց ընդհակառակը, հոգին բնաւ այլարանորէն չի հասկցուիր, վասն զի հոգիին ծնունդը իրապէս կը հասկցուի այնտեղ ըստ պահանջման բնութեան Բանին, հետեւաբար ջուրէն ծնունդը, ըստ պահանջման բնութեան նիւթին:

Ծովաննէս Մկրտիչ ալ կ'ըսէր. «Նա մկրտեաց զձեզ ի Հոգին Սուրբ և ի հուր» (Մատթ. Գ. 11): Կ'աւարկեն ասկէ հետեւ ցընելով. ինչպէս հուրը այլարանական է հոս, նոյնպէս է նաև ջուրը այլարանական: Ասկայն բան մը տեղ մը այլարանորէն գործածուած ըլլալուն համար, ամէն տեղ այլարանութիւն գործածուած չ'ըլլար: Նկարագրական և այլարանական իմաստը երբեմն իրարու տեղ կ'անցնին և իրին բնութիւնը և գործնական նկարագրը

միայն կը զանազանեն երկու իմաստները իրարմէ, ըստ տեղւոյն: Եկեղեցիները միշտ նկարագրական իմաստով հասկցած են ջուրը և մկրտութեան լուսացումը. բայց երբեք նկարագրական չեն հասկցած հուրը, և մտածած չեն ընդ հուր անցանել երկխաները իրբև թէ անելով զառն զգուստը իւր կամ զգուստը զբոցով Մեղ-քեմայ» (Դ. Թագ., ԽԴ. 10):

350. ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԵՐՔՈՒՄ. — Քրիստոս ալ կ'ըսէր առաքեալներուն. «Յովնաննէս մկրտեացի ջուր, բայց դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ քաղսւմ առւերց յետ այտոցիկ» (Կորնթ. Ա. 5), ու հակառակորդները կը կարծեն թէ Քրիստոս ի բաց կը զնէ ջուրը իր մկրտութենէն: Բայց երբ Քրիստոս զայդ կ'ըսէր, առաքեալները արդէն մկրտուած էին իրմէ, և իրենք ալ ուրիշներ մկրտած էին: Յովնաննէս ապաշխարութեան մկրտութենէն զտո աւրիշ բան մը չէր կրցած տալ, Քրիստոս աւելի կուտայ նաև շնորհը, զոր անոնք քիչ ետքը պիտի ընդունէին Հոգւոյն գալովը: Պետոս կը գրէ. «Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուցէ մկրտութիւնն, ոչ զմարմնոյ ստան ի բաց ընկելով, այլ զբարևոք մտացն հանգէսն» (Ա. Պետ. Գ. 21), ու հակառակորդները կ'ըսեն ուրեմն թէ մկրտութիւնը չունի մարմնոյ սղտը թափելու հանգամանքը, ինչպէս պիտի ընէր ջուրով լուսացումը:

Բայց Պետոսն ոչ թէ լուսացումը կը մերժէ, այլ կ'ուզէ որ ուշադրութիւննին միայն արտաքին գործին վրայ չտեսնեն, այլ աւելի անդին երթալով, ներքին մաքրութիւնը մանաւանդ նկատի ունենան: Պողոսն ևս կ'ըսէ. «Ապրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանցած ծննդեանն և նորոգութեամբ Հոգւոյն Սրբոյ զոր տեսալ է մեր» (Տիմոս, Գ. 5): Եւ այլուր կը յուշուան թէ «Բաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեալ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջես»

ցուք» (Հռոմ. 2. 4): Հակառակորդները կ'ուզեն ասկից ևս հետեցնել թէ ուրեմն այլարանական է լուսացումը և նիւթական ջուր չկայ Խորանուրդին խօսքին մէջ: Սակայն էթէ մտադրութեան կ'ընդացուի, պիտի տեսնուի թէ Պողոս կ'ընդունի լուսացումը և ջուրի մէջ ընկզմումը, ու Պետոսի պէս ինքն ալ կ'ուզէ հաւատացեալներուն միտքը նիւթականէն գերբնաւանիտ տանիլ, և զգալի գործողութեան մէջ ցուցնել իմանալի գործողութիւնը, որ հոգիով կը կատարուի:

351. ԱՒԱԶԻ ԵՒ ԳԻՆԻԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ, ՅԵՐՔՈՒՄ ԱՐՔԵՐԸ ԵՒ ՀԵՐՔՈՒՄՆԸ. — Իսկ ջուրով ընդարձակաբար մտնէ մաքրիչ նիւթ իմանալու մասին նորազանգեցող յառաջ կը բերեն մանրադէպ մը, ուր կը պատմուի թէ Նիկիեփոս հրեայի մը մկրտել տուաւ անապատին մէջ աւազով, առ ի չզոյէ ջուրի և հատուածին Հռոմի հայրապետներու կարծեցեալ գործերէ, որոնց մէջ կ'ըսուի թէ Միսիկիոս (Դ 398) և Ստեփանոս (Դ 752) վաւերական համարեցին զինի ի մէջ մկրտութիւնը, ջուրը չկենալուն համար: Բայց նախնեաց մէջ ոչ մէկ տեղ կը գտնուի որևէ յիշատակ ուրիշ նիւթով կամ հեղանիւթով մկրտութեան, որ կարենանք անկէ նշմարանք մը հանել ի նպատակ այդպիսի կարծիքի:

Մենք ալ գիտենք թէ Քրիստոսի կողմէ ջուրը իրբև մկրտութեան նիւթ ընտրելը պատահական է բոլորովին և ոչ մէկ բան կ'արգիլէր զինքը որ ուրիշ բան մը ընտրէր իբր մկրտութեան նիւթ և կատարէր և հաստատէր Խորհուրդը, բայց ասոր համար ոչ մէկ պատճառ կայ կատարուածն ու հաստատուածը փոխելու: Իսկ յառաջ բերուած օրինակին դառնալով, Նիկիեփոսինքն իսկ կը յիշէ թէ Դիոնիսիոս Աղեքսանդրացիին (Դ 264) երբ իմացաւ աւազին մէջ կատարուած մկրտութիւնը, վերստին մկրտել տուաւ զայն ջուրով: Իսկ Հռոմի հայրապետներուն վերաբերուած գրութիւնները կեղտկարծ են և կը մերժուին հմուտներուն կողմէ:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՐՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

(Տարւեցողիք՝ 35)

ՉԱՅԼՏ ՀԱՐՈՒՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

L

Ձմայած ... կը դառնանք, բայց չենք գիտեր ուր,
 Արբած գինիովն իր գեղեցկութեան,
 Մեր սիրսն օրօրուն լիութեամբը, լուռ
 Շղթայուած միտք կառփին՝ Արուեստն յաղթական.
 Իսկ մենք կեցած հոն ըստուկի նշման:
 Կեցի՛ր, ձայն չ'ուզեր, ոչ նրբախօս փաստ,
 Ոչ ալ փանափի խօսքեր՝ վաճառման ...
 Քող հառէ սոփեսան, չէ աչքն անիմաստ,
 Ոչ ալ սրսին զարկ. Գարգան՝ հովու ին խօսքն է հաստատ:

LI

Ձեռ յայտնուած դուն Պարիսին այս ձեռ,
 Կամ երջանկագոյն Անփախսին. կամ,
 Ողջ աստուածութեամբդ, երբ որ քու առջեւ
 Կ'խոնարհէր պարտուած Ռազմի սէրն անգամ:
 Նայուածքն յառ՝ դէմքին քու աստղանշման,
 Պառկած գոգըդ եւ աչքերն քու դէմքին,
 Այսդ նարակելով, շքնեղ սիրահամ՝
 Հալած հրաշքէն սիրոյ կըրակին,
 Կը սեղաւ լաւա անոր կոպերուն, յօնքին, շքունքին:

LII

Բոցավառ, հալած մէջ անխօս սիրոյ,
 Իրենց Աստուածութիւնը անբաւարար՝
 Սիրոյ ըզգացումն արտայայտելու,
 Կ'ըլլան մահկանացու մարդոց հաւատար,
 — Մարդն ալ մերթ կ'առնէ աստուածային փայլ —
 Թէեւ բեռն երկրին արգելք է, սակայն
 Կը յիշենք տեսիլքն, կրնանք ստեղծել ալ՝
 Եղած, ըլլալիք բաներէն համայն
 Ինչպէս արձանն այս, երեսոյթով աստուածաման:

LIII

Քողունք վարժ մասանց, նարսիկ ձեռներուն —
 Արդիսին. եւ գինք կապկողին, ցուցնել
 Ք'ինչպէս կը գիտնայ խորագիտութիւնն՝
 Կորութեան շքնորհն, կրնայ ըզգացնել

Ուռուցքն հեճանքին, չգիտցածէն ճառել —
 Թող չըբթէ պիղծ շունչն իրենց՝ հոսին
 Մէջն որուն պիտ' միտք բընակի պատկերն
 Երազ՝ անայլայլ հայելոյն խորին,
 Որ երբեւիցէ կ'իջնէ մարդուն մէջ, որ շողայ հոգին:

LIV

Սանթա Քրոչէի, Սուրբ Երջ'փակին մէջ կան
 Անիւնք, որ կ'ընեն զայն սուրբ աւելի,
 Մոխիր, որ ինքնին է անմահական,
 Թ'եւ ոչինչ կայ անդ, այլ լոկ անցեալի
 Ձուտ վըսեմացած յոյժն մասունքների,
 Որ հանգչեալու են հոն՝ քառսին մէջ,
 Ոսկերք Աննէլոյի եւ Ալճիէրի.
 Գալիլիոյ ցաւերն հոն գրքեր են վերջ.
 Հոն Մագիալէլու կեանքին վերջին էջ ...:

LV

Ձորս միտքեր ասոնք, Իսաիա, չորս տարր,
 Սեղծագործութեան՝ լըրիս բաւական,
 Ժամանակն, որ բիր նեղով անարգար
 Պատեց պատմունանըզ կայտերական,
 Պիտի ուրանայ, ժխտած է անգամ
 Այլ երկիրներուն, աւերէն յառնող
 Ոգիք, բեղմնաւոր է փուսզ մարմնական,
 Ունի ոսկեզօծ կենսասու դեր շող,
 Հինին նըման, Գանովան է այժմ հսկող:

LVI

Բայց Ետրուացիքն երեք՝ ո՛ր են հանգչած --
 Տանթէ եւ Բեթրարք, նաեւ Գուտանն այն,
 Որ հարիւր արձակ սիրավէպ գրած՝
 Հազիւ թ'անոնց քով մնայ աննշան —
 Պարզ կաւէ չէին շինուած մե՛զ նման,
 Միթէ նըրա՞նք եւս եղան ոչինչ, հող.
 Ձունենայի՞ն գէթ քարէ կիսարձան,
 Ձունենայի՞ն գէթ մարմարէ կոթող,
 Ձվասահեցա՞ն հողին՝ իրենց ծընունդ զըտող:

LVII

Ապերախս Ֆլորէնս, Տանթէն կ'ննջէ դեռ
 Հեռուն, զերդ Սկիպիոն, անարգ արփի մ' մէջ,
 Քաղաքային վէճի, բաղխումներ, մարտեր՝
 Վարեցին Գուսանն, համբաւն իր անեղջ՝
 Բայց որդւոց-որդի պիտ' պաշտուի անվերջ՝
 Դարերով, զղջմամբ: Իսկ Գլուխն թագակալ
 Բեթրարբին, որ կրեց ծաղկեպսակ մը պերն,
 Որուն ծաղկունքն իսկ են երկրէ մ' օտար,
 Կողոպտեցին — ո՛չ քու — ի՛ր կեանքն, համբաւ, շիրիմն ալ:

LVIII

Պողպատի զին՝ մայր երկրին է յանձնած,
 Զի պառկիր սակայն մեծերու քովն ան,
 Քաղցր ու վեհ օրհնէճի ցաւ է ընդունած
 Ինք: Ո՞վ է սրտովն ձեռ լեզուին Տոսկեան,
 Որու ձայները երգ են անմահ,
 Խօսերն նըւագ. արդ շիրիմն աւերակ,
 Կը կրէ բորենու հետքերի նշան.
 Մեռածներու մէջ ոչ իսկ տեղ մ' անյարգ,
 Անցնողներէն չի սպասեր ոչ մի հառաչանք:

LIX

Սանթա Քրոջ զուրկ է անոնց հզօր մոխրէն,
 Այդ զրկմամբ ան ա՛լ աւելի կ'յիշուի՝
 Ինչպէս հին ասեմ կայսեր ցոյցերէն՝
 Պակտէր կիսանդրին ընտիրն Պրուսոսի:
 Ուրախ Ռավէննա, եզերի՞ ծերացած
 Կայսրութեան բերդը՝ անմահն է ի քուն.
 Ա.բուան երս է՝ հպարտօրէն պահած
 Ա.լ ամուրեպի մ' սրբբազան անիւնն,
 Մինչ Ֆլորէնս զուր կ'ըզձայ դարձն իր մեռելներուն:

LX

Ի՞նչ է Փիրամիտն իր՝ թանկ քարերու,
 Պորփիր, յասպիս եւ ազաւ, եւ ալ գոյն
 Գոհար եւ մարմար, սրոնց յանձնելու
 Կ'ըլլանք ոսկորներն հարուստ զուխերուն:
 Յօլն որ կը ժպտի վայրկեան մ' ասղերուն:

Քարմուքիւն կու սայ կանաչին՝ պատող
Գիրեզմանները բանաստեղծներու,
Որ աւելի եւս թեթեւ ննեւ հողն,
Քան մարմար սալն իւխանի մը մարմինն ծածկող:

LXI

Կան այլ շատ բաներ՝ աչք եւ սիրտ դիւթող,
յւղնոյ սրբարան — արուեստի սանար —,
Անդրիւք մրցին հետ գոյներուն շող- շող...
Այլ հրաշալիք եւս, բայց ոչ ինձ՝ համար,
Խոհեք աւել՝ վարժ են բնութեան աննառ՝
Քան թէ արուեստի ցուցաստաններու,
Քէպէտեւ գործ մը արուեստի նարսար՝
Կանչէ իմ հոգին իր յարգը տալու,
Քիչ կը զգամ եւ վասն գործածած իր զէնքերուն,

LXII

Որ նոյնը չեն ա՛լ: Կը շրջիմ այժմ եւս
Քրասնեմէն լնին մօտ՝ կիրճին մէջ այն,
Որ մահ պիտո՞ւ բերէր ժպիւրհ Հոռոմին վէտ.
Հոն Կարգեղոյնի նենգամրտութեան՝
Յիւեցի ռազմի հնարն աննրման,
Որ մղեց Հոռոմի զօրքն՝ ընդմէջ լեռան-ծովուն...
Յուսահատ զօրքն այդ տրուա փաջութեան
Վըտեմ օրինակ... գետ եղաւ արիւնն,
Մուխ՝ ամէն դի, մահ՝ տարտնուած լէզէններուն:

LXIII

Ինչպէս տապալուող անտան փոթորկէն,
Մարտի վիճակը այնպէս էր այդ օր,
Այնպէ՛ս կասաղի, անոր նախնիրէն
Կուրցած էին ալ: Ձէին ըզգար, որ
Կը քարժէր երկիրն ժամֆէ մը հըզօր:
Կը տատանէր ան իրենց ոտքին տակ,
Իրենց առջեւ բաց գերեզմանը խոր.
Կ'իյնային իրենց վահաններուն հակ.
Այդ է անեղ վերջն ազգերուն կռուին անարգ:

Քրզմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼՈՐԵ ՊԱՅՐԸՆ

(Շարունակելի)

Լ. Ռ. Ի Ն Ա. Ղ. Օ Թ Փ

«Սիրս սուրբ հաստատեա՛ յիս, Աստուած»

(ՍԱՂՄՈՍ, Ծ. 10)

Կը մտածեմ ես երբեմն, խոցեր ինձ շատ սրլիր, Տէր,
 Բայց անոնց հետ միասեղ եթէ շնորհդ ալ չըլլար,
 Զունենայի մանաւանդ այն գահնը զոր Դուն նըլէր,
 Գիտեմ, կու տաս փչեռան, որ իբրեւ ջահ մը անմար,

Մեզ խութեւէն, մութեւէն դէպի ափերն արփաւող
 Կ'առաջնորդէ, ի՞նչ վայթ քէ խարխափումով, կողմն ի կալ,
 Պիտի գուցէ տենչայի ես որ առաջ իջնել հող,
 Այս ինձի հետ ընդհողել վիտեսրս, վէրհերս անյապաղ:

Գոն եմ տուած պարգեւէդ, շնորհակալ ալ նոյնպէս,
 Զիրն այդ աղբիւրն է քանզի երջանկութեանս անկաւկած,
 Սակայն պարգեւ մը միակ 'թէ ըլլար ինձ խոստացուած,

Եւ ընտրութիւնը անոր ըլլար կախեալ լոկ կամէս,
 Պիտ' անվարան ընտրէի սիրտ մը բարի ու հլու,
 Սիրտ մը, ո՛վ Տէր, մաքրազարդ, ասակ սիրովդ լեցունելու:

Գ. ՃԱՐՏԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Դ. ԴԱՐՈՒ ՀԱՅԵՐԷՆԸ

Ի՞նչ էր հայերէն լեզուի վիճակը զրի գրեւորէն առաջ: Այդ մասին տեղեկութիւն ստանալու համար նախ պէտք է դիմենք Մովսէս Խորենացիի Հայոց Պատմութեան, որ կ'ընծայէ մեզի բանի մը թանկագին պատճառիկներ Հայոց հիթանոսական շրջանի բանահիւստութենէն: Այդ գողտրիկ տողերը կը ցուցնեն թէ հայերէն լեզուն լաւ մշակուած էր մեր վիպասաններուն երգերուն մէջ:

Քրիստոնէական շրջանի բանահիւստութենէն մեզի հասած են աւելի ընդարձակ հատուածներ, շնորհիւ Ազաթանգեղոսի եւ Փաւստոսի Պատմութիւններուն հնդիւնակին: Այս յօդուածին նպատակն է զաղափար մը տալ Դ. Դարու Հայոց բանահիւսական լեզուին մասին:

Նախ եւ առաջ կ'ուզենք այստեղ յիշել զլիւստրո մէկ յատկանիշը վիպական պատմներուն, որ է տարապայման չափազանցութիւն թիւերու եւ թշնամի կորուստներու: Այսպէս.

Ա. — Թշնամի բանակներու զինուորները ներկայացուած են առասպելական թիւերով. — Տես Դպրութիւն Դ., Գլուխ ԻԷ, ԻԸ, ԻԹ, Լ, ԼԱ, ԼԲ, ԼԳ, ԼԴ, ԼԵ, ԼԸ, ԼԹ, ԽԱ, ԽԲ, ԽԵ, ԽԶ, ԽԸ եւ ԽԹ: Դպրութիւն Ե., Գլուխ ԽԱ. — Հմմտ. նաեւ Ազաթանգեղոս, յօդ. ԵՄՅ, ուր հոստանդիանոս կայսեր այցելելու առթիւ Տրդատ Թագաւորին՝ ընկերացող ընտիր զինուորներուն թիւը վիպասանին կողմէ ներկայացուած է եօթանասուն հազար:

Բ. — Թշնամի բանակները ամբողջովին կը սպաննուին եւ չի մնար «եւ ոչ մի». — Հմմտ. Դպրութիւն Դ., Գլուխ Է, Ը, ԺԳ, ԺԷ, ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԵ, ԻԶ, ԻԸ, ԻԹ, ԾԻ, ԾԴ: Դպրութիւն Ե., Գլուխ Ա, ԽԱ:

Գ. — Պարսից Թագաւորը Շապուհ, ապա նաեւ Մերուժան, միամի ճողորկելով կը փախչին. — Տես Դպրութիւն Դ., Գլուխ ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԵ, ԼԱ: Դպրութիւն Ե., Գլուխ Ա, Բ:

Դիտելի է որ Փաւստոսի վիպական պատմներուն մէջ կրկնուած դրուագներ կան. այդ իրողութիւնը ցոյց կու տայ թէ այդպիսի դրուագները քաղուած են մէկէ աւելի անձերու պատմածներէն: Սյստեղ կը մատնանշենք երեք դրուագներ:

1. — Դպրութիւն Դ., Գլուխ ԽԹ, Յաղագս Մոկիկանայ ... — Հմմտ. Դպրութիւն Ե., Գլուխ ԽԱ, Յաղագս Մոկիկանայ ...:

2. — Դպրութիւն Դ., Գլուխ ԽԴ, Յաղագս արքայորդոյն Պապայ ... — Հմմտ. Դպրութիւն Ե., Գլուխ ԻԲ, Յաղագս Թագաւորին Պապայ ...:

3. — Դպրութիւն Դ., Գլուխ ԼԱ, Յաղագս Գուճանդ Շապիոյ ... — Հմմտ. Դպրութիւն Ե., Գլուխ ԼԹ, Յաղագս Գուճանդ Շապիոյ ...:

Ստորեւ կը ներկայացնենք շարք մը հակիրճ հատուածներ Փաւստոսի Պատմութեան վիպական պատմներէն, ցոյց տալու համար անոց լեզուական եւ ոճական տարբերութիւնը գորիւն վարդապետի լեզուէն եւ ոճէն: Քանի մը տեղ կցած ենք հատուածներ Ազաթանգեղոսի Պատմութենէն, որոնք վիպական նոյն յօդին ածքը կը ցուցաբերեն: Ստորագծած ենք այն բառերն ու առոյթները, որոնք բարացուցական են վիպասաններու լեզուին:

Փաւստոսի հատուածները առնուած են վեներտիկի 1914ի տպագրութենէն, իսկ Ազաթանգեղոսի կտորները՝ Տփղիսի 1909ի հրատարակութենէն:

1. — Բայց բան գամեննսին աւելի այր մի անորէն եւ այսամուս, որ աւելի ընդ ազգս նախարարացն զբզէր զթագաւորն Տէրան. — Փաս. Գ., Ժը, էջ 67-68:

Հմմտ. — Իսկ իբրեւ եկն եհաս ելեալ ի բանտէ վիրապին խոստովանողն Քրիստոսի Գրիգորիոս, հասանէր ի տեղի վկայելոցն՝ իբրեւ ի տեսչութենէն Աստուծոյ ի մի վայր ամենեքին ժողովեալ՝ այսուսեալք ամենեքին, ի տեղին հասեալք յայտնեցան. — Ազաթ., յօդ. 728:

2. — Եւ ոչ որ էր որ մնացեալ էր առ թագաւորին, եւ ոչ գունդ եւ այրեծի, բայց միայն սակա սպասաւորորք հանդերձ, եւ որսոցն պառականօք, եւ բահվիրայ մարդկան, եւ խառնադանք խորանապահ զօրուն, եւ ռամիկապաս զօրօքն, եւ տիկ-

նաւն հանդերձ, եւ արքայորդին մանուկն Արշակ. — Գ., ի. էջ 74:

Հմմտ. — Ապա յետ սայտորիկ ժամ տրեւայ որոյ սամնայն զօրաց ածել կուտել զպատակսնն, խունայական սփռեալ, երազագ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել. — Յօդ. 211:

3. — Սակայն հասանէին առնուին զկողմ ի Պարսից աշխարհէն, առ հասարակ մարդկոտոր առնէին, եւ զաշխարհն յալուեաց եւ յաւար զարծուցանէին: Եւ ինքեանք դառնային, եւ ի մի վայր ժողովէին. կոծ եղեալ աշխարհաւօր լային զերեանց բնակ սերն զարքայն Հայոց. — Գ., ի. էջ 76:

4. — Եւ առեալ զամենայն զօրս իւր ընդ աղխիւ եւ ամենայն մեծաւ կտրաւանաւ, փղպղոյտն բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառօք եւ ընդ մուսուկանսնն, եւ ամենայն կանսնն, եւ հանդերձ տիկնանց տիկնանսն, եկն եհաս ի սահմանս Հայոց, խճողեաց իւր զհրկիրն առ հասարակ. — Գ., իա. 76:

5. — Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժամուալ[րա]ւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առնիւրում. — Գ., ժԵ. 157:

6. — Եւ իբրեւ հալ Լան զհալ լաւել իննի պատերազմ. — Գ., ի. 171:

7. — Եւ տայր նմա Անդոզկ ոսկի բազում եւ անհամար, եւ ղնէր բանս ի բերան, զի իբրեւ կերպարանս գուշակի արասցէ սոսել ցարքայ Արշակ, թէ ապրեց զանձն քօ, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ եւ սպանանել. — Գ., ի. 176:

8. — Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ թագաւորն Հայոց, եւ յառնէին ի զիշերի որ միանգամ մարտ էր ի բանակին Հայոց, հեծան ի ձիս եւ փախան. — Գ., ի. 177:

9. — Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Նուռ բքզ, աւէ, զնձրին քողաք, որ է յլորուեստակի, եւ զմիջագետս Ասորոց, եւ մեղաբարհիւն Հայոց, ձեռնթափ եմ աւէ. թէ կարացես յաղթել նոցա եւ արկանել ի ծառայութիւն. ես ի թիկունս ոչ եկից նոցա. — Գ., իա. 179:

10. — Յանկարծօքն այրացուեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերութանաւ. զարս տային ի կոխումս փղաց, եւ զկանայս ընդ ցից սայլից հանէին. — Գ., իգ. 183:

11. — Մինչ դեռ թագաւորն Արշակ ի կողմանս ստորին գուառացն յԱնգեղ տանն էր յուտեստ, զվիզուեալսարհն քանդեալ րրեալ զօրն Պարսից ապականէին. — Գ., իգ. 184:

12. — Այրացուեր սուսէրն, եւ զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս եւ զմանկոի հանէին ընդ ցից սայլից, զկէսս զոր ի ներքոյ կամացն արկեալ կատուին, եւ զարանց բազմութիւնս տային ի կոխումս փղաց. — Գ., իգ. 185:

13. — Եւ ինքն գայր հասանէր ի միջ. նախարհն Հայոց, ի բաւառն Այրարատու, եւ հասանէր գտանէր զօրսն Պարսից, զի հասեալ մածնալ էին բազմութեամբ իբրեւ զաւազ առ ափն ծովու. — Գ., իգ. 187:

14. — Եկն եհաս Հազարաւուխտ ի զօրացն Պարսից ուխտուս Բիւրօք, զալ այրեացուեր առնել, ի հիմանց տապալել զերկիրն Հայոց. — Գ., իը. 190:

15. — Եւ ապա ընդ ցիրն ասպատակ սփռեալ նայայլին, զամենայն զօրսն Պարսից կոտորեալ, անմի արարեալ սպառեցին. — Գ., լա. 193:

16. — Գայր հասանէր ի սահմանս երկիրն Հայոց, ապա եւ զնայայլսն ոչ ինչ ծուլացեալ ի քուն գտանէր, այլ կազմ պատրաստ կային նմին գործոյ ճակատուն պատերազմի. — Գ., լը. 193:

17. — Իսկ նա նազ Բան զհաղ ճէշր, բազմացուցանէր զվայելն. — Գ., խդ, 201:

18. — Ապա ի մի վայր եկեալք ամենայն մեծամեծք նախարարացն Հայոց, խորհուրդ խորհիւն, քանզի ոչ առնուին յանձն երբեք, թէ թագաւորն Արշակ մտցէ ընդ նոսա ի պատերազմ. — Գ. խԵ., 262:

19. — Միջնաբերդն մնացեալքն յերկուցան յարքայէն, եւ ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց ոչ մի ինչ իրա՝ զոր նա կամէր. — Գ., ժ. 206:

20. — Ապա թէ կամաւ կամաւ՝ քե ոչ կամաւ, սակայն եղ սիրտ՝ խոնարհութեամբ հրովարտակս առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ. — Գ., ժք, 210:

21. — Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ եւ քե ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, ա՛ռ ընդ իւր զօրավարն սպարապետն Հայոց զգայեակն իւր, խա-

ղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից
սո Շապուհ արքայ Պարսից, չոգաւ յան-
դիման եղեւ թագաւորին Պարսից Շապհոյ-
- Դ., ծգ. 211:

22. — Ելանէին ի բերդն ի վեր զորա-
վարն [եւ զաւրթն?] Պարսից, գերէին ըզ-
գանծս թագաւորին Հայոց, որ կային ի
բերդին. եւ սկսան կրնլ իջուցանել զամե-
նայն գանձսն, որ կայր ի բերդին: Աինն թիւ
եւ զինն զիսեւ համակ իջուցին զոր գտին
յևրտագերսն բերդին, հանդերձ տիկնաւն
խաղացուցին. — Դ., ծն. էջ 220:

Հմտ. Եւ տեսին զի զօրութեանն Աս-
տուօյ պահեալ էր զմարմինս նոցա. զի
այն ինն թիւ եւ ինն զիսեւ, զի արտա-
քոյ ընկեցեալ կային մարմինք նոցա, զի
նէ գազանի էր մատուցեալ եւ ոչ շան. —
Ագաթ., յօդ. 223:

23. — Եւ հրամայեաց ի հրապարակին
իմն առնել հրապոյրս մերենայից, որով
հրամայեաց զկինն արկանել, եւ արծակել
[գազանս ի վրայ?] տիկնոջն Փռսանծնմայ
ի խառնակութիւն պոռակութեանն անաս-
նական պղծութեանն. — Դ., ծն. 223:

Հմտ. — Եւ սաստկացեալ թագաւորին՝
ետ սյնդել զոտս նորա ի հրապոյրս տկաց,
եւ կսխել զնա զլխիւյայր. — Ագաթ., յօդ.
109:

24. — Եւ հրաման տայր հոյանել զա-
մենայն ազատ կանտիին, եւ նստուցանել
աստի անտի ասպարիսին. եւ ինքն Շապուհ
արքայ հեծեալ ի ծի, [ն?]շաւակի անցանէր
առ կանտնով . . . Եւ զազատ կանտիին
անդէն ի բերդեանն բաշխէր եւ թողոյր. —
Դ., ծր. 227:

Հմտ. — Արդ՝ ի ընու վաթսնեբորդի
վեցեբորդի աւուրն, ընդ այգոյն առաօ-
տանայն, մատուցեալ իշխանքն թագաւո-
րաւն եւ նախարարօրն եւ խառնիհազանն
ամբոխին հանդերձ, նաեւ կանտնու ժո-
ղովեալ մատաղ մանկտոբն անմեղօք, երաժ
երաժ մի դասադասեալք անկանէին և առաջի
Սրբոյն Գրիգորի. — Ագաթ., յօդ. 736:

25. — Իբրեւ գայր առաջապահն հա-
սանէր ի միջնաօլաւրհն Հայոց, սպանանէր
Մուշեղ զզօրագլուխն Պարսից՝ գհաբէնն
եւ զԶիկն, եւ զամենայն զօրսն արկանէր
ի սուր սուսերի իւրոյ, եւ ոչ մի գոր ոչ
սպրեցուցանէր. — Ե., ա, 237-8:

26. — Եւ շինէին զամենայն աւերեալսն
ի թշնամեացն, եւ զնկեղեցիսն նորոգեցին,
եւ թագաւորութիւնն հաղ Լան զհաղ նորո-
գէր եւ իրք ժամանակին հաղ Լան զհաղ
յառաջադէմ աջողին. — Ե., ա, 239:

27. — Եւ զամենայն մաւեաւորսն
ի բուն արկանէր Մուշեղ սպարապետն,
եւ զամենայն աւագանին, արս իրբու վեց
հարիւր, հրամայէր մորթել զօրավարն Հա-
յոց Մուշեղ, եւ ընույ խոտով, եւ տայր
բերնլ առ Պապ արքայն Հայոց: Առնէր
զայս ի վրէժս հօրն իւրոյ վասակայ: Բայց
զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ
ունք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն
Հայոց անորգել ինչ զնոսա ունք, այլ
ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն,
եւ հանեալ արծակէր զամենեսեան զհետ
առն նոցա Շապհոյ արքային. — Ե., բ, 240:

28. — Եւ եկեալ զօրքն Պարսից ասպա-
տակ առնէին եւ ի միջնաօլաւրհն Հայոց.
ապա եւ թագաւորն Հայոց Պապ զօրաժո-
ղով առնել հրամայէր ի Բագաւանն. — Ե.
գ, 243:

29. — Ո՛չ այդ այն Մուշեղն է, որ
արծակեաց զկանայս թագաւորին Պարսից
Շապհոյ հանգերձ ժանաւարօք եւ վաշտկա-
նօքն. եւ լուեալ եւս է իմ թէ ի Պարսիկս
խօսի. արդ մի՛ մտցէ զա ի հակատ. —
Ե., դ, 246:

30. — Այլ յորժամ դարձան ամենայն
զօրքն Հայոց, ոչ գոյր չափ զլխսնոյն ա-
խոյնիինցն, զոր բերեալ էր առաջի թագա-
ւորին Հայոց Պապայ զօրավարն Հայոց
Մուշեղ. — Ե., դ. 251:

31. — Զի ո՛չ այն Մուշեղ է, որ ի
թագաւորութեան ժամանակ Պապայ ի պա-
տերազմունն Պարսից քանիցս անգամ
ձեռնահաս եղեւ սպանանել զՇապուհ ար-
քայն Պարսից, եւ ոչ եսպան, այլ արծակ-
եաց զԹշնամին. եւ երբմն զկանայս Շապ-
հոյ թագաւորին ի բուն էտրկ, եւ խնամտ
գիծով ժանաւարօք արծակեաց զնոսա զհետ
Շապհոյ. — Ե., լե, 296:

32. — Բայց յորժամ տեսանէր Մա-
նուէլն՝ զոր ինչ գործեացն ընդդէմ էր
հրամանաց թագաւորին Յունաց, ամեալ
զմտա իւրով՝ թէ արժան է նմա գէթ զմի
որ թիկունս առնել նմա. ապա խորհեցան
խորհուրդ ընդ տիկնոջն, եւ կամեցաւ թի-
կունս առնել զարքայն Պարսից. — Ե., լէ, 306:

Հմտ. — Իրրե զայն լսէր Պարթեւն՝ գերդունն ուխտին յիշէր... եւ վատ խորհուրդ ի միտ արկանէր. առնոյր զՅագաւորն մեկուսի նա եւ եղբայր իւր հարազատ՝ իրրե ի պատճառս ինչ գրօսանաց, իրրե խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. եւ գտուսերսն պողոպատիկս թերաքամնայս ունէին. յանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ՝ ըզթագաւորն դիաթաւալ կտցուցեալ յերկիր կործանէին: Անդուստ ուստեմն իրազգած եղեալ իրացն որ եղնն՝ գոյժ աղալակի ամբոխին թանձրանայր. մինչ առս մինչ այն՝ նորա հեծեալ յիւրաքանչիւր երիվարս փախստական լինէին. — Ագաթ., յօդ. 32:

33. — Եւ կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս տալ, ընծայս եւ պատարագս. սոյնպէս եւ մարգպանին Սուրենա հասս եւ կօբիւս եւ զպիտոյս գոռճկացն. — Ե. լը, 310:

34. — Ագա իրրե ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ, մորակ ի վեր առեալ Մանուէլի՝ տանջէր զվերկ զլուխ Արտաւազայ. — Ե. խգ, 316:

Հմտ. — Ամենայն որ ձեռն ի գործ արկեալ, եւ կանանոյն անզամ սատարեալ ըստ իւրեանց տկարութեան կանացի ուստյն. — Ագաթ., յօդ. 758:

35. — Այս ինծ կօբիկ լիցին, փոխանակ զի երէց արարի գրեզ: ...: Ասէ ցկին իւր եւ ցընտանիս. Արիք յաղօթս կամք: Եւ նորա ասնն. Մոլիս դու, դեւ ուրեմն հարաւ ի թեզ. — Զ. ը, 336:

Հմտ. — Արդ՝ իրրե լուան մարդկին՝ սկսան ձիծողել գրանիթն զոր սաջ. սկսան խօսել ընդ նմա եւ ասնն. Եւ դու ուրեմն մոլեզնեցար, դեւ ուրեմն հարաւ ի թեզ. — Ագաթ., յօդ. 216:

Այս հակիրճ նմոյշները կրնան բաւական համարուիլ հաստատելու թէ Դ. Դարու Հայ վիպասանները կը գործածէին, ժողովրդական ստոյթներով համեմուած, առոյգ, ճկուն եւ պիտի լեզու մը: Փաւստոսի Հայոց Պատմութիւնը մէկ կողմի տակ ներփակուած կը ներկայացնէ մեզի Դ. Դարու մեր վիպասաններուն հայաբոյր բարբառը, եւ Ե. Դարու մեծ մատենագիր Կորիւն Վարդապետի շքեղ, յորդ ու փարթամ լեզուն:

Ն. ԱՐԲ. ՇՈՎԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԱՂԻՄԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ
(1743 Մարտ 10 — 14 Հոկտ. 1745)

Թվին ՌՃՂԲ [= 1743], ի Սր. Գաղաթ յերուսաղէմ, մեր վանաց պարիսպն, յարեմտեան կողմն ինքն յինքեան ի փուլ եկն, ի սեղանատան կամարէն մինչև ցմեծ դուռն, մարտի ամսոյ ժ, և այս վասն այն եղև, զի ձմեռն սաստիկ անձրևուտ էր. զի գրեթէ չ' օր աւելի զցայկ և զցորեկ ոչ դադարեցաւ անձրևն գալոյ, և պարիսպն՝ ի վաղ ժամանակէ շինեալ, քանզի յոյժ հնացեալ, և սեղիս սեղիս խաղաեալ և քայքայեալ, Եւ այս եղև ի թագաւորութեան ասեկոց սուլթան Մանուսէին, և ի պարտիարքութեանն սրբոյ և մեծի Աթոռոյն Երուսաղէմի, սոյն Գրիգորի ճգնազգեաց և զիտնական բարեւնապետի, որ ի դուռն և ի դժնեայ ժամանակիս փայլի բարի կենցաղավարութեամբ իրրե զարեգակն ի մէջ հաւատացելոց: Զի թէպէտ սրբազան Վեհն վաղ հեռէ ունէր ի մար զշինումն և զվերայնորոգումն բարձրարեմտ պարսպին, սակայն ազգի ազգի նեղութիւն թէ ի ասեկոց և թէ յայլասեռ քրիստոնէից, միայն ԱՃ. զիտէ, նաև տեսողացն յայանի է: Եւ յեա երկու աւուրց քաղաքիս մուսալլիմն, դատաւորն և շխտերն ժողովեցան ի դուռն Սր. Սաւկոբայ, զէֆշ արարին. ի սեղանատան կամարէն մինչև ցեղիազար կաթողիկոսի նոր չէնքն, Կ' կանքուն տեղ. այս երկայնութիւն և բարձրութիւն կանքուն, և սեղանատան վերայի լիւան. և Գ գեղեցիկ խուց հագեատան տանիսն. սոքա հետ պարսպին զէֆշ եղան և նորոք շինեցան, զոր սրբազան Վեհն ի վաղուց հեռէ զշինութիւն սոցա ունէր ի մար, և ցանկայր թէ հրք լինելոց է այս, որ ես տշօքս զսոցս շինութիւն տեսնէի, վասնորոյ իւր ձեռօքն շինեաց, և հնաս իւր փապաքանացն:

Զի այս ին ամ է որ նստեալ է աթոռ պարտիարքութեան և սեղապան Սաւկոբայ

Առաքելոյն Տեառնեղբորն, բազում բարեաց Սրբոյ Տանս պատճառ եղև, հթէ զԵՃ քիսոյ պարտուց վճարումն, և զՍբ. Յարուսթեան վերնատանն սխնն բառնալոյ, և զտուրբ խորանն պայծառացուցանելոյ, և զքոլորի խցերն փայտակերտ նորոք շինելոյ, յայտնի է տեսողացդ:

Այլ և Սրբոյ Աթոռոյ յարեկեան կողմն ոչ գոյր պարիսպ, վասնզի մինչև ի ցորենատունն քաղաքացիքն քնակէին. վասնորոյ էա զՄիմարենց տներն, և այս ոչ սակաւ դրամով, և շրջապատեալ նորակերտ պարսպաւ, և ամրացոյց զՍբ. Աթոռս յամ. կողմանց:

Նաև զմեծ եկեղեցւոյ վերստին ծեպելն, և ազգի ազգի պատկերօք և շինիով շրջապատեալ պայծառացուցանելն, յայտնի է տեսողացն. թողում և զանթիւ անօթքն Սբ. Եկեղեցւոյն, եթէ սակեղէնքն և արծաթեղէնք և դիպակեղէնք որոյ ոչ գոյ թիւ:

Նաև և զՍբ. Թէոթորոս Եկեղեցւոյ հիմամբ նորակերտ շինելն, որ յառաջ ի ոգի հազիւ առնոյր, վասնորոյ լայն և ընդարձակ շինեաց գեղեցիկ և պայծառ օրինուածովք, և զինչ է զոր ասեմ, գրէթէ աղինասարաս դրախտ դարձոյց զՍբ. Տունս:

Բանզի զլիակատար պատմութիւն Սրբազանին իմոյ արարեալ է կեսարացի Յովհաննէս աստուածաբան վարդապետն, ըստ գերակատար իմաստութեան իւրում, մեք դարձցուք ի յոճ բանիս մերոյ:

Վասնորոյ իբրև սկսան շինել զպարիսպն, յամ. ուստեք նեղութիւն շրջապատեաց զմիջ, մանաւանդ ի ընակչաց քաղաքիս, որ իբրև զտղուկ զարիւնն ծրծն և անկուշտ մեան. ի մեծամեծաց մինչև ցիփոքունս պահանջէին զդրամն, և առնելով ոչ լիանային:

Եւ այսմ ամի Սրբազան վեհն իմ հարկ եղ ի վերայ իմ գնն ի Բիւզանդոպոմոսթիւն հաւաքելոյ, վասն շինութեան պարսպին: Եւ ևս յօժար կամօք յանձս տուի, և գնացի, և պարբիարք տեղւոյն Յակոբ աստուածաբան վարդապետն սիրով ընկալաւ, և գեր քան զարժանն մեր մեծարեաց և պատուեաց ըստ անարգամեծար բարուց իւրում: Եւ յետ

չորից ամսոց դարձաք ի Սբ. Աթոռս, ԲՃ և Լ ուխտաւորօք: Թէպէտ ոչ եղև որպէս կարճէաք, սակայն դատարի՛ք ոչ ելանք. զի որ ի փոքուն հաւատարիմ, և այլն:

Թվին ՌՃՂԲ, Մշու Սբ. Կարպանու յառաջնորդ Մինաս աստուածաբան վարդապետն եկն ի Սբ. Գաղաքս Երուսաղէմ յուխտ և երկրպագութիւն Սբ. Տնօրինական Տեղեաց Գի. Աստուծոյն մերոյ. բուրում մի մնաց ի Սբ. Աթոռս, և Սըբբազան վեհն յոյժ պատուեաց և մեծարեաց զինքն, և ինքն ելեալ աստուած գնաց ի Թագաւորանիստ քաղաքն կոստանդնուպօլիս, վասն իւրոյ պիտոյիցն:

Թվին ՌՃՂԳին, ի Սբ. Տօնի Մընընդեանն Գի. ի Սբ. Մնուէղն գնացաք հանդերձ ուխտաւորօքն, անհանգիստ մնացաք ևս և սիրազուն եղբայրն իմ ըստ հոգւոյ կեսարացի Յոհաննէս Վարդապետն, վասն ոչ գիտաւնելոյ իջևաւ. և վասն սաստիկ ձմերանն յամեցաք անդր սակաւ ինչ աւուրս. և ապա ելեալ ուրախութեամբ եկաք ի Սբ. Աթոռս: Եւ էր ընդ մեզ վերոյ յիշեցեալ Մինաս Վարդապետն, և մեր Ուսումեղու Նուիրակ Ղազար Վարդապետն. նաև աստուածատէր իշխանքն՝ Ակնցի մահեսի Գրիգորն, և Կեսարացի մահեսի Պալին, և այլք բազումք, զորս թողաք յիշելոյ:

Այսմ թվոյ մեծ պահոցն, կեսարու աստուածաբար Աւետիք Վարդապետն եկն ի Սբ. Գաղաքս, շատ դրամ կարծէաք տայր Սբ. Աթոռոյս, ի դերն ելաւ: Իսկ Սրբազան վեհն պատուով ուղարկեաց իւր աթոռն կեսարոյ:

Այսմ ամի յետ Զատիկի օրնեալ ուխտաւորքն խաղաղութեամբ իջին Յեսայֆայ, և ապա գնացեալ իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց: Ընէիլ տեղւոյն Սիմէոն Վարդապետն զբնալ էր Սրբազան վեհին թէ ձկ զուշ խարճեցի ի գալ ուխտաւորացն աստ, և այս ոչ երբէք եղեալ էր թէ Եսայֆայու նստող Ռէիլն դրամ խարճէ և Սբ. Տանս մեծաւորէն պահանջէ: Եւ թէպէտ ամ. տարի պատահի, սակայն Յեսայֆայ նստող Ռէիլն ինքն զինքն երկու ապաստուորօքն կու պահէ:

Այսմ ամի յետ Զատիկին Սեբաստացի մահեսի Յեսային հիւանդացաւ, և ոչ

կարող գնալ ընդ ուխտաւորացն, այլ մնաց մինչ ի Համբարձման Տօնին Քի. և ապա անողջութիւն գտաւ անձին, և ապա ելեալ գնաց ուրախ սրբիւ: Սա շինել ետուր զերկաթեան գեղեցիկ դասերու յենլիքն, յիշատակ իւր և ծնողաց իւրոց: զի էր այր խօսեմ և մեծահաւատ:

Այսմ յամի յետ գնալու ուխտաւորաց գմեծ դռան դիմացի պարտէզն Սրբազան վեհն մեծացոյց ներակերտ պարտաւ չըրջապատեալ. թէպէտ յառաջ գոյր, սակայն փոքր, և պարիսպն չոր քարամբ շարեալ ցած, և այն ևս խաղտեալ: Վասնորոյ իբրև զգրախաղ դարձոյց, և ետ մեղաւորիս իբր ընծայ, կամ ի զբոսանս, վասն քրտարացութեանն: Նա և զլիմոնի պաղաւտն գառաջինն որ հնացեալ էր, նոր շինեաց և ամբացոյց պարտապաւ. և ջրնոր մի նոր գտեալ գեղեցիկ՝ էտա ի մէջ պաղաջային, և ի յարեկեան կողմն կից պատին:

Ի մեծի Այլակերպութեան Տօնին, Սրբազան վեհն ժամարար էր, զխորհուրդ աւուր ծանոյց ըստ պատշաճի տօնին քաղցր բարբառով և լի իմաստութեամբ, և սակաւ ինչ մբուր դառնութեան արքոյց քաղաքացոց: Աղքատ գողով ի ֆուսնգաց վանքն գնալոյն վասն ընչից և ոչ հաւատայ: Վասնորոյ, եկին առ ռան Սրբազան վեհին անկան մեղայիւ, և դադարեցան ի մուր խորհրդոց իւրեանց:

Ի Տօնի վերափոխմանն Սր. Աստուածածնին, Սրբազան վեհն զվեց օրն հետիոտս և բոկ ստիւք ընթանայր ի գերեզմանն Սր. Աստուածածնի գնալ և գալն: Եւ այսմ յամի ևս ընդ Սրբազանին էի, որ սարթաթի աւուրն առանձին ելինք ի տեղի Համբարձմանն Քի. և ի Գալիլիա, և զուխան մեր կատարեցինք. և ապա եկեալ ի յաթոռակալի հազարայն զկերտելարն անդ ճաշակեաց, և այս վասն յետ մնալոյն եղև զի անհնոր Սրբազան վեհին թէ յետ մնայր ի հասարակ սեղանայն եթէ ուտիքն և թէ պաքն:

Թիլին ՌձՂԳին, հսկոտմբերի ամսոյն, յերեքշաբթի աւուրն, Յեաֆայու յիւրից Սիմէոն վարդապետէն աւետիաց գիր եկն ի Սր. Բաղաքս յՅորուսղէմ, Սրբազան վեհին, թէ Ըստամպոլու օրհնեալ տէրու նական ուխտաւորքն ողջ և առողջ և ան-

Պնաս սառ ի նաւահանգիստն Յոպպէ ժաւանցին, և մեծ ուրախութիւն եղև Սրբազան վեհին, նաև բոլոր միաբանից Սրբոյ և Մեծի Աթոռոյս. և այս վասն այն, նախ զի Սրբոյ Տօնս շինութիւն և պայծառութիւն յետ Աստուծոյ նօքօք է: Եւ երկրորդ զի այսմ ամի ի վերայ այլ ամացն, Ստամպոլու յառաջ ելեալ էին, և յետ մնացին. զոր և հարցեալ վերահասու եղաք, որ ԽԵ օր ի վերայ ծովու մնացեալ են, և վերակացոյ նաւին ի կարգեալ, պատրիարք Յակոբ վարդապետի սիրազուն աշակերտ կարապետ վարդապետն:

Եւ յետ սուղ աւուրց եկն Ակնայ երկրէն նաւերակ կարապետ վարդապետն, որ էր աշակերտ Թէոդորոս վարդապետին Խորենացոյ, իւր ժրջման աշխատութեանն բազում օրայիւք, և պարզերեսութեամբ, և Սրբազան վեհն տեսեալ զքաջութիւն և զհարազատութիւն՝ զեր քան զինքն յառաջ զնացողքն բազում արգիւնս զոր բերեալ հասոյց ի Ս. Աթոռս և ի ձեռն Սրբազան վեհին. վասն որոյ մեծաւ սիրով և շնորհակալութեամբ զինքն օրհնեաց, զոր Տէր պահեսցէ ընդ երկար կենօք, Ամէն:

Թիլին ՌձՂԳ, ի մեծի տօնի աւուր Ծննդեան Տիտան մերոյ Յի. ոչ կարացաք զնալ աւխտ և երկրպագութիւն ի Բեթղեհէմ, որպէս էր սովորութիւն ամ. ամի այսմ տօնի Սրբազան վեհն հանդերձ բազմախուռն ուխտաւորօք մեծաւ փոփականօք և բաղձնօք անարգել գնայր, և այսմ ամի որբեկման պատճառն էր այս, զի այլազգիկ և ֆլանք տեղւոյն մեծ խոսվութիւն և աղմուկ ունէին հետ միմեանց: Եւ թէպէտ ի նոյն օրն ոչ կարացաք գնալ, սակայն յետ յերկուց ելեալ Սրբազան վեհն մեծաւ հանդիսեւ գնացաք որպէս օրէն էր յառաջագոյն, և զուխան մեր կատարեցաք, և անՊնաս յետ չօքալ ի Սր. Աթոռս, թէպէտ խոր և մտաբու շատ եղև:

Այսմ թուոյն, Բուսն Բարեկենդանի աւուրն, ձ հոգի ուխտաւոր եկին Հալապու կողմանէ, յոյժ արգիւնաւոր էին, և աւատ ի տալն զողորմութիւն: Ի Ջատկին կեսարացի Վաղար վարդապետն գնաց նաւերակ ի կեսարայ քաղաքս. որպէս է սովորութիւն Սրբոյ և Մեծի Աթոռոյս

զի Գ տարին մի անգամ հյանձն նուիրու-
 կուձք ի Սբ. Տանէս առ ի հաւաքել զո-
 զորմուքիւն աստուածատէր հաւատացիլոց
 և բերել ի Սբ. Քաղաքս յԵրուսաղէմ, և
 ի Սբ. Աթոռս: Նաև Պրոխորոն վարդապետն
 նուիրակ գնաց իզմիր քաղաքն, որ
 է այր ծեր և վաղմի միաբան Սրբոյ
 Տանս, խախտել ի հաւատոյն և թիւրիւղ
 ի ճշմարիտ ճանապարհէն, առցէ Տէր
 դորձ կամ բարձ: Եւ զմեր որդի կարապետ
 վարդապետն կարգեաց Սրբազան վեհն
 գնալ ի Բիւզանդ հետ ուխտաւորացն:

Այսմ պատեքին այնմ աւուր որում
 օրհնեաց տէրուհական ուխտաւորքն հլեալ
 ի Սբ. Տանէս և չուէին ի նաւահանդիսան
 Յոպպէ, զիր հին ի Պոլսոյն ի Յակօք
 պատրիարք վարդապետէն, յորում գրեալ
 էր թէ Խալաթիացի առաք երէց տէր Սա-
 հակն զվաղճանն ընկալեալ, որոյ հոգւոյն
 Տէրն ողորմեցցի: զի էր այր քալ և արի
 յամ. գործս բարեաց, մանաւանդ թէ պի-
 տանի Սրբոց Աթոռոց և վանօրէից և ե-
 կեղեցեաց, յորոց շնորհիւն Տէր Քս. իւրն
 ողորմեցցի ըստ մեծի ողորմութեան իւ-
 րում, և հանգուցէ զհոգի նորա ի դասս
 արբոց իւրոց, Ամէն:

Յետ գնալու ուխտաւորացն Յոպպէու,
 թէրջիման Պողոսն յետ չոգու ի գործոյն
 վասն ակարութեան իւրոյ անձին, զի այս
 Ժ և Ե ամ է որ ի մէջ այս գործոն է,
 որոյ Տէր զվարձս բարեաց պորգեէ, ամէն:
 Եւ ի Երուսաղէմ հաւաքուան Ալֆարն,
 հին միաբան և ծեր, գիտակ էլից և մօրց,
 յայտից և անյայտից, որոյ Տէր կարո-
 ղութիւն տացէ:

Յետ քանի աւուրց նոր մուգավալի
 եկն տաճարին, ունելով ընդ ինքեան
 ֆորման վասն Աշնոյաւրի պաղջային,
 իբր թէ վաղուֆ է տաճարին, վասնորոյ
 մեր գործակալք առին զիստիֆայի թա-
 մասուկան և գնացին. յետ շատ խօսից և
 վիճարանութեան Եձ զրշ. ետուն և զֆար-
 մանն ի ձեռացն առին: Եւ այս քանի ան-
 գամ հղև այս դաւիս. Տէր այց առնու
 Սբ. Աթոռոյս. Ամէն:

Յետ այսորիկ եկն դատաւոր մի, որ
 էր յոժ շար և գծնեայ, ներակ և ատե-
 ցօղ քրիստօնէից, և հակառակ վանօրէից-
 քաղաքաւ Դամասկացի, ինքն անիրաւ և

դատաստանն թիւր, աչքն ի կաշառն և ի
 առնուլ, վասնորոյ և քաղաքացիքն տե-
 օին թէ սուա խօսիցն ունկնդիր է և կա-
 շառառու, և իրուռնը ոչ ունի ի դա-
 տաստանն: Վասնորոյ քաղաքիս այլազ-
 գիքն յարեան ի վերայ վանօրէից և
 սու(ս)ա արգուհալով լցին զդատարան:
 Եւ դատաւորն ըստ անրարի բարուցն չա-
 րութեանն իւրոյ և ազանութեանն յոյժ
 նեղեաց և տառապեցոյց զվանօրայքն:
 Վասնորոյ յաղաքս օտտակի նեղութեան
 վշտաց, և կեղեքանաց դատաւորին, ոչ
 կարացին տանիլ: Գ վանքի գլխաւորքն
 խորհուրդ արարին և մէկ մէկ մարդ գրով
 յղեցին ի կայսերական քաղաքն Պօլիս,
 հակառակ բարձրոյն հնդին, պատկեր աւուրն
 հինգշաբաթի:

Գ մեծի տօնի վերացման կենսատու
 Սբ. Խաչին Սրբազան վեհն զՔս. պոտա-
 րազեաց, և յետ Սրբոյ Պատարագին զը-
 լոր մեր աչին քրիստոնեայքն կերակր-
 եաց: Վանգի յոյժ սղութիւն էր հացի,
 և ոչ զաւանիւր երկիրս ցարեան, և եթէ
 քայր ի հեռատանէ ցարեան՝ զայն մեծա-
 մեծք կու յափշտակէին. իսկ աղքատքն և
 անանկք մնային ողորմելի: Վասնորոյ
 Սրբազան վեհն, կարի աղքատսէր և,
 ողորմած գուլով, միշտ առնէր զողորմու-
 թիւն կարօտիւց, յայտնի և ծածուկք,
 առ ընտանիսն և օտարս, ըստմանութեան
 Յորայ և հօրն հաւատոյ Աբրահամու:

Յաղաքս որոյ յետ կերակրելոյ զաղ-
 քատան, միջօրիկայ ժամու կիրակէի ա-
 ւուրն, կոչեաց զըլլոր միաբանքն Սրբոյ
 և Մեծի Աթոռոյս, զկարկաւորքն և զը-
 քրձողեաց մանտեիքն. և կեալ զնա-
 ցեք ի Սբ. Փրկչայ վանքն և անգանօր
 սկօաւ խրատ տալոյ, եթէ գործակալաց
 Սրբոյ Տանս և եթէ հասարակ միաբա-
 նից, ըստ աստիճանի և ըստ պատուոյ,
 յաղաքս բարեկեցութեան ինքնանց և
 կարգաւորութեան Սբ. Աթոռոյս:

Ապա յետ այնորիկ զգերեզմանս սուրբ
 պատրիարքաց և վարդապետաց, որ անգր
 կան հանգուցեալ, օրհնել ետուր, և ինքն
 Սրբազան վեհն իւր օրհնեալ ձեռօքն մէկ
 մէկ սկի կարգաւորաց և ԲԲ զոչ. հասա-
 րակ միաբանից բախեաց զողորմութիւն,
 և ամենեքեան միաբան շնորհակալ և գօ-

հաջողք եղին սրտի մտքը, և դարձաք ի վանքն: Եւ դարձեալ եթէ զաղքատքն կերակրելոյ և թէ զողորմութիւն բռնախելոյ, ոչ թէ յարդեանց Սրբոյ Աթոռոյս էր, այլ իւր ժամուցէն, զոր ի ժամ պատարագ մատուցանելոյ յիշէք տուեալ էին իւրն. զոր Տէր ԱՏ. ի փառս իւր համարեցի, և զվարձս բարեաց պարգեկեցէ իւր, աստ և ի հանդերձեալ կեանսն, Ամէն:

ԹՎին ՌՃՂԴ, սեպտեմբերի ամսոյն ի և Թ, պատկեր աւուր կիրակէի, որ էր Տօն Վարագայ Երեման կենսատու Ար. Խաչին, յորում աւուր Սրբազան Վեհն մեծաւ հանդիսիւ զԲս. պատարագեաց, Ար. Խաչի խորանն ի բարձրաւանդակ տեղւոյն, առ ի հաշուութիւն աշխտո՛րի, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց մերոց և ամ. հաւատացելոց:

Վասնորոյ երրորդ ժամու զիր եկն Յուպէլու յաէիզ Սիմէոն Վարդապետէն: Նսեկ հետ ուխտաւորաց վերակացու լինող կարպետ Վարդապետէն թէ Աստուծով Ըստամպօլոյ օրհնեալ ուխտաւորաց նաւն անփնաս, ուրախութեամբ ի ԺԻ օրն ժամանեաց աստ ի նաւահանգիստն Յուպէլ. և մեր լուեալ ուրախացաք յաւրախութիւն մեծ, և միտքան միով բերանով գոհացաք զԱստուծոյ և զբարերարութենէ նորին:

ԹՎին ՌՃՂԴ, պետն Դամասկոսի եկն ի Սբ. Քաղաքս Երուսաղէմ. որպէս է սովորութիւն անդր նստող փառչաքն տարին մի անգամ դուր ելանն և շրջեն ամ. տեղիս տէրութեան իւրոյն Վասնորոյս յամ տարւոյն էր Շամայ պետ Այտամօղլի Ասափ փառչան, կնատ և աքա՛, տեղւոյս վերու գրեալ դժնեայ և չար դատաւորն՝ ի ծածուկ մատնեաց փառչային զԳ վանքն . . . վասնորոյ գրեթէ ոչ սակաւ նեղու-

թիւն կրեաց Սրբազան Վեհն և զբամէ Թարեցաւ: Քանզի այս մտտակայ տարիքս եկող փառչաքն յամէն վանաց Գ հաղարական զաչ. զբամ կու առնու ինքն, և քէհեայն հինգ հարիւրական, հինգ հարիւր աւելի առաջակայ արանց և մեծամեծաց ներս և դուրս կու գնայ, թողում զըուխայն որ ԴՃ հարիւրական կոնքսն գնայ. և ի վերայ այսր ամենայնի Ռի զաչ. ի ընծայ տանին առաջի իւրն. և եթէ սակաւ ինչ սղալանք որ գտանի՝ ի վերայ վանօրէից, անսորմ ճշտիւ զխնդրեալն հարկիւ կու պահանջէ. և այսպէս յամ. յամի զայս խղճութիւնս կու կրնիք, զոր Տէր Աստուածն ամենայնի ազատութիւն տացէ, ամէն:

ԹՎին ՌՃՂԴ, հոկտեմբերի ամսոյն ԺԴին, յաւուր երկուշաբաթ, Ըստամպօլու օրհնեալ տէրուհեանս աւխտաւորքն անփնաս ուրախ սրտիւ ի Սբ. Քաղաքս յԵրուսաղէմ հասին, որք էին թաւով ԲՃՀ հոգի, և զլիաւոր ի մէջ նոցա էր յօրհնեալն Աստուծոյ և ամ. սրբոց նորո Ակնայ երկրէն մահտեսի Պետրոսն, որ առաս և անթերի զիւր ողորմութիւն ուրախ սրտիւ պարգեկեաց Սրբոյ և Մեծի Աթոռոյս, որ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ զանճառ և զանսպառ ողորմութիւն գացէ, ամէն:

Ի Տօնի Խաչգիւտի, որ է մարերի Ժ, արեւելցի մահտեսի Մովսէսն զՍբ. Յարութեանն դուռն ըսնալ ետուր, Սրբազան Վեհն զԲս. պատարագեաց մեծաւ հանդիսիւ, ի խորանն Սբ. Լուսաւարչին, և յետ Սրբոյ Պատարագին ըսլոր ուխտաւորքն և քաղաքիս աղքատքն ի Սբ. Աթոռս կերակրեցան. զոր Տէր ԱՏ. միշտ ի շէն և պայծառ պահէ զՍբ. Տուռնս, ամէն:

Ձեռ. Ս. Բ. Թ. 3694, էջ 23 - 45

Հրատ. Ն. Ա/Բ. ԾՈՎԱԿԱՆ



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ոչ մի կասկած չկայ, Մատենանի մէջ Աստուծոյ նկատմամբ արտայայտուած տնի զգացմունքը, ինչպէս նաև փրկութեան հասնելու ճանապարհին ապրած երկուութիւնը իւրայատուկ կերպով արտացոլում են ժամանակի պատմական ու հասարակական իրադրութիւնը:

Պարզ է որ դրա ապացոյցն այն է, որ Նարեկացին շատ դէպքում էլ իր հոգեկան անհունգասութիւնը արտայայտում է շատ բացայայտ ձևով՝ սեղղակի իրական կեանքի հանգամանքների մէջ պատկերելով իրեն:

Թե զինուոր եմ ջեանում՝ սպասում եմ մահուան:

Թե պատկանում լիստուրեան:

Թե վրացի՝ կորստեան մուրհակի,

Թե կրօնաւոր՝ անեծի ...

Թե բարձրացած մի ձեռք՝ կը կորանամ,

Թե խրճուղի լի փոքրիկ՝ կը սարսեմ,

Թե լսեմ քնիւն մի քերեւ՝ կ'ընդոսնեմ,

Թե կ'երուխտւմի նրաւեր սասնամ՝ կը դողամ:

(Բան ԵՊ., Գ)

Եթէ անգամ մը խնճոյքի հրաւիրուելը Նարեկացուն (բանաստեղծին) ասնջալից վիճակի մէջ է դնում, այնչափ, որ ամէն տեղ նա հանդէպ իր անձին որ է վտանգ է սպասում:

Նարեկացու պոետում շատ անգամներ է մէկը միւսից ծանր ճիւղանջումներու յիշատակութիւնից չի կարելի բանաստեղծի վերաբերեալ կենսացրական եզրակացութիւնների յանգել, զանազան ծանր յանցանքներ ասես, որ նա սեղղակիորէն չի վերագրում իրեն, նոյն ժամանակ այդ պատկերները ճշգրտորէն արտացոլում են Կեղեցիական իրականութեան բոլոր բացասական կողմերը, դրանց նկատմամբ Նարեկացու քննադատական - ժխտական կողմերը և վերաբերմունքը, որը կեղեքուող աշխատաստրական զանգուածների, նամանակագր գիւղացիական արամոգրութիւն-

ների արտայայտութիւնն էր: Նանրախորհուրդ ստեղծ և շարախօս բերանների գործած ամենածանր յանցանքների թուում շատ կարևոր է այն, ինչ որ կը վերաբերուի ժամանակաշրջանի հասարակութեան տարբեր խաւերի բարոյական դիմանկարին: Այստեղ Նարեկացին ազատորէն բացայայտում է տուելով դիրքի կամ պաշտօնի մարդկանց բացասական գծերից ամենաէականը՝ նրանց պարտաւարութեան և իրական վարքագծի հակասութիւնը:

Անխուցե՛ք քանայ ...

Նեկ խորհրդակից ...

Պծուում բարեկամ,

Պողոմիս հսկիչ ...

Պատեցնեալ տրբիւ,

Խորախ զանձապես,

Բանասերկու դեսպան ...

Նեկ պատեցնու,

Մտնիչ պահապան,

Չարախօս դրկից:

(Բան ԵՊ., Բ)

Նարեկացու պոետի գեղարուեստական արժէքը առաջ պայմանաւորում է ժամանակի իրականութեան խոր և ճշմարտացի արտացոլմամբ:

Պոետի քննարկական հերոսը նոյնինքն Գրիգոր Նարեկացին ստեղծուած է սրպէս նոյն այդ իրականութիւնը ներկայացնող մարդու մի հոյակապ ու համապարփակ կերպար:

Այն, ինչը ամենից առաջ Նարեկացուն դարձնում է նոր շրջանի սկզբնաւորողը հայ գրականութեան մէջ, դա մարդուն մասին ունեցած նրա հոյակապընքն և մարդկային ներքնաշխարհի շատ արտակարգ վերլուծութիւններն են:

Նարեկացին սիրում էր թէ՛ կեանքը և թէ՛ մարդուն: Նարեկացու՝ մարդկութեան արտաների անխնայ ճիւղացումների իմաստը մարդու ժխտումը չէ, այլ ամէն տեսակէտից անթերի ու մաքուր, նաև ողբերգական հակասութիւններից ու տարակոյսներից զերծ մարդկային կերպարի կերտումը:

Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» պոետի մշտական, մնայուն գեղարուեստա-

կան արժեքը, իբր բովանդակութեան խորութեան և մեծութեան հետ, պայմանաւորուած է նաև հայ պոետիկական տրուստի անսահման հարստութեամբ: Անշուշտ Նարեկացու բանաստեղծական և արտայայտչական միջոցներն և ձևերը անսպառ են, աներևակայելիօրէն բազմազան և գունազեղ, իսկ բառարանը՝ հայ գրողներից ամենաարուստը:

Նարեկացու պոեմի բովանդակութեան զարգացման ինքնուրուիւթիւնը յայտնի և արմատաբերութիւններ արտայայտման և պատկերման համար միշտ էլ պահանջում է նորանոր և մեծ քանակութեամբ պոետական հնարքներ և միջոցներ: Այլապէս կարող կը լինէր կրկնութիւնների տպաւորութիւն առաջանալ: Նարեկացին վտանգօրէն և խորապէս զիտակցել է իր ստեղծագործութեան էութեան առանձնայատկութիւններին և, համաձայն դրան, համապատասխան արտայայտչական ձևերի անհրաժեշտութեանը:

Պոեմի մէջ մի անդ, նա իրեն համար մեղքեր գործելուց շատ աւելի սղարլի բան է համարում կրկնաբանութեամբ շտապօտութեան մէջ մտնելը: Աւստօտակ կարիք կայ նկատելու, որ Նարեկացին իբր պոեմի ձևի և բովանդակութեան հարաբերակց ներդաշնակութեանը հասել է ոչ թէ արարարանօրէն, այլ գեղարուեստական ստեղծագործական առանձնայատկութիւնների՝ իբր ժամանակաշրջանի համար արտակարգ և աննախադէպ լայն իմացողութեամբ և զգացողութեամբ:

Կոսկած չունենք որ աշխարհի բոլոր մեծ բանաստեղծները նման Նարեկացին ինքը շատ հիանալիօրէն գնահատել է իր ստեղծագործութեան գեղարուեստական մնայուն արժեքը, երբ իր պոեմի յիշատակարանում գրել է, որ ինքը հրաշակերտել է բազմաստեղծան հրուսագներով ամիրտոյն մի գիրքի:

Նարեկացու Ժ. դարում սկզբնաւորուած աշխարհականացման ոգին իբր անմիջական փայլուն արտայայտութիւնն է գտել նաև Նարեկացու պատկերաւորման արուեստի մէջ: Նրա պոեմը շնչում է իր յսկան աշխարհով մէկտեղ, Թէ՛ մարդկարան կեանքի իրագործութիւնները և թէ՛

բնութեան երևոյթները իրենց իրական և էջմարտացի նկարագրերով լիուրի օգտագործուած են բանաստեղծի կողմից իբրև համեմատութիւններ և փոխարեութիւններ՝ ապրումների և հոգեվիճակների գեղարուեստական մարմնաւորման համար: Բազմաթիւ ցայտուն օրինակներից մէկն է նաև արեւութեան յուզիչ պատկերը:

Քոնկի մինչևեւ ես անհոյ, աներկբայ
Մի վստահութեամբ արուսում էի,
Փրկութեան միայն շնչի կասկածներ
Մտանցեցելով այն փոքր միջոցի պսակա-
նով, որ դեռ
Բաժանում եր ինձ իմ հանգրուանից,
Գարծելով արդէն հասնում եմ ափին,
Չմեղբ յանկարծ, մտնա ժամանակ,
Քեզքեր հոգով վրայ հասնելով՝
Իր եւալիկով դիմանարութեամբ
Իսկոյն վրդովից հանդարտութիւնը:
Աւ ալիքների վայրագ բախումից մար
խորտակուց:
(Ռան ԻՍ., Բ.)

Նարեկացին իբր շարունակութեան մէջ աստեղ է, թէ ինչպէս նաև պարզ փրկու-
րայից ալիքների վրայ դրուած իր նաւի
բեկորների հանդէպ արցունքի գետեր է
հոսեցնում, նոյնպէս էլ ինքը (բանաս-
տեղծը) ողբում է իր հոգու խորտակումը:

Հասարակայնօրէն խուսափելով ան-
գորիաներից և գիմելով համեմատութիւն-
ների և փոխարեութիւնների՝ Նարեկա-
ցին այդ պարագայում էլ շատ է թօտեցել
նոր ժամանակների պոեզիայի ոգուն և
առհասարակ դրոնով նա ճանապարհ է
հարթել հայ քնարերգութեան գալիք զար-
գացման համար: Նարեկացու փոխարեութի-
ւններն և համեմատութիւնները, ինչ-
պէս նաև ստեղծագործութիւնները, ոչ
բոնք պոեմում յորդում են հեղեղի նման,
միշտ ինքնատիպ են և համարձակ և զե-
ղագիտական շատ բարձր ճաշակի և զգա-
ցողութեան արտայայտութիւն:

Նարեկացու բանաստեղծական կուլ-
տուրան շատ սերտօրէն կապուած է ժողո-
վրդական բանահիւսութեան հետ: Այդ-
պէս են սպացուցում նրա պոեմի համար
այնքան բնորոշ երևակայական պատկեր-

ներքը, քանաստեղծական բազմապիսի արտասայատուժիչներին կուսակույմները և հակադրուժիչները, որոնք այնքան անհրաժեշտ էին, խոհերի խորսուժիչն ու զգացմունքների ուժգնուժիչն արտասայակույմ համար:

Նարեկացու «Մատենն Ողբերգութեան» պոեմի գեղարուեստական հրաշակերտ ամբողջութեան մէջ շատ մեծ նշանակութիւն ունի նաև համբաւաւոր հեղինակի ուրոյն բառաստեղծման անսպասկարողութիւնը: Ժամոնակի գրական լեզուն՝ զբարբը ինչպիսի հարստութեան որ հասել էր պատմիչների, եկեղեցական գրողների ու բանաստեղծների գործերում, չէր կարող Նարեկացու ստեղծագործական երևակայութեան անսահման թափաքը, իրերամբ խոհերի ու զգացմունքների բոլոր նրբերանգները արտասայակույմ: Նարեկացու շատ առաջ բուն բանաստեղծութեան լեզուն շատ ու շատ աւելի աղքատ ու միակերպ էր, քան մեր պատմիչների լեզուն: Եկեղեցական կարգերին հետեւելը բացարձակապէս խանգարում էր հոգևոր երգերի (շարականների) հեղինակներին լեզուական նորամուծութիւններ կատարել, և այդ այն աստիճան, որ նրանց լեզուական անհատականութիւնը համարեա թէ կորչում էր: Այս պարագայում վստահ կարող ենք ասել թէ Նարեկացին էր առաջինը, որ շատ ճոխ ու գունագեղ լեզուով գրելու առաջնութիւնը նուաճեց պատմիչներից ու գերազանցեց նրանց:

Նարեկացու «Մատենն» լեզուն իրրե գեղարուեստական լեզու, բացի այն՝ որ շատ հարուստ է հաւաքածուներով, փոխարերութիւններով և համեմատութիւններով, որն նաև աւելի կարեւոր արժանիքներ: Դրանցից առաջինը բարդ բառերով վերին աստիճանի հարուստ լինելն է արտասայատույմ: Անշուշտ արուեստի սեսարանները բարդ բառերով հարուստ լեզուն համարում են գեղարուեստական ստեղծագործութիւններին յատուկ լեզու: Այս մի շատ նշանաւոր ճշմարտութիւն է, որը փոխյուսել կերպով սպասուցուում է նաև Նարեկացու ստեղծագործութեան փորձով: Նարեկացին բարդ բառերի ընտրութեան կամ նրանց սեփական կազմութեան

պարագայում, իր նախորդ գործերի հետ համեմատած՝ դէպի աւելի դրականն է գնացել:

Նրա բարդ բառերը այնպիսի արտասովոր կազմութեամբ չունեն, ինչպէս որ շատ դէպքում Տաղերում ենք հանդիպում («Յոսիհնճեմ», «Օղինաւից» ևլն.), այլ սովորական, ինչպէս այդ յատուկ է մեր լեզուի բառակազմութեան օրէնքներին:

Նարեկից շատ հասաւածներ կարելի է մէջբերել, որոնք լեզուն և հարուստ են բարդ բառերով, ինչպէս նաև ամանցներով (յատկապէս շատ ժխտական) բարդուած բառերով: Այստեղ նրանք Նարեկացու լեզուին մի առանձին հմայք են տալիս: Նամանուանդ երբ կուսակույմ են հարկը պահանջած տեղերում, իրրե ամակուն մի գոյականի հետ գործածուելով՝ միասին կազմում են մի գեղեցիկ փոխարերութիւն, օրինակ՝

Մոլորապատի վարժուրիւնք,
 Հանապազախալ սեսուրիւնք,
 Ակնայայրաս պչուրիւնք,
 Պոսեկակերպ կերպարանք,
 Ախարարոք ճիւր,
 Դմենաւեթիլ գոյնք,
 Յոլգեսխուր գիլ,
 Յոլգուսեղծ ծուխ ...

(Բան ԽԸ., Գ.)

Նարեկացու այս օրինակը նոյն ժամանակ ցոյց է տալիս Նարեկի լեզուի երկրորդ կարեւոր արժանիքը՝ նրա վառ երանգաւորութիւնը: Այս դէպքում Նարեկացին լեզուի երանգաւորման, գունասեփական հմայք բոլորովին չէ դիմում օտար կամ մոռացուած բառերի գործածութեանը:

Նարեկացին իրրե աշխարհականացման ժամանակաշրջանի բանաստեղծ, ժամանակի ոգին հրաշալիօրէն արտացոլում է իր ստեղծագործութեան լեզուի մէջ: Պոսեկակերպարման համար ճիշդ իրականութիւն է Նարեկացու պոսեկակալան արուեստի հիմքերի հիմքը: Երբ բանաստեղծը պոսեկակալում որևէ տեղ բովանդակութեան ու արտասայատույմ միջոցների կուսակույմներ է ստեղծում իր սպասուրութիւնը ուժե-

զացնելու նպատակով, նա սովորաբար չի բաւականանում միայն կռատահմամբ, այլ նա այդ կռատահման բաղկացուցիչ մասերի աւարկայական արտաքինը վերցնում է կոնկրետ իրականութեան միանգամայն տարբեր կողմերից: Ուրեմն, մի տեղ, արտայայտելու համար այն միտքը, որ ինքը առանց բարեգործ՝ զերազոյն կամքի չի կորոզ անել կամ լինել այն՝ ինչ պէտք է, կատարում է հետեւեալ համեմատութիւնները.

Ձի ոչ երբեք հարք ընթանայ երկվար առանց սանձակալի, եւ ոչ ցաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի, եւ ոչ արօր կեռն ինչ գործէ առանց մանկալի, եւ ոչ երկու-որեակ վոնցն ի Ե-ոն Ենմեցիին առանց երզոյի, ոչ ամպ վերաշուէ առանց հողովոյ, ոչ ասեղջ գնդին եւ կամ գումարին առանց ժամանակի, ոչ արեգակն փոխաբերեալ երջանակի առանց օտրական օդոյ ...

(Բան ԵԻ., Բ.)

Թարգմանութիւնը. —

Ինչպէս որ առանց սանձակալի ձին անխոտ, անգայք չի գնա երբեք, եւ աննաւավար նաևն ալիւնեով չի սուրա առաջ, ինչպէս արօրը առանց մանկալի Եերկ չի կատարի հաւասարապէս, ամոլի զոյգերը առանց հօտալի չեն ընթացակցի հասց ու հումաբայլ, ինչպէս ամպերը չեն չլուս բնաւ առանց հողմերի, եւ անժամանակ չեն ցրնդում անցողիքն ու չեն գումարուում, արեգակն առանց օդի օտրեղէն երջանակայոյճն իր չի բոլորում ...

Այստեղ բանաստեղծ Նարեկացու ամէն մէկ տաղը մի տարբեր գործողութիւն ու շարժման տեսարան է որ կը ներկայացնէ: Երկվար եւ սանձակալ, նաւ եւ զեկակալ, արօր եւ մտնակալ, եղներ եւ հօտաղ, ամպ, հողմ, աստղեր եւ ժամանակ, արեգակ եւ տարբերից բաղկացած օդ, այս բոլորը առանձին առանձին վկայութեամբ, տարբեր աշխարհներ ներկայացնող բառերը, բանաստեղծի ուրոյն ստեղծագործական կամքով ի մի խմբուելով միևնոյն առիթով, լեզուն դարձնում են ծիածանափայլ:

Նարեկացու բերած օրինակը նոյն ժա-

մանակ ցոյց է առիտ Նարեկի լեզուի մի ուրիշ կարեւոր արժանիքը: Այդ նրա ստացուածքներով հարուստ լինելն է: Առհասարակ Նարեկացին միշտ գրում է սեռաւորութեամբ, նրա խոհերի եւ զգացմունքների լեզուական արտայայտութեան ճանաչման հիմնական տարրը հանդիսանում են գլխաւորաբար ստացուածքները, թեւեւ խօսքերը: Վերեւում բերուած ու յիշուածն ամէն մի տողը միատեմանակ մի գեղեցիկ, ամբողջական իմաստ արտայայտող ստացուածք է, նոյնիսկ ժողովրդական սգիով յօրինուած:

Եթէ Նարեկը ծայրէ ծայր կարգանք, կը տեսնենք թէ ստացուածքի արժէք ունեցող արտայայտութիւններով լեցուն են նրա էջերը: Այսպէս կը ներկայացնենք մի քանիսը. «կարիք անթուկից եւ պատահարք ամենազրաւք», «բնականութիւնք կռեղէն եւ անձրեք ուժգնակիք», «ճամնիմ ի բոյնն աղաւնի եւ անդուստ ագուու ելանեմ», «հիմն արկանեմ եւ ոչ գլխաւորեմ», «զայլս խրատեմ եւ նս ինքս անփորձ եմ», «ոչ կենացն փափաքանօք, այլ կենարարին յիշատական միշտ ճենճերիմ»: Առհասարակ ստացուածքները Նարեկում նոյնպէս խմբուում են եւ առանձին ամբողջական հատուածներ կազմում, բանաստեղծի տրեւեալ խոճը կամ զգացմունքը բազմակողմանիօրէն բացայայտելու համար:

Նարեկի լեզուի գեղեցկութիւնները անշուշտ չեն սպառնում նշուած երեք կողմերով: Իրրեւ զեղարուեստական մի լեզու, այն սենի բազմաթիւ այլ արժանիքներ, որոնց թեւում շատ կարեւոր է եւ պէտք է յիշատակել բառերի շարադասութեան շտեմնուած ճկունութիւնը:

Համախարհային գրականութեան մէջ Նարեկացին մտրկույնօրէն դրականի ու կատարեալի մեծագոյն երգիչներից է, մի բան որ ընկած է մեր արդիական գրական-նութեան նշանաւոր գէմքերի՝ Նարեկացու նկատմամբ ունեցած հիացմունքի հիմքում: Վասնան Ողբերգութեանս պոեմի գեղարուեստական անընդգրկելի մեծութեան տանձնատպանուս ամպայոցներից է մեր արդի գրականութեան վրայ թողած մեծ ազդեցութիւնը: Նրանից սովորել եւ ներշնչուել են ոչ միայն միջնադարի, այլև նոր ժա-

մանակների հայ պոեզիայի խոշորագույն գէտքերը՝ Թումանյանը և Խոսեակեանը, Սիսամանթան, Վարուժանը և Մեծարենցը, Տէրեանը և Չարենցը:

Գրիգոր Նարեկացին սրպէս երած իշտ գարգացման վիթխարի մղում է առաջ բերել, նոր շունչ ու նոր կեանք հաղորդել հայոց միջնադարեան մասնագիտացուած երգարուեստին յատկապէս իր առդերով, որոնց երած շտական բաղադրիչներում առաւել վճռականութեամբ ու շատ ազդեղաւոր կերպով յաղթանորուած են շարականների հին, ութ-ձայնի դրութիւնը, կապուած եղանակների կազմութեան, տուեալ պոստաշրջանի համար արդէն քարացած ձևերը: Ընդհանրապէս նախատեսուած շիինելով պարտադիր նպատակների համար, թաղերը ազատ են մնացել հեղեցական կանոնական մտածողութիւնից և աւելի շատ անկաշկանդ կերպով (քան, օրինակ, շարականները), հարստացել ժողովրդագագուսանական աշխարհիկ արուեստից եկող կենսունակ տարրերով: Տողերը որպէս զարդոյւորուս երգի տեսակներից մէկը, անցել են զարգացման աւելի քան հազարամիայ ուղի, որի վրայ գրանց յատկանիչների բիւրեղացման վճռական նշանակութիւն ունեցող աստիճանը պարզ նշմարելի է Ժ. դարում, և առաջին հերթին, Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւններում: Վերջիններիս, որպէս երած շտա-բանաստեղծական ամ-

բողջական իրողութիւնների, վերականգնման համար ժամանակին շատ մեծ աշխատանք է տարել մեր անմահանուն կոմիտասը, և առել դրանցից չորսի մեծարժէք ընթերցումները: Դրանցից են ոգեշունչ-հուստորական ՇԵՍ ձայն զառիւծուն» և քնարական զեղումներով պատմողական ՎՍԱՅԸՆ այն իջանէր» տողերը:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնը անմահ է, նրա ՎՄտեսան Ողբերգութեան» պոեմը մարդկային ստեղծագործական հնարաստութեան մեծագոյն արտայայտութիւններից մէկն է:

* * *

Սոյն աշխատութեան պատրաստութեան ժամանակ և շքի առաջ ենք ունեցել հետեւեալ հրատարակութիւնները. —

- 1) ՎԻԻԲ Այոթից, Մրբոյն Գրիգորի Նարեկացոյ աւարեալը, Կ. Պոլիս, 1700:
- 2) Վերեկ Այոթից, աշխատասիրութեամբ Տեոսն Հ. Գարբիէլի Աւետիքեան, Ս. Ղազար, 1827:
- 3) ՎՄրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ Վսնից Վսնականի Մտեսնագրութիւնք, Վենետիկ, 1840:
- 4) ՎՆարեկ, Այոթումեսեան Ս. Գրիգոր Նարեկացոյ, արգի Հայերէնի վերածեց Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան, Գահիրէ, 1926:
- 5) ՎԳրիգոր Նարեկայի, Տաղեր», Երեւան, 1957:

(Վերջ՝ 2)

ԲՈՒԻԲԷՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ



Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Պ Ա Տ Մ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն, Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ ՍԵԲԱՍՏՈՅ

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Յարգապարզ լիարժեք եւ բազմադիմի ստաւապանաց Տեառն Պետրոսի կարուղիկոսի եւ մահուան նորին 'ի Սեբաստիա: (Մտքսրեոս Ուրհայեցի. Կիրակոս Պատմ.: Թիւ ՆՁԸ):

'ի սմին ժամանակի մեռու Արաւ թաղաւորն կարուց կացեալ յիշխանութեան յամս 45, և թաղաւորեաց 'ի տեղի նորին Դոգիկ՝ որդի նորին, այր զգոնածիտ՝ միանգամայն և քաջ, Լուեալ Պետրոսի կաթուղիկոսի զմանն Արաւայ՝ ել ի Սեբաստիա և գնաց 'ի կարս և ոնտի չաղալ Անի քաղաք, և ետես զի թաղաւորն Անւոյ Յովհաննէս և նախարարքն Հայոց ընդ տկամբ հայէին 'ի նա, վասն այնչափ ժամանակս ընկելոյ նորա՝ 'ի Սեբաստիա, վասն այնորիկ ելեալ զնաց 'ի վասպուրակոն Աշխարհ և եկաց անդ առանձնացեալ իբրև զմիայնակեաց մտա չարս, 'ի Ջորոյ վանս, զոր շինեալ էր Ներսէսի Հայրապետին: Ընդ այս զժողովարացեալ արքային Յովհաննէս և նախարարացն Հայոց՝ խորհեցան զայլ ոք նստուցանել կաթուղիկոս, բայց երկնչէին թէ զուցէ Պետրոս կաթուղիկոս մ'չ հրամարեացի յիշխանութենէն և ծաղեցի երկարակուլութիւն և երկու լիցին Հայրապետք. վասն որոյ դաւանանութեամբ գրեալ կոչեցին զնա գալ և վարել զիշխանութիւն իւր, Եւ իբրև եկն նա և ետես 'ի Քաղաքն Անի առ 'ի կալ անդ, յղեցաւ և եղին զնա յարգելանս 'ի մեծ մտւորն Բշնի, ուր եկաց ամ մի և ամիս հինգ և եղին կաթուղիկոս զվանահայրն Սանահնի զԴիոսկորոս: Բայց մ'չ ընկալան երեւելի կոչակոչողուք մեր և մ'չ յիշեցին զանուն նորա 'ի Պատարագին և մ'չ թողին ձեռնարկել զքե կոչակոչողս, և 'ի ձեղն նորա զմեռն 'ի գործել զանարժանս՝ ժողովեալ կոչակոչողուց և վարդապետացն մերոց իբրև չարս հողար անձանց (ՆՁԴ), և գատեալ զԴիոսկորոս՝ գտին զնա պարտաւոր, վասն որոյ ընկեցեալ զնա՝ 'ի պատուոյն

և պատուեալ զքոչ նորա արքայեցին զնա 'ի վանս իւր, և հաստատեցին զՊետրոս կաթուղիկոս վերստին յԱթոռ Հայրապետութեան (ՆՁԵ-ՆՁԶ):

Ընդ այս ժամանակս, մեռու Դաւիթ արքայ Արծրունի, որ նստէր 'ի Սեբաստիա՝ որդի Սենեքերիմայ՝ կացեալ յիշխանութեան տմա տասն, և նստաւ 'ի տեղի Դաւիթ՝ եղբայր նորին Ատովմ և Արուստան՝ եղբայրս օգնական էր նմա և միւս եղբայրն կոստանդին մեռեալ էր: Այս Ատովմ արքայս Սենեքերիմեան՝ ըստ գրեւոյ Ուրհայեցւոյն, էր լցեալ սուտքինութեամբ և արգարութեամբ և Ս. վարուք 'ի Քա. - Յո., զարդարեալ հեղուքեամբ և քաղցրութեամբ, սղորմած 'ի վերայ տառապելոց, դարմանիչ սղջատաց և յոյժ սիրելի կրօնաւորաց դասուն, շինոյզ կենդեցւոյ և բազմազունից վանորէից (ՆՁԷ):

Յաջորդ ամին՝ յարուժ թաղաւորեաց Ատովմ իշխան, ոմն Հայոց որ եկեալ էր ընդ Սենեքերիմայ՝ 'ի վասպուրակոն աշխարհ՝ 'ի Սեբաստիա, նախանձեալ ընդ պատիւ նորին՝ ել 'ի Սեբաստիայ ընտանեօքն և գնաց 'ի կոստանդնուպոլիս առ Գ. Միքայել կայսր և բազմժ չարիս խօսեցաւ զնոցանէ: ձԱպատմութեալ՝ տէ՛ 'ի քէն խորհեալ են, և պատրաստեալ վիշտս հասուցանել Տէրութեանցդ, որոյ վտան և իմ մեկնեալ 'ի նոցանէ եկի յոտս Ջերու: Ջայն լուեալ կայսրի, հուստաց զի երեւելի էր չարախօս այրն և տառեկաց զորս 'ի Սեբաստիա 'ի վերայ Ատովմայ և Արուստանւոյ, պատուէր տուեալ զորպետին, զի թէ՛-Վամիցին գալ 'ի կ. Պոլիս, մի՛ աայցն պատերազմ ընդ նոսա. և եթէ՛ ո՛չ կամիցին գալ՝ պատերազմեալ յաւարի առցէ զաշխարհ նոցա և կինդանոյն կալեալ, տարցէ զնոսա 'ի կ. Պոլիս: Լուեալ Ատովմայ և Արուստանւոյ, երկնան յոյժ և կային 'ի տարակուսի, և սպաս հաստատեալ 'ի միտս իւրեանց՝ երկոքին եղբարք ելին 'ի Սեբաստիա և զնացին 'ի կ. Պոլիս, և յանդիման եղեն կայսերն, արկին

աղաչանս առաջի նորա՝ եթէ ինչ ծանր կայսերական մեծաւթեանդ, երթիցուք 'ի միտան 'ի գերեզման վաստի կայսեր, և իբրև չոգան մնդք հանգերձ կայսերաւ՝ հանին առաջի նորա զնսմակն զոր տուեալ էր վաստի ցՍենեքերիմ՝ ցհայր իւրեանց՝ 'ի ժառանգութիւն երկրին Սեբաստիոյ, և ընկեցեալ զայն 'ի վերայ գերեզմանին վաստի ասեն. «Է՛րո խառը բնդ զսա և զու աներ զմեզ տշխարհն քո, և այժմ դա՛ս արա մեզ, ա՛վ Հայր մեր, զի իշխանք քո սպառնացեալ են 'ի վերայ մեր կորուստանել զմեզ և ա՛ռ զաշխարհն մերձ: Զայս լուեալ կայսերն, զարմացու յոժժ ընդ բանս նոցա, և յետ այնորիկ բազում թագաւորական զարդուք զարգարեալ ըզնստա և մեծաշուք փառօք յազարկեաց զնոսա յաշխարհն իւրեանց՝ 'ի Սեբաստիա Յաւաւրս յայտարիկ մեռաւ Յովհաննէս թագաւոր եղբայր Աշոտայ, որ նստէրն յԱնի, և վասն անմիտքանութեան նախարարացն մերոց՝ մնաց երկիրն ամա երկուտ առանց թագաւորի, և յետ երկուց ամաց, վահրամ սպարապետ Պահլաւունի և ազգակիցք իւր պատգամաւորեալ առձիմեանս, ժողովեցան 'ի քաղաքն յԱնի, առ Պետրոս կաթողիկոսն և ետուն օժիւ ըզ-՛հագիկ՝ որդի Աշոտայ, եղբոր՝ Յովհաննէս արքային՝ թագաւոր 'ի վերայ Ազգիս մերոյ: Զսմանէ բազում գովութիւնս գրեն պատմիչք, «էր, ասեն, յոժժ գեղեցիկ և վայելչահասակ, և ըստ բնածիր խառնըւածոյն վեհնամն, և ըստ ուժոյ տառնութեան կոր, և ըստ կռուավորութեան յալոզ, զչտաս, խոհական, և ըստ գնացից վարուցն առաքինի՝ քոցի դաւաճանութեան նննգամիտ նախարարացն մերոցձ: Յետ երից ամաց, կայսրն Մամնախոս յափրշտակեաց զԱնի և զամենայն Տէրութիւնսն՝ 'ի ձեռաց Գագիկայ թագաւորին, և հրամայեաց Ասիտայ իշխանին յԱրեւելից՝ գնալ զօրօքն և տիրել Անտայ և ամենայն թագաւորութեանն: Եւ նա գնացեալ տիրեաց և յերկրորդ ամին փոխանակ Ասիտայ՝ առաքեաց վերակացու յԱնի զոմն կոմենասանուն, և նա հեկեալ և անարգանօք վարեալ ընդ Պետրոսի կաթողիկոսին սկսուիս առուել գրել ամբաստանութիւն ըզնմանէ առ կայսրն, որպէս թէ նա կոմիցի

ապօստոմբեցուցանել զՀայս 'ի Յունաց և զի կամէր բառնալ 'ի քաղաքէ անտի զԱթոս կաթողիկոսութեան. վասն որոյ խաբանօք իմն եհան զնա յԱնտայ, տակելով «Հրամայեալ է քեզ 'ի թագաւորէն՝ գնալ 'ի գաւառն կարնոյ և նստիլ 'ի մեծ քաղաքն Արծնոյ: Եւ Հայրապետն զնաց յԱրծնի, և անտի հրամանաւ կայսերն՝ 'ի տօնի Զբօրնեացն կալեալ տարան և եղին 'ի բերդն Քաղտոյառիչ: Յետ կալոյ նորոյ յարգելանս մինչև ցԶատիկ, տեղեկացեալ կայսերն անմեղութեան Սուրբ Հայրապետին, ետ տանիլ զնա 'ի Կ. Պօլիսու Գնացին ընդ նմա և երեւելի եպիսկոպոսունքն և վարդապետքն մեր, որոց զլխաւորքն էին հնգետասն՝ յորոց մին էր և Եղիշէ Արքեպո.ն Սեբաստիոյ, և իբրև յանդիման եղին Մամնախոսի կայսրն՝ Աթոս սոկի փառազարդեալ նստոյց զՀայրապետն բազում մեծարանօք, և 'ի ժամ մեկնելոյ նորա անտի, Եղիշէ Եպո.ն Սեբաստիոյ բուռն եհար զԱթոսոյ նորա, որպէս թէ կամիցի բառնալ զայն անտի, և 'ի շփոթել արքունի սպասաւորացն եհարց կայսրն զպատճառս իրացն, յայնժամ պատասխանի ետ Եղիշէ Եպո.ն և ասաց. «Ե՛րտասցէ Տէր իմ Արքայ, զի յԱթոսն յոր բազմացաւ սուրբ Հայրապետն մեր՝ չէ՛ արժան յայլում ումեք նստիլ ի նմա: Ժպտեալ կայսեր, հրաման ետ սպասաւորաց իւրոց, զի առեալ տարցեն զայն աթոս յօթևանս ընակութեան կաթողիկոսին, զի նա միտայն նսացի 'ի վերայ նորա և ո՛չ այլ ոք: Յետ կալոյ նորա քան զամս երիս Ասովմ Արծրունի՝ որդի Սենեքերիմոյ՝ թագաւոր Սեբաստիոյ, միտքանեալ ընդ Գագիկ արքային՝ որ կայր 'ի վտարանդի առ Յոյնս, երաշխաւոր եղև առ կայսրն վասն կաթողիկոսին, և հանեալ զնա 'ի քաղաքէ անտի՝ տարաւ 'ի Սեբաստիա և պահեաց տա իւր ամա երկուս, և ասաց ետ նմա տեղի բնակութեան 'ի վանս Սուրբ Նշանի, զոր բազմանար վայելչացուցեալ էր, յոր եկաց անդէն 'ի վանս Պետրոս Գնադարձ կաթողիկոսն ույլևս ամա հինգ: Եւ հասուեալ յաւաւրս ձերութեան Պետրոս կաթողիկոս Գնադարձ կոչեցեալն՝ եղբայր Խաչկայ առաջնոյ՝ վայսմանեցու 'ի Սեբաստիա՝ 'ի վանս Ս. Նշանի, և թագեցաւ

ՀԱՄԱՌՈՍ ԵՒ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱԿՆԱԼԻԿ
ՄԵ՛ ԵՒ ՔՈՅՐ ԵԿԵԼԵՑԻՆԵՐՈՒ ՏՕՆԱՅՈՅՅԻՐՈՒՆ ՎՐԱՅ
ԵՒ ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱԻԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Տօն Անուանակոչութեան Տեառն. — 19
 Յունուարին (Նոր Տօմարով՝ 26 ին) կա-
 տարուող այս տօնը մեր Յայրենասիրքին
 մէջ նշանակուած է նաեւ արդէս շրջապատ
 ութօրեայ թիփառութեան Տեառն մերոյ
 Յիսուսի Քրիստոսի: Ասկէ է որ ժողո-
 վուրդը զայն կը ճանչնայ իբրև «Ծնըն-
 դեան Ութօրէքը»: Իսկ առժիկ դասա-
 կարգը զայն կը կոչէ «Տօն Գլուխ»: Այս
 կոչումը շատ հաւանաբար արդիւնք է այն
 իրողութեան, որ, ինչպէս մեր նախորդ
 յօդուածով ըսինք, այլ եկեղեցիներ զայն
 կը տանաթմբեն տարեմասին: Լեւուրար
 ան կը դառնայ առաջին տօնը տարուան:
 Յունուարի 26ը Հայ Երուսաղէմի փռուա-
 ւօր օրերէն մէկն է, և միակ օրը տար-
 ուան մէջ սբ առաւօտեան ժամերուն
 Միաբնութիւնը շարաշարժով մուտք
 գործէ Ս. Յարութեան Տաճար, սբ հան-
 դիտար Ս. Գառարազ կը մատուցուի
 Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: (Մեր
 միւս շարաշարժները, թիւով վեց, կը
 կատարուին կէսօրէ ետքի ժամերուն և
 Շարաթ օրերուն: Յայնք երկիցս առա-
 ւօտեան «Հրաշափառ» կը կատարեն, մէկը
 Յայտնութեան տօնին — մեր Ս. Ծննդեան

տօնին — իսկ միւսը Հոգեգալտեան օրը,
 իսկ Հատինաց շարաշարժները միշտ ու
 միայն կէսօրէ ետքի ժամերուն տեղի կ'ու-
 նենան): Վանք դարձին, Հայոց Թաղի
 մուտքէն, Միաբնութիւնը տօնին շարա-
 ձրտանայ Գառարաքտանի մեծ դահլիճը,
 սբ Գառարաք Սրբազանը կը նստադասէ
 «Տնօրնէք» արարողութեան, երկու ե-
 պիսիպոսներու հետ օրնեցող Ս. Աթոս
 ուստ արարքները — հասցին սբ գինիին
 հետ Մառախին մէջ գտնուող պարէնի և
 ընդդէմ իբրեքանչիւր տեսակէն —
 Գառարաքը դարձեալ նարինջ կը բամբէ
 ներկաներուն, սրմէ ետք Միաբն Հայ-
 րեր, Ծննդեան շարականներու երգեցու-
 ղութեամբ և ժամօրնեցող Հօր զլիաւարու
 թեամբ, կ'երթան նոյն արարողութիւնը
 կատարելու վանուց Սեղանատան մէջ և,
 ի միջի այլոց, կ'օրնեն հերիսէն, զոր
 սովորութիւն եղած է պատրաստել այդ
 օր իբրև կէսօրուան ճաշ:

Մտնելով Յովնանու կարագեթին. — Այս
 տօնը, որ կը փակէ Աւագ Տօներով սկիզբ
 առած Ծննդեան տօնաշարքը, տնժիշակէս
 կը յաջորդէ Անուանակոչութեան տօնին:
 Իսկ եթէ Յունուարի 14/27ը զուգադիպի
 Կիր., Գշ. կամ Ուր. օրուան, կը կատար-
 ուի օր մը ուշ: Բացառութիւն կը հազմեն
 այն տարիները, որոնց Տարեդիրը ցոյց
 կու տայ Ա, Բ, Գ կամ Գ, երբ Առաջաւո-
 րաց պահքը վրայ հասած ըլլալով, տօնը
 կը յետաձգուի մինչև պահքի աւարտումը
 և կը կատարուի Շարաթ օրը, զբաւելով
 տեղը Ս. Սարգսի տանին, որ իր կարգին
 երկօրեայ ստուամով կ'անցնի Երկուշաբթի
 օրուան և տեղ կը բռնէ Ատոյմեանց հող-
 քին: Այլ եկեղեցիներ զայն կը կատարեն
 Յունիսի 24 ին (Յոյնք հոս Յուլիոսի 7 ին),
 Քրիստոսի Ծննդեան տօնէն վեցամսեայ
 հետաւորութեամբ, ըստ Աւետարանին սբ,

անդ արտաքոյ եկեղեցւոյն, յետևոյս օրրոյ
 սեղանոյն՝ ի կողմ յարեկիցք՝ պատեալ
 պտուղաւ, մաքուր շիրիմ նորո: Կալաւ
 սա զաթոռ Հայրապետութեան՝ հանգրծ
 վտարանդութեամբ ընդ ամս 40 կամ 39
 և ա՛րիս վեց:
 Ասա՛ ՚ի վանս Սուրբ Նշանի, առաք-
 եաց առ Փրիգոր Մաքիսորոս՝ զՎառ-
 զանս ակամակապ, և զսկիբ՝ հարտարազարծ
 և զանս Սիւռոնի՛ նուիրեալ նմա և
 զսովեսա Խաչի՛ սասանաւոր սողիւք:
 ՏԻՐՐԱՆ Ս. ՔԻՐԻՇԵԱՆ
 (Շարունակելի՛ 2)

խօսելէ ետք Մկրտչին օր՝ Զագարիայի տրուած աւետիսի մասին, կը շարունակէ սապօ. «Ըն յամսեանն վեցերորդի աւագեցաւ Կարբէլէ Լրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլիսացոց՝ որում անուն էր Նոյարթէթ» (Ղկս. Ա. 26), «տալու համար ցնծագին աւետիսը Ս. Կոյսին, Տարօրինակը այն է որ մեր Եկեղեցին ոչ միայն այս տօնը խախտած է իր բուն ամսաթիււնէն, այլև Յայմուռուքի մէջ զայն նշանակած է 11 Յուլիոսի գիմաց, փոխան Յ Յուլիոսին, որ մեր Մինդեան տօներէն հաւասար հեռաւորութեան վրայ գտնուող օրն է, Թէ՛ Լատիններ և Թէ՛ Յոյներ այս տօնը կը հանդիսաւորեն իր պատմական սեղանոյ վրայ, էյն-Քէրիմ կոչուած և Երուսաղէմի հարաւ-արեւմտեան կողմը գտնուող արուարձանին մէջ, զի լեռնակողմն Յուզայ», ըստ Աւետարանական բացատրութեան, «ուր անին վանք և կէկեղցի: Ռուսերն ալ մտաւկայքը, բարձունքի մը վրայ, անին հռչակաւար մեծնստան մը: Լատինք անին հոս ուրիշ կեկեղցի մը ևս, Ալյաքուքեան Եկեղեցի» (Church of the Visitation) անունով, ի յիշատակ Տիրամօր՝ Եղիսարեթի տուած այրեցումէն (Ղկս. Ա. 39-56), «ուր ամէն փարսոյ Մայրիսի վերջին օրը հանդիսութիւն կը կատարեն. — Մեր մօտ մեծ այս տօնին օրը Ս. Գառարազ կը մատուցուի Մայր Տանարի Աւագ Խորանին տղակողմը գտնուող Ս. Յովհաննու կարապետի խորանին վրայ: Իսկ տօնը Շարաթի զուգագրիպած ասորիներուն, հարց կը ծագի Թէ չմտարձի շարականի երկրորդ մասը զի քէն հայցնմ՝ մը պէտք է ըլլայ Թէ Վերինաքաղաքցին, էջմիածին համաձայն է վերջինին, մինչ Անթիլիոս կը միտի առաջինին: Իրական ալ զժուար է սխալ նկատուի մին կամ միւսը, քանզի Սուրբին աւաւնեալ ըլլալուն անհարկութիւնը կայ մեր Շարակնոցին մէջ, «ուր կ'ընուի Քնթատաքիոց է սկիզբ և մարգարէից լրումն», մինչ Վերինաքաղաքցին ուղղակի սուրբին կեանքէն խօսող շարականն է: Այս պէտք շփոթէ է նաև մեր Տօնացոյցին մէջ: Այս երկուսութիւնը կը արիբէ նաև կաղանդի պարագային, երբ օրը ըլլայ Շարաթ կամ Կիրակի: Սխալ է, այդ երկու պարագա-

ներուն ալ, սովորաբար այդ օր երգուող և նարգութեան գաղափարը իր մէջ խաղանող Քնթատին նորագեցերձը երգել: Ճիշդը այն է, որ Շարաթի հանդիպած ասորիներուն կիրակնուաքի յատուկ Աուրբ կս տէր և Երկնաքաղաքցինձը, իսկ Կիրակիի հանդիպելուն՝ օրուան ձայնէն Յարութեան շարական երգուի: Մնաց ըսել որ Արեւմտեան Եկեղեցիներ Սուրբը կը ճանչնան իբրև Յովնանի Մկրտչի (St. John the Baptist), մինչ մենք, Յունաց նման (Prodromos), շեշտը կը դնենք Կարապետի բռնին վրայ:

Յովհաննու Մկրտչի ծննդեան տօնին յաջորդող սրբոց տօները կը կոչուին ապալից տօներ, Տօնացոյցին մէջ մէկ տօնէն միւսին անցման տան և ապա բուռերը կրկնուելուն պատճառաւ: Այդ տօներէն զբաւուած միջոցը կ'երկարի կամ կը կարճնայ համաձայն Ս. Զագարի Թուականին: Ուստի անոնցմէ ոմանք կ'իյնան երբեմն ձմրան և երբեմն ալ ամառն եղանակին (վարդավառէն յետոյ): Բնորովին հաստատուն ձև մը չունին անոնք: Երբեմն ամսուան մը վրայ տարածուող (ամառը կամ ձմեռը) և յաճախ կ'իսուող այդ տօներէն հոս նկատի պիտի տանենք ասոնք, որոնց Առաջաւորաց Բարեկենդանէն առաջ յիշատակուող յամախաղէպ է: Պետրոսի հայրապետի, Վլասոյ եպիսկոպոսի և Աբիսղոմայ սարկաւազի. — Երկրորդին է միայն որ հանդիպեցանք օտար Տօնացոյցներուն մէջ: Լատինաց մօտ 3 Փետրուարին յիշատակուող այս սուրբին համար ըուտած է. «Վլասո եպիսկոպոս Սերաստիոյ որ ի շայտասուն»: Ըստ Լատինական աւանդութեան, ան հուրճքի կողորդիցաւորը բուժելու շնորհը սուրբ: Յունաց մօտ կը տօնուի Փետր. 11/24ին:

Անտի, Տրիփոնի, Պարսուսայ և Ռեոփրիոսի ճգնաւորացն. — Երբեմն վերջին երեքը կ'անջատուին առաջինէն և Ս. Անտոնը, որ նկատուած է հիմնադիրը անպատական կեանքի (յճիպոսո) և որուն յիշատակը այլ Եկեղեցիներ կը կատարեն Յունուարի 17ին (Յոյնք հոս 30ին), կը տօնուի առանձին: Ճշմարտեաց խտտակեցութեան անգերազանցելի ախպար մը նկատուած այս սուրբին տօնը խաչանիշ

կը կրէ Յունաց Օրացոյցին մէջ, իսկ Ղպախք անոր անունով կոչած են Երուսաղէմի իրենց ժայռովանքը. եկեղեցին ու վարժարանը: — Գալով միւսներուն, միայն վերջինին հանդիպեցանք օտար Տոնացոյցներուն մէջ, 12 Յունիսը անհետաւով իբր թուական: Դարձեալ բարբառաբերկրին խորհրդը հզնած Ս. Ոսկրիսոսի անունով Յոյներ փոքր վանք մը ունին Երուսաղէմի հարաւակողմը, «Հիննթա» կոչուած ձորակին դիմաց, կառուցուած ըստ աւանդութեան այն արտին վրայ, զոր քահանայապետեր գնեցին Յուդայի իր Տէրը մտանկուել իբր վարձք սոսցած և յետոյ զղջումով իրենց վերագործուցած կրեանուն արձաթով, օտարներուն իբր գերեզման ծառայելու համար (Մաթ. Իէ. 7-8): «Ակեղաճա» անունով ծանօթ և Արարներու կողմէ «Տէյր էլ-Շարատ» (Իրախանականք) կոչուած այս վանքի տանախմբութեան օրն է Յունիսի 25ը:

Թեոզոսի բազիլիկայի եւ եօթն մանկանց եփեսոսի. — Մեր կարգ մը Օրացոյցներուն մէջ կը պակսի եօթն բաւը, իսկ մեր Գատարագամոսոյցին մէջ թագուորին անունը դրուած է յոգնակի — Թեոզոսից: Տարօրինակը այն է, որ Յունացի այս վեհակաթին — կամ վեհակաթներուն — անունը կարելի չեղաւ դանել Յունական Տոնացոյցին մէջ: Փոխարէնը դասնք վանանայր Թէոզոսի մը անունը, որ նոյն անձը չի կրնար ըլլալ անշուշտ և որ մասնակ մը հզնած է Յուդայի անապատի եզրին, Բեթղեհէմէն Երիզով առաջնորդող ճամբուն վրայ, ուր մինչև օրս դոյութիւն ունի իր անունով փոքր վանք մը, Deir el-Lbeydiyyeh կոչուած տեղացիներէն: Սուրբին անուն կարելի է հանդիպել, թէ՛ Յունաց և թէ՛ Լատինաց ժամ, 11 Յունուարի դիմաց: Աւելորդ է ըսել թէ Յոյնք զայն կը տանեն հոս 24 Յունուարին: — Գալով եփեսոսի 7 մանուկներուն, Յոյնք միայն կը կատարեն անոնց յիշատակը, այն ալ երկիցս, 4/17 Օգոստոսի և 22 Հոկտ. /4 Նոյմ. ին: Խաւմներն իսկ Գուրանին մէջ պնտարկութիւն մը ունին անոնց մասին, կոչելով զանոնք «Քարայրի բնակիչները» — Ahl el-Kahf:

Հայրապետացն Արամասի եւ Կիրդի. — Ուղղափառ դաւանութեան տառայան Աղեքսանդրոս Աթոռին այս երկու մեծագործ հայրապետներու յիշատակը մեր Եկեղեցին կը կատարէ միշտ Շարաթ օրով, որ Կիրակիէն ետք երկրորդ նուիրական օրն է եօթնեակին: Արդէն մեր Եկեղեցին մէջ, շատ մը մեծ հայրապետներու և կարեւոր սուրբերու տաներ կը կատարուին Շարաթ օրով, իսկ Երուսաղէմի մէջ Շարաթ օրեր ևս կը մատուցուի Ս. Գատարագ: Յունաց ժամ խաչանիշով շուուած այս տօնը կը կատարուի 18/31 Յունուարին: Լատինք առանձին կը կատարեն անոնց յիշատակը, առաջինին՝ 2 Մայիսին, իսկ երկրորդին՝ 9 Փետր. ին: Երէնք նաև թէ Յոյնք 2 15 Մայիսին կը կատարեն Ս. Աթանասի Նշխարաց փոխադրութեան յիշատակը:

Կիրակոսի եւ ձօճ (ուրա Յուլիսայի, եւ վլայիյն Գորդիոսի, Պոլիկոսոսի եւ Գրիգորիսի). — Երբեմն առաջին երկուքը կը տանուին առանձին, իսկ վերջին երեքը կը միանան սուրբերու ուրիշ խումբի մը: Լատինաց ժամ անոնց տօնախմբութեան թուականն է Յունիսի 16ը, իսկ Յունաց՝ Յունիսի 15/28ը: Միւսներէն Պողոթիսոսն է միայն որ կը յիշուի, այն ալ Յունաց ժամ, 9/22 Յունուարին: Կ'արժէ հոս յիշել թէ այս սուրբը, որուն Հռովմէացի կուսակալին կողմէ նահատակութեան օրտաւուչ դրուազը իր հանճարով անմահացուցած է Ֆրանոսցի թատերգակ Գորնէլլ, և զոր Ս. Աթոռոյ մեծանուն Գատարագներէն Թարգոմ Արքեպոս. Գունական վերածած է Հայերէնի, Հայազգի եւր, Փոքր Ասիոյ Մեկիտինէ քաղաքէն: Երուսաղէմի այժմու պարիսպէն դուրս, դէպի հիւսիս, Դամասկոսի դուռէն ոչ շատ հեռու, աստե՛նօք վանք մը ունեցած ենք յիշեալ սուրբին անունով, որմէ մնացած է խճանկար գողորդի մողայի մը և ուր զրօսաշրջիկներ կ'այցելեն ստէպ, հայ պահակի մը հոգածու հակողութեան տակ:

Վանանայ Գոլգոթացոյցն, Սեզիմեայ կուսին, եւ հօճնուր Փիլիպպոսի եւ ձօճ Կլոթեայ եւ երկուց եղբարցն՝ Սեզեայ եւ Ալիսոնի եւ երկուց Երեմիանցն. — Առաջինը երբեմն կ'անջատուի միւսներէն: Աւարական անագորոյն արչականքներս

ատեն իր հաւատքին համար նահատակու-
թեան պատիւ ընդունած հայ սուրբի Ազ-
գային սուրբերու պարարդային կարճ պիտի
ըլլամ, քանի որ անոնցմէ Ս. Գր. Լու-
սաւորիչը միայն անցած է այլ Եկեղեցի-
ներու Տօնացոյցին և քանի որ սրբոց
վարքագրութիւն մը տալ չէ նպատակը
այս յօդուածաշարքին:

Եւզիճնոսի, Մակարիոսի, Վաղերիոսի,
Գսկիցոսի եւ Ալկելիասայ. — Այս հինգէն
տառիին երկուքը կարելի եղաւ դանկ
Լատինաց Օրացոյցի Դեկտ. 20ի էջին
վրայ, իսկ վերջինը՝ իբրև ճմին 70 աշա-
կերտաց՝ — Յոյնք 72ի տեղ 70 կը գրեն
միշտ —, Յունաց Օրացոյցի Յուլիոս 14|27ի
էջին վրայ, Վատահ չնեք կրնար ըլլալ
սակայն թէ նոյն անձն են այս երկուքը:

Գրիգորի Աստուածաբանիճ. — Երբեմն
կը տօնուէր Աթանաս և Կիրիլոս Հայրասնոր-
ներու հետ միասին — միշտ Շարաթ օր:
Այլ Եկեղեցիներու մօտ Յունուարի 25ին
նշուած այս տօնը (Յունաց մօտ հոս ?
Փետր.ին) Օրթոտոքս Եկեղեցւոյ մօտ կը
կրկնուի հինգ օրեր ետք (30 Յուն. — 12
Փետր.ին), երբ յիշեալ սուրբը, Եկեղեց-
ւոյ ուրիշ երկու մեծ հայրապետներու՝
Բարսեղ Կեսարացւոյ և Յովհան Ոսկերե-
րանի հետ — երկուքին միջև — կը յի-
շատակուի: Այս երեքը կը կոչուին Վերեք
Աստղերը, Գրիստոնէական Եկեղեցւոյ
երկնակամարին վրայ փայլող անշուշտ:

Տեառնըմգաղսք կամ Տօն Քրտասնոր-
եայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն. —
Նախ քան Ջատկի հետ կապուած տօներու
մասին խօսելը, խորտանք շարքը մեր
Տօնացոյցին և խօսինք այս կարեւոր տօնի
մասին, զոր շքեղօրէն կը հանդիսաւոր-
ուի մանաւանդ մեր Եկեղեցւոյ մէջ ամէն
աարեան փետրուարի 14ին (հոս՝ 27ին),
այնքան որ, Տաղաւար տօներու նման,
նախորդ երկկոյեան կը կատարենք Հսկման
արարողութիւն — առաջինը՝ տարւոյն, 5
ամիսներէ՝ այսինքն Ռաշվերացէն ետք —,
երբ քանի մը ժամեր առաջ, նախատօնակի
աւարտին, կատարած կ'ըլլանք եղանակին
առաջին և և Անդառտանձը, դարձեալ ա-
ռաջինը՝ 5 ամիսներէ՝ այսինքն Ռաշվե-
րացէն ետք: Ժամերդուութեան տանն, Կի-
րակմուտքի յատուկ շէնքս զուարթն ալ

կ'եղանակուի — այդ բացառութիւնը կը
կրկնուի նաև Աւագ Ուրբաթ օր, Քաղման
նախատօնակէն առաջ — իսկ Անդառտա-
նձն — որ բացաւար կը Վնդատուի
նախատօնակէն ետք — յետոյ տեղի կ'ա-
ննայ մոմավառութիւն: Ժողովուրդը ի
ձեռին ունեցած, կամ աւելի ճիշդը, մա-
նուկներուն ձեռքը տուած մոմերը կը
լուցէ ընդհանուր և հոգեւոր խանդավա-
ռութեան մէջ, մինչ դպիրներ կը սկսին
երգել Վերիտանա փառաց թագաւոր քաղց-
րահունչ տաղը: Նման խանդավառութիւն
մըն ալ կը սպասէ ժողովուրդին գիշեր-
ուան մութին, Հսկուկէն անմիջապէս յի-
տայ, երբ մոմերու տեղ հսկայ խարոյկ մը
իւր բոցերը երկինք կ'առաքէ ժառանգա-
ւորաց նախկին վարժարանի մարդուչա-
շուէն, պայմանաւօր օր իր արտօնութիւնը
ոտացած ըլլայ միջնուրբային պայման-
ներէն(*), Հեթանոսական օրերէ եկած այս
սովորութիւնը բոլորովին հաշտ չի կրնար
անշուշտ ըլլալ Եկեղեցւոյ վերին իշխանու-
թեան հետ, սրուն համար Ս. Էջմիածնի
Օրացոյցը կ'ազգարարէ. Վնդուի է շրջելն
զհրով: Տօնի առաւօտուն, հանդիսաւոր
Ս. Պատարագ կը մատուցուի Մայր Տաճարի
Աւագ Սեղանին վրայ, ուր զետեղուած կը
Քեան նախորդ երկկոյ հանդիսապետ Սըր-
բազանն վառուած երեք մեծ մոմերը: —
Այլ Եկեղեցիներ փետր. 2ին կը կատարեն
այս տօնը (Յոյնք հոս 15ին), որ Լատի-
նաց մօտ կը կոչուի նաև ՎՏօն Մաքրու-
թեան Սուրբ Գոյսին (Purification of the
Blessed Virgin), երբ կ'երգեն Տիրամօր
ձօնուած օտղեր, ճիշդ ինչպէս մենք ալ
Աստացուքի տեղ ՎՄայր սուրբը կ'եր-
գենք այդ օրուան ժամերգութեանց ըն-
թացքին, իսկ Յոյնք տօնը կը հանդիսա-
ւորեն հոս ՎՄայրէձ: — Տիրուհոյ —
կոչուած վանքի մը եկեղեցիին մէջ: Այս
աւանդութիւնը կու դայ Հին կատարա-

(*) Հետազոտարան և գիտել տալ, որ
մեզմէ զատ Էրեւանի ունին միայն խարոյկա-
ռութեան սովորութիւն մը, զոր կը կատարեն
Մայրն ամսուն — անոր համադաստարին ուղ
իրենց իյար ամսոյ 17-18ի գիշերը: Դիտելի է
որ իրենց ալ տանի հերոսը — Նիմօն Պար Ե-
խայ — անուանակից է Տեառնըմգաղսքի ե-
ղեցութեան աւագ զերակատար Ծերունիին:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԿԱՆ ԱՑ

ՄԱՏՆԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՆԻՔ ՇԱՐԱԿԱՆ ԱՑ ՍԿՁԲՆԱԻՈՒՐՈՒԹՅԱՆ

Շարականների սկիզբը գրուած է հինգերորդ դարից, մեր բարոյական և մտաւար լուսաւորիչների — Ս. Սահակի և Ս. Մեսրոպի և Թարգմանիչների ձեռքով, որի մասին մենք ցուցումն ունենք մեր մատենագիրների մէջ: Այս մասին իւր տեսակում աւելի ընդարձակ տեղեկութիւն մենք գտնում ենք վարդաւն Բարձրբերդու, հիբրակոս Գանձակեցու և Ուսպելեանի թով:

հիբրակոս Գանձակեցին թուելով մի շարք անուններ հինգերորդ դարու Թարգմանիչներից՝ Ս. Սահակ, Ս. Մեսրոպի, Յովսէփ, Յովնան, Ղևսնդ, Սահակ, Մովսէս քերթողանայր, Մամբրէ, Նշնիկ, Կորիւն, Նղիշէ, Գալթ անյաղթ փիլիսոփայ, Յովնանէս, Աբրահամ, Արձան, Մուշեղ, Խոսրով, Ղազար, Ստեփաննոս, աւելացնում է. «Արարին երգ շարականաց քաղցր և զեղեցիկ եղունակաւ և մեծ խորհրդով մնկեանն Քի. եւ Բաւաւորեայ զալսեանն ՚ի Տանաբն, Մկրտրեանն եւ կաւորուքեանն ՚ի Բերանիա եւ յԲաւաւորեմ. մեծի օաբարուն, շարտարանաց եւ Յարութեանն, Համբարձման եւ Հոգւայ Գալսեանն, Խաչի եւ Սկեղեցւոյ եւ այլ օտից ճերուականաց եւ սրբոց ամենեցուն, ապաւարուքեան եւ ամենայն ննչեցելոց, պէսպէս և

գանազան և տնթիւս, որ մինչեւ ցայսօր պաշտի յԵկեղեցի Հայաստանեայց(»):

Բայց այս վերոյիշեալ անձինքներէց շարականների ցանկի մէջ միայն հինգ հոգու անունը կայ՝ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Մովսէս քերթողանօր, Յովնան Մանդակունու և Ստեփաննոսի: Բացի դրանից, շարականների ցանկում ննջեցելոց շարականները վերագրուած են Պետրոս Գետադարձին՝ մինչդեռ կիրակոս հինգերորդ դարու կը զնէ: Այստեղից եզրակացնելի է, որ Ե. դարում ևս ննջեցելոց հոմօր շարականներ հիւսուած են:

Հայաստանեայց Եկեղեցու ժողովների պատմութիւնից էլ գիտնեք, որ Ե. դարում ննջեցելոց կարգ կար սանձանուած, սւտաի, չի կարելի բոլորովին զստանիլ շարականների սկզբում դրուած անուանական ցանկին, որը չի գիտցուիր թէ մի է զեմեղել:

Ներկայումս, գործածական շարականը սկսուած է ընդգեցէք որդիք Սիմոնի՝ Ս. Ածածնի ծննդեան երգով, որ գրել է Յակոբ Կլայեցի Կաթողիկոսը և վերջնում է «Արեւելք գերարփին» վերափոխման անձինքով: Առաջին երգը ԺԴ. դարու, իսկ վերջինը՝ ԺԵ. դարու հեղինակների

(*) Տե՛ս Գանձակեցի Կիրակոս, էջ 17, տող 28-ից - էջ 18 և տող 18. ապաւս 'ի Մասիվա, 1858 թ.:

նէն, ուր կինը բանձաբեր կը նկատուէին ծննդաբերութեան յաջորդ գաւառուն օրերու ընթացքին: Բացի Ս. Յարութեան Տանարէն ներս կատարուած աւաւտեան դոնփակ հանդիսութիւնէն — Ս. Մանդեան օրուան նման, այդ օրն ալ ուշ բանալ կու տան Տանարին դուռը — Հատինք ՎՄՈՒՐՆԻՔԷՅ կը կատարեն աչք օր և մամուլիսք թափօրջմնալ՝ կը կատարեն, բացօթեայ՝ կ՛թէ սքը թոյլատրէ: Գանի մը արքաներէ ի վեր, այսօր հանդիսութիւնը կը կատարուի փետրուարի ա-

ռաջին կիրակի օրը: — Արեւելեան Եկեղեցիներ տանին յաջորդ օրը (3/16 Փետր.) կը յիշատակեն Սիմէոն ծերունին և Աննա մարտարէնուհին, տանին խորհուրդին հետ այնքան սերտօրէն առնչուած: Սիմէոն ծերունիի դամբարանը ցոյց կը տրուի քաղաքիս հարուստարեմտեան կողմը, Քաւրսովն կոչուած թաղամասին մէջ, ուր Մոյսիսի կառուցած են վանք և եկեղեցի, և ուր հանդիսութիւն կը կատարուի ամէն տարի 15 Փետր. ի 4. վ. և 16ի առաւանդուն: (Նտր. 2) Գ. Ճ.

գրչին է պատկանում: Այս կարգն ունին՝
և ձեռագիր շարականներից շատերը, որք
գաղափարուած են ժԴ. դարուց սկսեալ:

Բայց Ե. կամ Ջ. դարերու մէջ ինչ-
պէս են եղած: Ան՝, այս է խնդիրը:
Ենթադրելի է, որ հետզհետէ երգերը ա-
ւելացել են և երբեմն երբեմն ամփոփուած,
խմբագրուած ըստ պատկերի տօնից:

Թէ ինչ պատճառներից կարող էր յա-
ռաւ գալ խմբագրութիւն կամ խմբագրու-
թիւններ, այժմ աւելի հանգամանօրէն
բացատրենք:

Պատճառները մի քանիս են. —

Նախ՝ ժամանակի ընթացքում, զար-
գանում է Եկեղեցու ծիսական մասը՝ ինչ-
պէս օտար՝ նոյնպէս և մեր Եկեղեցու մէջ:
Հետզհետէ սահմանուած են նոր տօներ,
զորս պիտի կատարէր Եկեղեցին: Եկեղե-
ցու համար նոր նահատակութիւններ են
լինում, նոր սուրբեր և սրբութիւններ
են յառաջ գալիս, և Եկեղեցին հետզհետէ
ընդունելով, ՚ի պատիւ սրանց պիտի
արտայայտէր իւր երախտագիտութիւնը,
փառաբանելով սրանց և նոցա բարեխո-
սութիւնը հայցելով:

Քրիստոնէական սկզբնական Եկեղեցին
շատ պարզ էր իւր կազմութեամբ և ծէ-
սով, ինչպէս ստուեցու այդ ժասին ա-
ռաջօրէն: Արարողութիւններէն կատա-
րում էին միայն Ս. Հաղորդութեան Խոր-
հուրդը, Մկրտութիւն և Ձեռնադրութիւն:
Հետզհետէ յառաջ գնաց, նոր պահանջներ
յառաջ եկան և Եկեղեցին կարգացաւ, զար-
գացաւ ծէսը՝ տօները՝ շատնաւով:

Նոյն զարգացումն ունեցել է և մեր
Եկեղեցին, նոր տօների առթիւ հիւսուել
են նորանոր երգեր, իսկ հին տօները ա-
ւելի են զարգացել, մի քանի օր շարու-
նակ տօնուելովը: Մեր Եկեղեցին ունի
տօն, որ 7 օր շարունակ տօնում է, տօն՝
որ 3 օր կը տօնէ:

Առաջին հաստատ տօներն էին Քրի-
ստօրինութիւնները — Ածայայտութեան,
Մկրտութեան, Քառասնօրեայ Գալտեան,
Այլակերպութեան, Եկաւարութեան ՚ի Բե-
թանիս և յԵրուսաղէմ, Չարչարանաց,
Յարութեան և Համբարձման, զորս ընդ-
գծեցինք Գանձակեցոյց յուցման մէջ: Եւ
եթէ առանձին կարգաւարութեամբ և ճշ-

գութեամբ է յիշել Գանձակեցոյցն տօները՝
կը նշանակէ Ե. դարում սահմանուած էին
բացի Քրի. անօրինութիւններից՝ այլև
Ձեռնի և Եկեղեցուց և այլ . . . Սրբոց ա-
մենեցուն . . . ապաշխարութեան և ննչկե-
ցելոցն:

Նոր տօներ յառաջ գալով, և միօր-
եայ տօները ըզգօրեայ դառնալով, կա-
րիք պիտի զգացուէր նոր երգեր յօրինե-
լու, և յիրուի յօրինուած և հիւսուած են
նոր երգեր՝ նոր տօների տօնելիների
պատճին:

Բայց որպէսզի ամէն տեղ եկեղեցի-
ներում կարգը պահպանուէր, նոյն եր-
գերը երգուէին և զօրծ դրուէին ժամեր-
գութեան ժամանակ, պէտք էր մի ձեռ-
նարկ, մի լիակատար ժողովածու: Անտ
այդ կանոնաւոր, միատեսակ ժողովածու
կազմելն է, որին մենք խմբագրութիւն
անուն ենք տալիս:

Այսպիսի մի ժամանակ, ինչպիսին
Ե. դարից մինչև ԺԵ. դարն է, որ ապա-
գրութիւն տակաւին չլինելով, որ ձեռքով
ընդօրինակելով, գաղափարելով էր գործը
յառաջ գնում և այն ևս շատ դանդաղ-
շատ րնական է, որ յաճախ մի տեղ մուտք
գրած երգերը, մի այլ տեղ դրոնք ան-
ձանօթ լինէին մարդկանց, որից և յառաջ
պիտի զար եկեղեցու մէջ երգեցողութեան
աննմանութիւն: Ուստի, պիտի Եկեղեցու
նախանձախնդիր Հայրերը ժամուէին կար-
գաւորելու շուտ շուտ, որ ամենայն տեղ
ժամերգութիւնը նման լինէր:

Վարդան Բարձրբերդցոյցն մեզ հաղոր-
գում է մի շատ կարեւոր տեղեկութիւն
շարականների կարգաւորման ժառի, որ
եղել է է. դարում Ներսէս Շինողի օրօք
և նորա ձեռնբերէցութեամբ:

ՎՍա (Ներսէս Շինողը) մեծ ժողով
աւներ և տասն հարգ քառս վարդապետն
փոխեցին և ոչ կարացին առնուլ զմիմ-
եանց. ապա հրամայեաց ընտրել զարժանն
և զայն միայն ուսանիլ, զոր և արարին
՚ի ձեռն Սրբոյն Բարդղի՝ մականուն ճոյ
կոչեցելոյ, որ էր Առաջնորդ Սուրբ Ուխ-
տին, որ Գրեղմանք կոչի ՚ի գաւառին
Աււոյ, որում ասեն, Թէ եօթն անգամ
եսես զՔրիստոս սքանչելի համարձակու-
թեամբ, վասն որոյ ճոռնաւոր կոչի Շտս

րականն, որ այժմ պոչախի յեկեղեցիում
մերձ(*):

Նոյն բանը մենք գտնում ենք և մեր
եկեղեցցական ժողովների կանոնների մէջ:

Կիրակոս Գանձակեցին աւելի մանրա-
մասն է պատմում սոյն զէպոքը, բայց ձո-
նին չէ յիշում և խմբագրութիւնն էլ
ձոնին չէ վերագրում, այլ Ներսէս Շի-
նողին և սորա ձեռքով: Ասում է թէ՝
Ներսէսը մարգրիկ է շրջեցնում բոլոր գա-
ւառները, որ իւր ընտրածներն աւ կար-
գաւորածները տարածեն ամէն տեղ:

Էդէպ կղև ամա (Ներսիսի) այնտարնա-
ժողով բազմութեամբ՝ ՚ի տօնի վարդապետ-
ոսին լինել ՚ի Բագասան և բազմաք եղիցն
երպ օտարականոց յեկեղեցիս Հայոց, մինչև
սչ գիտել միայ գաւառի երգեցող՝ զմիւ-
սոյն և ասացին շարական վարդապետի
հարցին և միւս դասն ոչ կարաց փոխել
զնա, և փոխեցին բազում շարականս և
ոչ զայն ևս գիտէին: Ապա Հայրապետն
Ներսէս, հաւանութեամբ ամ. ժողովոյն,
ընտրեցին զպիտանին եւ զօգտակարս, զի
յամ. եկեղեցիս յամ. աւար մի պաշտօն
լիցի ըստ աւուրն խորհրոյ, և ընտրե-
ցին արտ իմաստունս, զի օրհնայցին ընդ
ամ. առլարհս հայոց և զնոյն կարգաւոր-
ութիւնս հաստատեցին, որ է մինչև
ցայտօրձ(**):

Այսպէս, մեր անմահ մատենագիրներ
ցուցմանց և շարականների երգոց ու-
սումնասիրութիւններէն կը հանենք, որ
Շարականը երեք անգամ խմբագրուել է
մինչև իր վերջին կերպարանքը տունելը:

ԱՌԱՋ ԻՆ ԽՄԲԱՎՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս վարդան Բարձրբերդցին և
Կիրակոս Գանձակեցին ասում են, շարա-
կանների կարգաւորման վերայ առաջին
հոգ տանողը Ներսէս Շինողն է եղել:

Ներսէս Շինողը վարդապետի տօնին
հանդիպում է Բագասանում և առաւօտ-
եան ժամերգութեան ժամանակ դասում
կանգնած և զանազան տեղերից հաւաք-

ուած ուխտաւորք երգում էին: Հարցը
երգելիս, նրանցից ոչ մէկը միւսին նման
չերգեց: Հայրապետը եզրակացնում է, որ
գաւառներում երգեցողութեան անմա-
նութիւն — խառնակութիւն — կայ: Ուս-
տի, Գուհինի ժողովում հերթական հար-
ցերը վճռելուց յետոյ, այդ բանը յանձ-
նարարում է Գրիգորիանուց վանահայր
Բարսեղի, զընտրել զարժանն և զայն
միայն սուսանիչ: Մտանկարի ասելովը,
Բարսեղը կատարում է ժողովի իւր վերայ
գրած պարտաւորութիւնը: Նա կարգա-
ւորում է, ընտրում է գործածական եր-
գերը, խմբագրում էր երգարանում, զոր
այժմ պատի յեկեղեցիս մերձ: Մտանկարի
ընդգծած բառերից երևում է, որ ձոնի
խմբագրումը մինչև ԺԿ. գարը ընդուն-
ուած և պահպանուած էր, որը նորա ան-
ուամբ ձոնընտիր էր կոչւում:

Բայց զարմանալին այն է, որ Է. գա-
րու պատասխիր Սերէնուը, որ քաջ ծանօթ
է Ներսէսին, և մինչև անգամ իւր գրքի
Ներքոյ Գրքութեան ԼԳ. —ԼԶ. գլուխները
ամբողջապէս նուիրած է Շինողի գործու-
նէնութեան — առաւելապէս գաւառական
(Քաղկեդոնականութեան դէմ մաքառումն)
—, բայց և ոչ մի խօսք չէ տեսնել Շի-
նողի այդ կարգադրութեան մասին:

Արդե՞ք Սերէնոսի այդ մասին լուս-
թիւն պահպանելը պիտի քաջատրեմք նրա-
նով, թէ այդ գործը մի հարածանօթ ի-
րողութիւն լինելով չէ յիշատակել: Թէ՞
մի աննշանակ բան էր համարում: Եւ
վերջապէս, պիտի հզրակացնենք, թէ
այդպիսի մի բան բնաւ տեղի չի ունեցել:
Վերոյիշեալ ենթադրութիւններից ինձ
աւելի հաւանական է թւում երկրորդը՝
այսինքն այդ կարգադրութիւնը մի հան-
րածանօթ գործ էր, այլև իբրև մի գործ,
որ Հայրապետների սովորական խոկմանց
առարկայ, վասն զի նոյն կարգադրու-
թիւնը սեսնում ենք արուած և միւս
Հայրապետներից:

Յովհանն Օձնեցու քանմանած կանոն-
ների մէջ, մի վկայութիւն էլ գտնում
ենք Ներսէս Շինողի եկեղեցական պաշ-
տամունքի կարգաւորման մասին: Այդ
կանոնները թուով 32 են, որք կը վերադ-
րերին եկեղեցական զանազան խնդրոց և

(*) Տե՛ս վարդան Բարձրբերդցի, էջ 90,
10-19 տող, տպ. Մոսկուս, 1860 թ.:
(**) Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 84, տող
31-ից — 35 էջ, 5 տող:

միայն 23րդ կանոնն է վերաբերում այն խնդրին: Այդ կանոնները հետևեալ վերահսակներն ունին. «կանոնք Յովհաննիսի իմաստասիրի Հայոց կաթողիկոսի»: 23րդ կանոնի վերահսակն է՝ «վասն երկիրեաց Ծարաթսնոս»:

Կանոն ԻԳ. — «նոյնպէս և զերեկո-րինսն նանգոյն միմիանց ըստայժմ կարգի և այսու աւրինակու կատարել յառաջագոյն պաշտել ընտնարկեցոյ վերաձայնութեամբ ըստ դասուց, զոր երանելոյն ներսեալի նայոց կաթողիկոսի յաւելեալ»⁽¹⁾ է: Որպէս թէ կամեալով զսկիզբն ամենայն վերահսակի⁽²⁾ սաղմոսիցն յաղաւթելոյ առնել: զի և սաղմոսասացս⁽³⁾ ազաւթք Գաւթի են ըստ վերնագրին⁽⁴⁾ յառարարութեան. զկնի նոր այդպակցոյ. մի ըստ միովէ վերահսակն սաղմոսն. զմիմեանց զհետ ըստ դասուց վերաձայնութեամբ: Իսկ զկնի մեակդի և ուղիցնն ստեղծ քարոզել և աղաւթս մատուցանել: Յետ այնորիկ վերահսակեան նուազել նորին նմանութեամբ և վաղճան ամենայն պաշտամանն զհանգստեանն սաղմոս սակ ըստ դասուց վերաձայնութեամբս:

Յովհաննու իմաստասիրի այս կանոններն էլ գտնեցուած են «կանոնագիրք Առաքելոց Սրբոց վերնագրով ձեռագրի մէջ, որ գրուած է Հայոց ՌՁԻ թուին, 'ի վիճակս Ատաթէի, 'ի ձեռն Սարգսի, 'ի քիւղն Ռոտասէ և Մայր Աթոռի Մատենադարանէն է և ՊՁ 761 կը կրէ: Մի ուրիշ ձեռագրի հետ համեմատած եմ (ՊՁ 449), որոց ասարհարութիւնք 26րդ էջ ասորե նշանակած եմ. այդ երկուսի համեմատութիւնից աւելի երկրորդը (ՊՁ 449) աւելի իսկականը կը թուայ:

Յովհան իմաստասիրի կանոններից (և՛ թէ յիշուել նրանն են) այն ևս երևում է, որ Յովհան Մանգակաւանին էլ կարգաւորել է ժամատացութիւնը, թէ ի՞նչ սաղմոս պիտի ստել և ինչից յետոյ գլխաւորապէս կիր. աւելոր զիշխարային ժամերգութիւնը:

Այս կանոններից իմանում ենք նոյնպէս, թէ Ս Սահակը ի՞նչ աղթքներ է գրել, կամ Յովհան Մանգակաւանին ի՞նչ քարոզներ թողել:

Իսկ այս վերոյիշեալ եզրակացութիւններից եզրակացնելի է, որ հարկաւ ըլլաւ հարապահանջը առհասարակ իրենց ուշագրութիւնը դարձրած են ժամակարգութեան վերայ. նոր երգեր յորինած և գուցէ շրջիկ երգիչների ձեռամբ տարածած հայոց աշխարհի ամէն կողմը միանմանութիւն և միօրինակութիւն, ինչպէս այս ևս տեսնենք Ներսէս Երևողի օրօք է. և Կերսէս Ենթրճալու օրօք ԺԲ. դարերում:

Ուրեմն, վարդան Բարձրբերդցու այս յիշատակածը — ձննի ընարութիւնը — կ'ընդունենք առաջին խմբագրութեան, շարականների է. դարու առաջին կիտում: Արդ, տեսնենք թէ ի՞նչ շարականներ կը մտնէին այս խմբագրութեան մէջ:

Ի նկատի ունենալով, որ այս խմբագրութիւնը է. դարու առաջին կիտումն է կատարուած, ուստի նրա մէջ կը մտնէին մինչև այդ ժամանակը յառաջ եկած կէտ զեցական արքայան հալց հիւսած հոգևոր երգերը, որք են՝ Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Մանգակաւանու, Մ. Խորենացու, Ստեփանոս Միւնեցու և կամիտաս կՅՊՁ. ի:

Բովանդակութեան վերածելով, կ'ուսնենանք շարականներս՝ Գրիստոսի անօրինական տօների՝ Մննդեան, Մկրտութեան, Գոռասնօրեայ գլխաւեան՝ 'ի սուճար, Գայծառակերպութեան, 'ի Բեթանիտ և յերուսաղէմ կիւարութեանց, Մատենութեան, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման և Ս. Հոգւոյ Գալստեան, Կնիցեցոց (սառկայն ոչ բոլոր շարականները) և Խաչի: Եւ ռակայն այս տօների առաջին աւուր շարականները, վտանգի այդ դարերում (ց է. դարն) տօների օրերը առկաւին չէին բազմացել:

Ահա այսպէս ուրեմն, ըստ իս, առաջին խմբագրութեան մէջ կը մտնէին վերոյիշեալ երգերն և այն ևս առաջին աւուր երգերը, որովհետեւ ինչպէս ակնարկեցի՝ դեռ շատ ուշ է սկսում մեր Ս. Երեմիայի մի օրուայ տօնը կրկնել, ինչպէս Մննդեան տօնը ութօրեայ է, և այլն:

ՎԱԱԱ ԲԺՇԿԱՆ
(Շարունակելի՛ 3)

¹ ՊՁ 449 ձեռագրում կարգում ենք յարինեալ է:
² Նոյն ձեռագրում կարգում ենք վերեգակի:
³ Նոյն ձեռագրում կարգում ենք Սաղմոս այս, ինչ որ աւելի էրևա և թուում ինձ:
⁴ Նոյն ձեռագրում կարգում ենք վերնագրի:

ԳՐԱԴՕՍՍԱԿԱՆ

«ՀՈՂ, ՄԱՐԴ ԵՒ ԳԻՐ»

Հեղինակի ԳԱՐԾԳԻՆ Բ. ԿՐԾՈՂԻԿՈՍ

Անթիլիաս, Տպ. Կար. Հայց կիլիկոյ, 1983

Հրատ. Հայկ Արեւիկեան Գրական Մրցանակի թի 8

Ուրախութիւն է մեզ հաստատել, թէ մեր նուիրագրական հորս Աթոռներու այժմու Գրականները, Աստուծոյ և Եկեղեցւոյ նուիրեալ պաշտօնեաները ըլլալուն հետ և ըլլալէն յետոյ, մեղի կը ներկայանան իբրև գրքի ու գրչի մարդեր: Մարդեր՝ որոնք հոգևոր ծառայութեան կողքին, բերած են ու կը բերեն իրենց բարձրագին սպասը մեր գիրին ու գրականութեան, մին ճոխացնելով Աստուածաշնչական մօրթիներու վրայ բանուած մեր հոգևոր քերթողութիւնը, ուրիշ մը՝ մեր և Ընդհ. Եկեղեցւոյ տօնիկին ու սուրբերու վարձագրութիւնէն խօսող իր հատորներով և երրորդ մը՝ մեր կրօնական արձակ գրականութեան մշակումով:

Ենտրահարդ է կորովամիտ (ու տակաւին երիտասարդ) Գրական Մեծի Տանն կիլիկոյ Աթոռին օժտուած է արդարև հոգևորական բարձր պաշտօնեայէ մը սպասուած թուր առաքինութիւններով: Տուեալ հատորը գերագոյն սպասոյցն է այդ ուղղութեամբ, զոր իմացական ճոխ պաշարով յազնցած ու բարձրօրէն մշակուած միաք մը, միացած իր հօտին հունդէպ սիրոյ ու ծառայութեան զգացումով պահպանուած սրտի մը, կտակած է մեր հոգևոր-ազգային (երկուքին սահմանը գծել գժուար է մեր ժողովուրդի պարագային) գրականութեան անդաստանին:

Տարուան օրերուն թիւէն քիչ մը աւելի հաշուող այս հատորին էջերը գրուած են 22 յօդուածներով, ազգային-կրօնական-հայրենասիրական խորքերու վրայ հիւսուած, ուր իր կողմին վերստին վերստին բարձրօրէն գիտակից անձնորք հոգևորականի մը ապրումներն ու իր ժողովուրդին սիրովը արոփող աչնի սրտի մը զեղումները թև թևի, արուեստի բար-

ձրութեան հանուած ճոխ ու ճկուն լեզուի մը հանդերձանքով կը մատուցուին ընթերցողին:

Բանաստեղծ մը չէ գրքին նշխարակը, սակայն բանաստեղծական շուշը զգալի է գրքին գրիթէ թուրէջներուն վրայ: Խօսքի ճարտար գործարարութեան, ճոխ փոխարեութեաններ, կեանքի իրականութիւնէն վերբերուած պատկերներ հատորին ընթերցումը կը վերածեն իմացական ճշմարիտ վայելքի մը:

Պաշտօնի բերուածով, նշխարակը եղած է աշխարհի այլազան մտանքուն մէջ, օժտէն անշնչաբով տարասփիւռ հայութեան մէկէ աւելի գաղութները, երբեմն իբրև նովիւ, երբեմն իբրև այցելու: Պաշտօնավարած է ստան մը Իրանի մէջ, ըլլալէն ետք համալսարանական ուսանող յԱնգլիա, և մասնակցած է միջ-եկեղեցական ժողովներու՝ յԱւստրալիա և այլուր, մինչև հետևոր նոր Զելանդիայի ու Հարավային Աֆրիկէի հայութիւնէ գրիթէ կարուած երկիրներու: Եղած է նաև նոր Աշխարհ:

Աւելորդ չըլլայ ըսել թեպէս, որ վեհափառ նշխարակը տասնամիակներու ազնուատելի վաստակ մը ունի իր ետին Անթիլիասի Մայրավանքէն ներս, իբրև Տեսուչ և ռեժիսոր Գարեգինուց, խմբագիր շէտակց Պաշտօնաթերթի, և հուսկ ուրեմն Աթոռակից կաթողիկոս (1977ին), իբրև աջ բաղուէր Երանուշներ Տ. Խորէն վեհափառն, մինչև անոր մահը 1983 Փետրուարին:

Վեհափառը շատ կանուխէն հրապարակ իշած է արժէքաւոր երկասիրութիւններով: 1955ին (կըր իր տարիքը 23 էր տակաւին) լոյս տեսած է իր առաջին գիրքը (Հայաստանեայց Սիւնիցիոյ իր Մասնայական կերպիւն մեզ), ուր գործերու երկայնքին և անոնց յարուցած փոթորիկներուն հակառակ ու ընդմէջէն, Հայց, Եկեղեցւոյ մեր ժողովուրդին հանդէպ կատարած գերազանցօրէն փրկարար — կրօնականին հետ ու չափ նուազ ազգային գետնի վրայ — ու անփոխարինելի դերը սեւեռուած է շքեղօրէն, հայ հոգևորականէ մը մաստեսուած անդարտ ու խճուկական վերլուծումով:

Մեր ժողովուրդին շքեղօրէնները իրենց պատմութեան ու Եկեղեցիին՝ և այս վեր-

ջինով Աստուծոյ կապելու առինքնող և հմայիչ շեշտը ունին իր քարոզները: Նմանապէս հարկաւոր զօրութիւնը՝ անոնց սրտերուն մէջ արծարծելու աղգասիրութեան հրայրքն ու թրթիւրը:

Իր միւս գործերէն — միծ ու փոքր՝ մէկուկէս տասնեակի հասնող — կ'ործէ յիշել եղևոտարիտ Դերնինկ Եպս.ի քուսնայութեան 20ամեակին (1955) ձօնուած 91 էջնոց հատորիկը, «Երուսր եւ Հայտարիւնը» (1971)՝ 62 էջերով, կոմիտաս Վարդապետի մասին մենագրական ուսումնասիրութիւն մը (1969)՝ 77 էջնոց, «Համեմատ Զեռնարկ մը Հովուական Աստուածաբանութեան» (1979)՝ 174 էջ և նոյնին Անգլերէն թարգմանութիւնը, Իսկ «Հանգոյի, Վեպիւնի», «Յետաջողի և այլ հանդէսնու մէջ ցրիւ իր յօդուածներէն քանի մը հատարներ կարելի է կազմել:

Նպատակադրած էի գործը տալ միտյն այս սողերով, բայց ինքնաբերաբար ու սկիւմարօէն նոյն և ունիլի չափով տուած եղայ նաև անձը, գործին հետ ու չտփ՝ կործաւորը: Եւ այս՝ վասնզր իր անձն ու գործը այնքան անքակտելիօրէն միազանգուած են իրարաւ, որ անկարելի է ծանրանալ մէկուն վրայ և անկատ թողուլ միւսը: Երկուքն ալ զիրար կ'ամբողջացնեն, իրար վրայ իրենց լոյսը ձգելէ յետոյ: Ու այսպէս է պարագան բոլոր մեծ ու իրաւ մարդերուն ու ասոնց էութեանէն գոյաւորուած մեծ ու իրաւ գործերուն:

Վեհափառը էպպէս ու լուսաղէս ճաննալու համար հարկաւոր է ունենալ ճանաչողութիւնը որքան իր անձին ու ասպարէզին — վսեմ որքան սրբաղան — այնքան ալ իր գործին — հոգեւորին քով ու հետ՝ գրականը, մասնաւորաբար երբ ան կոս զայ ազգային աստնքներէ ու մանաւանդ երբ նկատի առնենք ազգային նկարագիրը մեր Եկեղեցիին:

Ասկէ անդին՝ խօսինք միտյն գրքին մասին:

Սրբաղանին ժօա ակնբախ է բարդ ու նորահնար բուռերու առատութիւնը: Ահա նմոյշներ անոնցմէ. — նրեօսակածիւր, աստուածամաղ, արբնաբարմ, աջխորհապաս, հեքմակալչիւնչ, արծամհոպի, բարձրամաս,

մօսալրոճ, սրճածաղկեալ, ճիեգրեծածին, մօսալիւր, երկնածայն, զրահոյլ, երկնեղբայր, վերաբխիլ, ձայնառաս, ձայնալիւր:

Յատկանշական է Չարամալի գերեզմանատան տուած իր այցելութեան առիթով հոն խօսած իր հոգեւորուի և հոգեթաթաւ քարոզին նեւեւալ հատուածը. —

«Որդի՛ք հայկազանց, այսօր, այս գերեզմանաքարերուն շուրջ դուք վերածուած էք ուխտի ժողովուրդի մը: Ձեր համախրմբումն այստեղ, այս պայմաններուն տակ, ինձ համար կը նշանակէ թէ վերնճիղած ճիւղ մըն էք հայութեան կաղնիլին վրայ, թէ՛ այս ժողովուրդին մէջ դեռ ամուր է, դեռ տողուն է ու յաւէտ անասան կը մնայ մեռելներէն կեանք քակելու այս խորհրդալից և անընկճելի գիտակցութիւնը» (էջ 115):

Կամ, ուրիշ տեղ մը, անդրադառնալով Յրօնց Վերջիլի հանճարով անմահացած Մուսա Տաղի հերոսամարտի ընթացքին, գիւղի լքուած եկեղեցւոյ զանգերը թշնամիին ձեռքը շինալու համար զանոնք հոգին յանձնելու տարօրինակօրէն յանկուցիչ ու սրտաշարժ որարքին՝ կ'ըսէ.

«Եւ երբ հողը սահեցուցին անոնց վրայ, հողաշերտերու հպումէն՝ խուլ, ծանր ծայնի կտորներ բարձրացան զանգակնէրէն: Վերջին հաւայա՞նքը, հոգեւորքի ճիւղ մահուան գացող զանգակներուն» (էջ 137):

Կամ, քանի մը էլ անդին.

«Լոյսի պաշտամունքին ձօնուած լուսալից բառերը լուսնրգակ բանաստեղծի լուսածորան գրչէն, Շնորհալիի լուսաղբիւր հոգիէն անհ կը բացուին» (էջ 143):

Հատորին վերջնաւորութեան տեղ բանող շորս կտորները — Հայ գրքի փոռատօնի առթիւ խօսուած ճառեր — մէյ մէկ գեղօններ են, հայ գրքի փոռքին ձօնուած:

Մեր սրտաբուխ իղձն ու մաղթանքն է որ Տէրը բազմապատէ թիւը շնորհառատ Վեհափառի կեանքի միացեալ տարիներուն — գէթ չըլլան անոնք զգալիօրէն նուազ իր պարած տարիներու թիւէն — որպէսզի ան իր հոգեւորական քարձք պաշտօնին առընթեր, կրօնա-աղգային-գրական երկասիրութիւններով հարստացնէ իմացական գանձարանը մեր մշակոյթին:

Գ. ՃԱՐՏԱՐ

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԸՌՈՋ

ՀԱՆԴԷՍ ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՏՄԱՐԱՆԻՆ

Ուսումնական Խորհրդոյ արշամբը և Տնօրէն ժողովոյ կարգադրութեամբ, Հոկտեմբեր 22ի կիրակին նշանակուած ըլլալով օր տօնախմբութեան Ս. Աթոռոյ Տպարանին Հարիւրամեայ Յօրհանման, այդ օրը կանանական քարոզէն վերջ՝ զօր Մայր Տաճարին մէջ Տ. Նորայր Վրդ. խօսած էր շնորհը մեր յայտնի ատեն, շէտք որդիական յիշողէն առաջ խօսեցաւ նաև Սրբ. Պատրիարքը, որ համառօտեց մեր տպարանի հաստատման պատմութիւնը, բացատրեց անոր գոյութեան նպատակը, երախտագիտական զգացումներով և օրհնութեամբ յիշեց անոր հիմնադիրներուն, յետոյ անօր զարգացման և բարգաւաճման համար բարերարներուն, սատարողներուն և ոչխատողներուն տնունները:

Ս. Պատարագէն հօքը կտարուեցաւ հանդիսւոր պաշտօն հոգեհանգստեան՝ Տպարանի բոլոր անդուցեցալ վտտակաւորներուն համար:

Կէսօրէ վերջ կտարուեցաւ նաև կատիք և պաշտօնական սկզբնաւորութիւն շարժման՝ մեծ արագատիպ և կտորիչ և ծալիչ կէքորական երեք մեքենաներուն, զորս, ի յիշատակ իրենց Տիրան և Յարուրթիւն կորայրներուն, անցեալ տարի Ս. Պատրիարքը Հօր դիմուսին պատասխանելով Ս. Աթոռոյ նուիրած էին Տիրք Յովակիմ Յովակիմեան, և տիկնայք՝ Զարուհի Էմմէրեան, Մէհրիւպէ Մանուկեան և Արաքսի Գալլպեան:

Երկնոյն ժամերգութեան անմիջապէս յետոյ, ամբողջ Միաբանութիւնը Ս. Պատրիարքը Հօր գլխաւորութեամբ և թափօրով ուղղուեցաւ դէպի Տպարան, որուն դաւարադարձուած դրան առջև, ժողովուրդի հոծ բազմութեան մէջ, կը սպասէին Ընծայարանի և Ժառանգաւորաց աշակերտները: Ի տես Միաբանութեան թափօրին, այս վերջինները սկսան իրենց քայլերը, և Սրբազան Պատրիարքն ու իր հետևորդները առաջնորդեցին դէպի

ներս, մեքենաներու բաժինը, մինչ ժողովուրդը կը խմբուէր մնացեալ ընդարձակ և պարուպ մասին մէջ: Գպիթք և Միաբանք արասթունդ կողմնակցին ըկսօր երկնայիւքն ուրախանան շարակներ, որմէ հօք կարգացուեցան պատշաճ գիրք, Աւետարան և աղօթք մը, ու Ն. Ամենապատուութիւնը Վարդանիշով օրհնեց նուիրատուները և իրենց ննջեցեալներուն յիշատակը: Յետոյ, առաջ անցնելով, Տպարանի Տեսուչ Տ. Գարեգին Վրդ. յանուն Միաբանութեան, նորահայտութիւն յայտնեց նախ Ս. Պատրիարքին, այս նորաստեղծ մեքենաներուն նուիրման գործին պատուաւ հանդիսացած լինելուն համար, ապա նուիրատու ազգասէր հարազատներուն, Ս. Աթոռի Տպարանը ծածակ լինելուն համար այսպիսի մեծարժէք գործիքներով, որոնց շնորհիւ, ըստ, մեր Տպարանը այնօրեւնէ կը մտնէ Ս. Պատրիարք լուսազոյն տպագրատաններուն շարքը: Յետոյ հրաւիրեց Ն. Ամենապատուութիւնը հաճել շարժման մէջ դնել մեքենաները: Ս. Պատրիարքը յառաջագաւ դէպի կէքորական մեքենայ: Այդ միջոցին, Ժառանգաւորներէն մին կարդաց դիմանական առաջափութիւն մը, իրրև ընծայածներէն ընծայողներուն, այսինքն մեքենաներէն՝ գիրենք նուիրողներուն ուղղուած խօսք մը: Անմիջապէս յետոյ, ընդհանուրին ծափերուն մէջ, շարժեցաւ արագատիպը, իր ծոցէն դուրս տեղալով Վիմուսնական խօսքէն հարգորական մը, որմէ բախտեցան ներկաներուն: Յետոյ պիտի տպագրէր նուիրատուներուն ուղղելի Պատրիարքական օրհնութեան կոնգակները:

Երկնոյն ընթրիքը համախումբ կատարուեցաւ ընդհանուր բեղանատան մէջ, ուր բացառաբար ներկայ էին նաև Տպարանի զբոսարները և կազմաբարները: Ս. Պատրիարքը պատշաճ սկիզբով մը անդրատարածման բոլոր տպարանական գործառնութեանց մտաւորական կեանքին հետ ունեցած օրատ աղերսներուն վրայ, որմէ վերջ աշակերտները ձևով մեծաքանակ շքեղեցին:

(«Սիմ», 1983, էջ. 8աբի, Նոյեմբեր, Թիւ 11, էջ 436-439):

Ս. ՅԱՎՈՐԵԱՆ ԵՆՐԱՆ

Հ Ե Ռ Ա Դ Ի Բ

Երուսաղեմ, 30 Սեպտեմբեր 1983

Ն. Ս. Օժո՛ւրիւն Տ. Տ. Վազդէն Ա.
Կարօղիկոս Ամենայն Հայոց
Ս. Էյմիածին

Ձերդ Սրբութեան գահակալութեան եւ օժման շքրդ քաւեկութիւնն ուրախ տախրով, հոնեցեք ընդունիլ մեր, Ս. Յակոբեանց Միսրասունութան եւ Սաշիմանայ համայնքի շերմալիկն օժտուաւթաւ թիւնները, երկար ու երջանիկ օրերու լաւապոյն բարեմակրութիւններով հոնեցեք:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԵՐՍԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղեմի

Ե Կ Ե Ղ Ե Յ Ո Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Մ Ա Կ Ա Ն Ք

● Եր. 1 Հոկտ. — Տօն Խաչի: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերին մատուռին մէջ: Ժամաբարն էր Հօգշ. Տ. Կամիտան Վրդ. Եէրպէթեան:

● Եր. 2 Հոկտ. — Բարեկեցեան Վարացայ Ս. Խաչի պահոց և ԻԸ. Տարեգարծ Օժման Տ. Տ. Վազղեն Ա. Վեհ. Կարօղիկոսին Ամենայն Հայոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ժամաբարն էր Հօգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան:

● Ուր. 7 Հոկտ. — Նախատանկը պաշարուեցաւ Ղպտոց Ս. Գերգր եկեղեցւոյ մէջ: Լանդիսապետն էր Հօգշ. Տ. Յովսէփ Մ. Վրդ.:

● Եր. 8 Հոկտ. — Ս. Գեարգայ զօրավարին: Ս. Գատարազը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գեարգ եկեղեցւոյ մէջ: Ժամաբարն էր Հօգշ. Տ. Գուսան Արդ. Ալեանեան: Երթ առ զարձի թափարներուն նախագահեց և սատարան լաւթանարեւելա կերպին շարժ քարակն Հօգշ. Տ. Յովսէփ Մ. Վրդ. Մամուր: Միտարանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հօգշ. Տեաչէն:

— Կէսօրէ ետք. Ամեն. Ս. Պատրիարք շօր գլխատարութեամբ, Միտարանութիւնը շնորհասօրակալով մատուց զօրօնեց Ս. Յարութեան Տաճար, քա պաշտօնեցան ժամերգութիւն և նախատանկ մեր վերնամատարան մէջ: Նախադասութեամբ Գերդ, Լուսարարացեալ Ս. Հօր:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հօգշ. Տ. Գուսան Արեղայ Ալեանեան:

● Կիր. 9 Հոկտ. — Տօն Վարացայ Ս. Խաչին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Տարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ապա, Լուսարարացեալ Գերդ. Տ. Գարեգին Արքեպս. մատոյց քրուան հանդիսաւոր Ս. Գատարազը Գրիտատի Ս. Գերեզմանին վրայ, որմէ ետք նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղդէն Ա. ի օժման շքրդ տարեգարձին առթիւ կատարուած շայրապետեան Մաղթանքի արարողութեան:

● Եր. 15 Հոկտ. — Ս. 72 ասելեացն Գրիտատի: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւթը: Ս. Գերգայ սեղանին վրայ: Ժամաբարն էր Հօգշ. Տ. Համբարձավ Վրդ. Գէշիշեան:

● Կիր. 16 Հոկտ. — Այսօր կատարուեցաւ Թեմիէի Ս. Գերգայ վանքի տարեգրան ասուխամբութիւնը: Երուսաղէմէն, Երեւանէն և շայրքայէն բաւական թիւով հայեր եկած էին ախատափայտութեան ժամաբարն էր Հօգշ. Տ. Գուսան Արդ. Ալեանեան:

● Ուր. 21 Հոկտ. — Թարգմանչաց նախատանկին ի Ս. Յակոբ նախագահեց Գերդ. Տ. Կերեզ Եպս. Տեաւլը Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանին:

● Եր. 22 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերց (Տօն ազգային եւ եկեղեցական): Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Եկեղեցին վրայ: Ժամաբարն էր Գերդ. Տ. Կերեզ Եպս. Գարիկեան, որ քարոզով մը պանացոց զորքն ծաւմնծ մեր Թարգմանչեան ներսն: Ընկալեալ ասօրութեան համաձայն, Կիւլպէնիկան քարեքար զերգատանի հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին նախագահեց Գերդ. Լուսարարապետ Սրբաւեյը:

● Կիր. 23 Հոկտ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Ժամաբարն էր Հօգշ. Տ. Ոսկի Վրդ. Որդէթեան:

● Եր. 29 Հոկտ. — Ս. Չարիք Աւետարանացն: Դարձեալ կարիքի չեղաւ Ս. Գատարազ մատուցանել Ս. Յարութեան գաւթին վրայ բացուող Ս. Յովհ. Աւետարանչի մատարան մէջ, որ աւելի քան տարի մը ի վեր հիմնական նարթութիւնները կը կատարուին: — Ի Ս. Գիւրգիթի պատարագեց Հօգշ. Տ. Կամիտան Վրդ.:

● Կիր. 30 Հոկտ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յովհ: Ժամաբարն էր Հօգշ. Տ. Գուսան Արեղայ Ալեանեան:

● Ուր. 31 Հոկտ. — Ս. Յովնիկայ Աւուրածահօր: Ս. Գատարազ մատուցուեցաւ Գեթեմնակ նիւի Ս. Աւուրածաման Տաճարին մէջ, Հայր Յովսէփի Գերեզմանին վրայ: Ժամաբարն էր, ընկալեալ ուղղութեան համաձայն, Տաճարին Տեաւլը Հօգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Վ Ա Ն Ք

- Եր. 5 նոյմ. — Ս. Երկուսան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգը. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեանն — Կէտորէ կտք, Ամեն Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարաշարժաւում մուշք գործեց Ս. Յարութեան Տանար: Ս. Գերեզմանի և Գրու Իսաչի աչրի ախտերէն ետք, վերջնայ կից՝ Ս. Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատուեակ՝ նախագահութեամբ Պատր. Փոխանորդ Գերջ. Տ. Գրեթզ Սպո. ի: Ապա կատարուեցաւ Տեօրինական Սրբատեղեաց այցելութեան անագիտաւր թափօր Տանարէն ներս: Թափօրուպեան էր Հոգը. Տ. Համբարձում Վրդ.:
- Կիր. 6 նոյմ. — Կիւ Սաչ: Գրեթեային և աւաւտեանն ժամերգութիւններ պատուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորչի: Ժամարարն էր Հոգը. Տ. Համբարձում Վրդ. Գէրջեանն: Ապա կատարուեցաւ եւադարձ մեծանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին և մէկ անգամ Պատանատեղւոյն շարժ. սպեւում Իսաչգրաւի աչրէն և վերջնաւում Ս. Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ: Թափօրը կը գլխաւորէր Ամեն Սրբ. Պատրիարք Հայրը, ամպնումանի ներքե և Կենաց Փայտի մատուցան ի ձեռնին:
- Եր. 12 նոյմ. — Ս. Յովնննն Ոսկերեքահնն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգը. Տ. Ռուբէն Վրդ. Յովննն կիմեանն:
- Կիր. 13 նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յատր, Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգը. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեանն:
- Ուր. 18 նոյմ. — Նախատուեակը պաշտուեցաւ Ս. Էրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Գերջ. Տ. Կիրեզ Սպո.:
- Եր. 19 նոյմ. — Տօմ. Էրեւակապետաց Գաբրիէլի և Միխայէլի: Աւաւտեանն ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էրեշտակապետ ժամարարն էր Հոգը. Տ. Կոմիտաս Վրդ. Երեթկէեանն: Ընդլուեալ սովորութեան կամաձայն, բարերարուէի Աղւանի ձեւանիքեանի և պարագայից կամար կատարուած հոգեհանգստեան պաշտուեցիւ նախագահեց Գերջ. Տ. Կիրեզ Սպո.:
- Կիր. 20 նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր Հոգը. Տ. Գուսան Արղ. Ալեանեանն:
- Եր. 26 նոյմ. — Աստ. Աղղիէի և Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրչխադիր: Ժամարարն էր Հոգը. Տ. Ռուբէն Վրդ.:
- Կիր. 27 նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգը. Տ. Կոմիտաս Վրդ.:

- Գլ. 13 Սեպտ. — Աւաւտուեւն, Ամեն Ս. Պատրիարք Հայրը, ի Գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց ժուգ. Վարժարանի և Ըն. Ժայարանի 83-ՅՎ Գլորացական տարեշրջանին:
- Գլ. 5 Հոկտ. — Իտալական Ընդհ. Հիւպատոս Mr. Giuseppe Ruggiero, պաշտանում քաղաքէ տեղափոխուելու առիթով, կրածեղախայցելութեան եկաւ Պատրիարքարան:
- Գլ. 12 Հոկտ. — Երեկոյեան, Սպանիոյ ազգային տեղին առթիւ, Սպանական Ընդհ. Հիւպատոստին կողմէ, Հիւպատոսարանի պարտեղին մէջ սրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերջ. Տ. Գարեգին Արքեպոս., Հոգը. Տ. Բարեզ Վրդ. և Գարտաղար Տիար Գերջ շինդիեան:
- Եր. 22 Հոկտ. — Սրեկոյեան, Նօթր Ծամի հիւրանոցին մէջ, Ն. Ս. Յովնննէս-Պղոս Բ. Պապին գահակալութեան յորդ տարեդարձի և Պապական Նուիրակ Mons. William Carewի մտօրէն պաշտանում քաղաքէս փոխարեւելուն առիթներով տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերջ. Լուսարարապետ Սրբազանը, Հոգը. Տ. Վանիկ Վրդ. և Տիար Գ. Հինդիեան:
- Բլ. 24 Հոկտ. — Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի բաղմանայ Առաջնորդ և Ս. Ախտի Սիւրան Գերջ. Տ. Թորգոմ Արքեպոս. Մանուկեան ժամանեց Ս. Աթոռ և մեկնեցաւ շարք մը ետք:
- Ուր. 28 Հոկտ. — Պապական Նուիրակը կրածեղախայց եկաւ Պատրիարքարան:
- Գլ. 1 նոյմ. — Ս. Ախտի Սիւրան և Պրազիլի Առաջնորդական Տեղապառ Հոգը. Տ. Տաթև Ս. Վրդ. Դարիպեան ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Կիրակի երեկոյեան:
- Գլ. 15 նոյմ. — Լուսերակահաններու Սպո. Տաւառ Հատատարի և Փրօփոթ Երեկէն Ռէկրմանի կողմէ, Mortin Lutherի ծննդեան 60ամեակին առթիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատր. Փոխանորդ Գերջ. Տ. Կիրեզ Սպո. Գաբրիէլեան, Հոգը. Տ. Բարեզ Վրդ. Գալէմտեղեան և Տիար Գ. Հինդիեան:
- Գլ. 16 նոյմ. — Երեկոյեան, Նոյն առիթով, Լուսերակահան Սեկեղեցւոյ մէջ կայացած արարողութեան ներկայ եկան Գերջ. Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպոս., Հոգը. Տ. Վանիկ Վրդ. Մանուկարեան և Տիար Հինդիլուեան: Սրբազանը Անգլիերէտի կարճ ուղեքմ մը ըրաւ, շայ և Լուսերակահան Սեկեղեցիներու սիւրախի շարքերութիւնները շնչելով: Յետոյ եկեղեցւոյ կից սրահին մէջ կատարուեցաւ պատուած և մտերմիկ հիւրասիրութիւն:
- Գլ. 30 նոյմ. — Երեկոյեան, St. Andrew's Dayի առթիւ, Աթոջ Հօտիտի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եկան Լուսարարապետ Սրբազանը և Տիար Հինդիլուեան:

«ՍԻՈՆՆԻ ԽՄԲԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՒ ԿԻՒԼՊԿԷՆՆԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ԵՆՈՐ ԶԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԿ ԵՆ ՀԵՏԵՑԻՈՒԼ ՀՐԱՏԱՐԱԿԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ecrits et Propos sur la Musique et la Culture Armeniennes — Edouard Hagopian.

Héliopolis, Editée par l'Association Culturelle Arménienne «Houssaper», 1983.

Manuel de Langue Arménienne (Arménien occidental moderne) — Frédéric Feydit.

2è Edition, revue et augmentée. Les Langues de l'Europe Orientale - III. Paris, Editions Klincksieck, 1969, pp. 394.

Etudes de Linguistique et de Philologie Armeniennes II — Antoine Meillet. Avant-

propos de Michel Lejeune, Augmentées d'une Biographie avec in Index Linguistique et Analytique par M. Mokri. Bibliothèque Arménienne de la Fondation Calouste Gulbenkian. Louvain, Imprimerie Orientaliste, 1977, pp. 568.

Byzance — René Guerdan. Paris, Librairie Académique Perrin, 1973, pp. 400.

L'Amour en Double — Garo Alagöz. Récits. (Armenian & French). Istanbul, Dizgi ve Baski Murad Ofset, 1978, pp. 176.

Embarquement pour l'Ararat — Michael Arlen. Traduit de l'Anglais par Daniel Blanchard. Paris, Editions Gallimard, 1977, pp. 251.

Quelques Poèmes et Pensées — Sayat Nova. Présentation, Choix et Traduction de M. Arsénian. Paris, Editions Astrid, 1977.

La Réconciliation et la Pénitence dans la Mission de l'Eglise — Monseigneur Tomko.

Présentation de Son Excellence Mons. Tomko, Secrétaire Général du Synode des Evêques du thème du prochain Synode, 1983, pp. 8. (Typewritten).

De Firti Dagine pa Musa Dagh — Franz Werfel. Roman. Vol. I, pp. 345 - Vol. II, pp. 365. Oversatt av Charles Kent. Med forord av Jacob S. Worm-Muller. (In Norwegian). Oslo, Forlagt av H. Aschehoug & Co. (W. Nygaard), 1935.

Armenian Miniature of Ghrim (XIV-XVII) — E. M. Korkhmazian. (In Russian.) Yerevan, Armenian S. S. R. Academy of Sciences, 1978, pp. 131.

More Apples Fell From Heaven — Mischa Kudian. A Selection of Armenian folk & fairy, retold by Mischa Kudian. London, Mashtots Press, 1983, pp. 82.

The First Elizabeth — Carolly Erickson. M. Macmillan, London. New York, Summit Books, 1983, pp. 447.

Australia's Heritage — A History in Pictures since 1788. Sunshine Books. Hornsby, NSW, Australia, an imprint of Child & Henry Publishing Pty., 1982, pp. 319.

De Arméniers — Kees Hulsmann. No. 1990 — 18-11-83. Lelystad, 1983, pp. 20.

Բանալիներ (Թատերախաղ երեք արարով) — Զարեհ Մեկսոնյան, Տիթրոսյթ, Ա. Մ.

Ն., Ապրիլ Տպարան, 1980, էջ 160:

Մր. Մորկրնթաուի Յիշատակները եւ Հայկական եղբունին Գաղտնիքները — Հէնրի

Մորկրնթաու: Թարգմանեց ենոզթ Արժէն: Պէյրուսթ, շարթօնքաթի Թերթօն

Թիւ 54, էջ 365:

Ջոյթ Սիրահարի Յասմիկը (Պատմուածքներ) — Կարօ Ալակէօզ: Իսթանպուլ, Մու-

րաթ Տպարան, 1978, էջ 176:

Անարգուած Մարդիկ — Նուպար Ակիշեան: Հոս Անճելը, Գալիֆ., 1978, էջ 210:

Անմարմին Սէրը (Պատմուածքներ) — Անդրանիկ Անդրէասեան: Հոս Անճելը, Ապ-

րիլ Տպարան, 1983, էջ 171: [էջ 56:

Բժիշկին Խորհուրդները — Տթթ. Ա. Գարագաշեան: Թհհրան, Տպ. Վերաքա, 1972,

Մասնուժիւնը — Սրայգոն Եղիայեան: Միսիթար Մատենաշար Թիւ 7: Պէյրուսթ,

Տպ. Կ. Տօնիկեան եւ Որդիթ, 1983, էջ 64:

(ՇարուՅակիթ)

Բ Ո Վ Ա Ն Կ Ս Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՓՈՆԱՆ ԽՄՐԱԳՐԱԿԱՆԻ		
— Ս. Միլոսեի օրհնութիւնը	ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ	194
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Առտւածոյ արդարութիւնը	Գեորգ Ս. ձինիվիձեան	200
ԱՍՏՈՒԱԾՈՒԹԱՆԱԿԱՆ		
— Տեսական աստուածաբանութիւն	ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ	202
ՐԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ		
— Զալլե Հարոյի ուղեւորութիւնը	Քրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	206
— Լուիս արօբ	Գ. ՃԱՐՏԱՐ	210
ՐԱՆԱՍՈՒՐԱԿԱՆ		
— Գ. Իարու Հայրեհը	Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ	211
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ		
— Սաղիմական տառերութիւն	» » »	214
ՊԱՏՄՈՒԿԱՆ		
— Գրիգոր Նարեկացի	ՌՈՒԲԷՆ ՎՐԳ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ	219
— Մասնաւոր պատմագրութիւն		
Ս. Նեան վանուց Սեբաստիոյ	ՏԻԳՐԱՆ Ս. ՔԻՐԻՇԵԱՆ	224
Համառօտ եւ բաղլայտական ակնարկ մեր եւ Բոյր Ելեղեյիներու Տօնացոյցերուն վրայ	Գ. Ճ.	226
Ուսումնասիրութիւնք Շարականաց	ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ	230
ԳՐԱԽՓՈՍԱԿԱՆ		
— «Հող, Գիր եւ Մարդ»	Գ. ՃԱՐՏԱՐ	234
ՅԵՍՈՒՆ ՑԱՐԻ ԱՌԱՋ		
— Հանգես Հարիւրամեայ Յոբելեանի Ս. Յակոբեանց Տպարանին		236
Ս. ՅԱԿՈՒՆ ՆԵՐՍԷՆ		
→ Հեղագիր		237
→ Եկեղեցականք - Թեմականք		237
→ Պատեօնականք		238
Յանկ' Կիւլպէնկեան Մասեմադարանի կողմէ ստացուած գրքերու		239